

Հ. ԱշոտՅԱՆ

ԳՐԱԲԱՐԵ  
ՈՒՍՈՒՑԻՉ



ԿՐԵՋԱԿ

1954

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ  
ՈՒՍՈՒՑԻՉ



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ—1954

## ԳԱՅ 1

1. Էսէկան բայի սահմանական ներկան խոնարհվում է հետևող ձևով.

իմ, ես, է  
իմք, էք, են:

2. Հոգնակի կազմելու համար բառի վերջում ավելացնում են թ, ինչպես՝ նացք, ջուրք, քաղաքք, երգք և այլն.

3. Ստացական ածականներն են՝ իմ, քո, մեր, ձեր, իւր.  
Սրանք կարող են գոյականից թե առաջ դրվել և թե հետո. առվորական է հետագառ ձեւը. օրինակ՝

իմ տուն կամ տուն իմ  
քո քոյր կամ քոյր քո:

Երբ ստացականը գոյականն ունի, գոյականի վրա հոդ չէ պրվում (հակառակ աշխարհաբարի). օրինակ՝ տուն իմ, տուն քո, միախանակ տունու՝ տունն իմ, տունն քո:

## Հրահանգ 1

Մեծ և գեղեցիկ է ծով. Սեռու եմ ես և զեղեցիկ. Բաց ինձ,  
քոյր իմ, մերձաւոր իմ, աղաւնի իմ, կատարեալ իմ, Եղբօրոր-  
դին իմ սպիտակ է և կարմիք. Այն է եղբօրորդին իմ և այն է  
մերձաւոր իմ. Վաթունն են թափուհիք և ութառն հորճք. մի է  
աղաւնի իմ, կատարեալ իմ. Պարանոց քո՞ իրրի աշտարակ  
գլուխեայ. Դու, աէք, քաղցր ես և բարերոր. Ո՞վ ես դու. Ես  
իմ սրդի քո. Որդի իմ անուշանոտ և լուսաւոր է, և դու խաւա-  
րին և ժանուան ոտ ես.

Рачин Акопович  
АЧАРЯН

УЧЕБНИК ГРАБАРА  
(древнеармянского языка)  
(На армянском языке)

Издательство Ереванского университета  
Ереван—1954

## Հրամանգ 2

Մեր տունը գեղեցիկ է, Դու բարի ես, Մեր փողոցները  
լայն են, Զեր հայրը ծեր է, ես ուրախ եմ, Մեր զյուղերը և  
ավանները փաքը են, Զեր այդիները գալար են, Քո մայրը բարի-  
է, Մեր գպրոցները ընդարձակ են, Յուր աղջիկը գեռատի է, իմ  
ձին սըընթաց և արագավազ է, Քո եղբայրը չար է և անհանգիստ:

## ԲԱ.Ս 2

4. Գըաբարի մէջ չորս լծորդություն կա, -ել, -ին, -ալ, -ու-  
Առաջին լծորդության սահմանական ներկայի պատկերն է:

սիրեմ	սիրեմք
սիրես	սիրեք
սիրէ	սիրեն

(սիրում եմ, սիրում ես և այլն),

5. Որոշյալ հայցականը կազմելու համար բառի ուղղականի-  
վըս գնում են զ հախգիրը, իսկ հոգնակի համար սրա վրա-  
տվելացնում են հոսե և վերջավորությունը, օրինակ՝ զայն..  
զառւն (առունը, անուրը),

## Հրամանգ 3

Սիրեմ զնայր իմ և զմայր իմ, Ես ննջեմ և սիրու իմ ար-  
թուն կայ, Ճանաչեն զնայն նորա, Գիտեմք, զի սա է որդի մեր-  
ևսեն ոմանք, Ո՞չ բարւոք ասեմք մէր եթէ Սամարացի ես գու-  
եմ որ վկայեմ, Դուք ոչ կարէք գալ, Գինի ոչ ունին, Վաճա-  
ռն զարջառ և զոշխարս և զազաւնիս, Դու գիտես զի սուտ-  
վկայեն, Հարցանեմք միմեանց զպատճառուն:

## Հրամանգ 4

Հարգում և մեծարում եմ ծերեկին, Ինչու շես սիրում քո-  
եղբորը, Զեր հայրը երկրագործ է և հող է մշակում, Թոշունները  
պատղեներ և հատիկներ են ուտում, Պտուղները զեղեցիկ են,  
Դու բերում են միս, Դարբինները կառւմ են երկաթը և շինում  
են խոփիր, արորներ, մանգաղներ, գերանդիներ և ուրիշ զոր-  
ծիքներ.

ինչու—ընդէլ

հող մշակել—գործել զերկեր

ուրիշ—այլ

գործիքներ—գործիքներ

## ԻԱ.Ս 3

6. Գերլուծն նախադասությունը նշանակում է նախադա-  
սություն մեջ գործածված բառերի պաշտոնը որոշել,

7. Նախադասություն մեջ ամենահիմնական բառը դիմավոր  
րայն է, առանց որի նախադասություն չի լինի.

Դիմավոր է կոչվում բայի տյն ձեր, որ ունի թիվ և դիմք.  
Օրինակ՝ կերա դիմավոր է, որովհետեւ եզակի թվի տուաշին դեմքն  
է, իսկ ունել, կերած դիմավոր չեն, որովհետեւ ոչ թիվ ունեն,  
ոչ էլ զեմք.

8. Բայը լինում է չորս տեսակ. էական, չեզոք, ներգործա-  
կան և կրավերական:

Էական բայն է՝ եմ, ես, չ և այլն.

Չեզոք բայը ցույց է տալիս վիճակ կամ դրություն, օրի-  
նակ՝ քնում է, ընկավ, մեռել է և այլն:

Ներգործական բայը ցույց է տալիս մի գործողություն.  
Օրինակ՝ ծեծեց, կերավ, երգում է, զրելու է և այլն.

Չեզոք և ներգործական բայների տարրերությունն այն է, որ  
տապաշին զնպառում կա միայն մի անձ կամ մի իր, որ գտնվում  
է այդ վիճակի մեջ, իսկ երկրորդ դեպքում կա մի անձ կամ իր,  
որ կատարում է գործողությունը, և միհնույն ժամանակ մի ուրիշ  
անձ կամ իր, որ կրում է այդ գործողությունը.

Այն անձը կամ իրը, որ կտնվում է այն վիճակի մեջ և կամ  
այն անձը կամ իրը, որ կատարում է այդ գործողությունը, կոչ-  
վում է ենթակա, իսկ այն անձը կամ իրը, որ կրում է այդ գոր-  
ծողությունը, կոչվում է սեփի խնդիր:

Այս երկուոր որոշելու համար կարելի է հարց տալ՝ ...ողը  
...ածը, առաջին հարցման պատասխանը լինում է ենթակա,  
երկրորդը՝ սեփի խնդիր, օրինակ՝ Արամը սիրում է Տիգրանին.—  
սիրեղը.—Արամը.—Ենթակա.—սիրածը.—Տիգրանը.—սեփի խըն-  
դիր:

9. Իրավութականը ցույց է տալիս, որ մի անձ կամ իր մի  
ուրիշն կրում է որևէ գործողություն, օրինակ՝ Տիգրանը սիր-  
ութականը կրում է որևէ գործողություն, սիրածին է Արամից, —սիրվածը, —Տիգրանը, —Ենթակա:

Կրագորականը ներգործականի հակագիրն է.

10. Գրաբարի մեջ ենթական դրվում է ուղղական հոլովով, իսկ սեռի խնդիրը՝ հայցական.

Հայցականը լինում է որոշյալ կամ անորոշ, Որոշյալ հայցականը կազմվում է եզակիում ուղղականի վրա գնելով զ նախդիրը, իսկ հոգնակիում բառի վերջում ավելացնելով նաև անորոշը չի ունենում զ նախդիրը (§ 5). Օրինակ՝

Ուղ.	Եղակի	Հոգեակի
	տուն	տունք
Հայց. (որոշյալ)	զտուն	զտունս
Հայց. (անորոշ)	տուն	տունս

11. Եական, չեղոք և կրագորական բայերը ի բնե չեն ունենում հայցական սեռի խնդիր, այլ միայն՝ ենթակա.

12. Եթե ենթական բաղկացած է լինում մի քանի բառերից, կոչվում է բաղադրյալ ենթակա. օրինակ՝ Սիրանուշը և Զարուհին սիրում են ծաղկիներ. այստեղ (Սիրանուշը և Զարուհին) ենթական բաղկացրյալ է.

Եթե ենթակա չէ դրված և իմաստից միայն հասկանալի է, կոչվում է գորությամբ ենթակա. օրինակ՝ զնում ենք. — ենթական է մենք (գորությամբ).

### Հրաման 5

Վերլուծել հետեւյալ նախադասությունները.

Դարբինք կուն զերկաթ և շինեն խոփս, արօրս, մանգաղա և այլ գործիս.

Դիւղք և աւանք մեր փոքր են.

### ԴԱՍ 4

13. Գրաբարի մեջ հոլովումը կազմվում է 3 ձեռվ. հետամասնիկով, միջամասնիկով և անկանոն. օրինակ՝ սեռ. հացի, կայսեր, նօր:

14. Բառի հոլովման տեսակը և ձեր որոշելու համար բավական է իմանալ եղակի և հոգնակի սեռական հոլովները, որոնց հետ նույն է լինում նաև արականը.

15. Հետամասնիկովոր հոլովումը լինում է հետեւյալ ձեռվ-

1. Աղ.	Սեռ.	Տր.	Հացի	Հոգնակի՝ հացից
2.	»	»	Քաղաքի	Քաղաքաց
3.	»	»	Գետոյ	Գետոց
4.	»	»	Ճովու	Ճովոց
5.	»	»	Միտանայ	Միտանաց

Ինչպես տեսնում ենք, այս ձեռերը կազմված են -ի, -ից, -ի, -աց, -ոյ, -ոց, -ու, -ուց, -այ, -աց վերջավորություններով. այսպատճառով էլ կոչում ենք ի հոլովում, ի -ա հոլովում, ո հոլովում, ու հոլովում, ա հոլովում. ընդամենը 5 հետամասնիկովոր հոլովում:

16. ԱՇ մի միջոց չկա իմանալու համար, թե որինէ բառ որ հոլովմամբ պետք է հոլովել բառարաններում ամեն մի բառի մոռ նշանակված է լինում նրա հոլովման ձեր, և ամեն մի բառի հոլովումը պետք է առանձին-առանձին սովորել. Այս է գրաբարի ամենադժվար կողմը:

17. Թեև սեռականը և արականը ձեռով նույնն են, բայց նրանք տարբեր հոլովներ են. Սեռականը ցույց է տալիս պատկանելություն, իսկ արականը՝ դիմում. օրինակ՝ Արամի գիրքը. — այստեղ Արամի սեռական է, որովհետև ցույց է տալիս, թե ում է պատկանում գիրքը, իսկ Արամին ատացի. — այստեղ Արամին սրական է, որովհետև ցույց է տալիս, թե խոսքը ուղղվել է նրան. արականը ցույց է տալիս, թե խոսքը ուղղվել է նրան.

18. Աշխարհաբարում հաճախ հեշտ է զանազաններ սեռականից, որովհետև սեռականը չի ունենում որոշյալ հոգ. իսկ սրականը ունենում է. այսպես՝ վերեի օրինակներում Արամի (գիրքը), Արամին (ատացի). Բայց գրաբարում չկա այսպիսի տարբերություն.

Սեռականը տրականից զանազաններու ամենաճշգույն է. եթե բառը կապվում է գոյականի հետ, սեռականը է. իսկ եթե բայց հետ՝ տրական է, օրինակ՝ Արամի գիրքը. այստեղ Արամի սեռական է, որովհետև կապվում է գիրքը գոյականի հետ. Արամին ատացի. — այստեղ Արամին սրական է, որովհետև կապվում է ատացի բայց հետ.

19. Նախադասության մեջ վերլուծման ժամանակ սեռականը կոչվում է հաակացուցիչ և նրան վերաբերող գոյականը՝ Բայց

Կացյալ, իսկ արականը կոչվում է լրացուցիչ, այսպես Արամի գիրքը.—Արամի սեռական հատկացուցիչ է, իսկ զիրքը՝ հատկացյալ. Արամին ասացի. —Արամին տրական հոլովով լրացուցիչ է.

## ԳԱՍ 5

### Սղում և ամփոփում

20. Ինչպես աշխարհաբարում, այնպես էլ գրաբարում որոշ ձայնավորներ հոլովման և ածանցման ժամանակ, երբ մի վանկ ավելանում է բառի վրա, զանազան փոփոխություններ են կրում. ի, ու ձայնավորները ջնջվում են կամ գառնում են ը. օրինակ՝ զիծ—զծի, բոն—բնոյ, դդում—դդմոյ.

Է ձայնավորը գոռնում է ի. օրինակ՝ հանդէս—հանդիսի, էշ—իշոյ, իշոց, զէնք—զինոց.

Եա գառնում է ե. օրինակ՝ սենեակ—սենեկի, սենեկաց, մատեան—մատենի, մատենից:

Եայ գառնում է է. օրինակ՝ երեայ—երէի—երէից, փախստեայ—փախստէի, փախստէից:

Իւ գառնում է ու. օրինակ՝ բիւ—րուոյ, բուոց, հովին—հովոի, հովուաց:

Ոյ գառնում է ու. օրինակ՝ բոյն—բունի, բունաց, ողջոյն—ողջունի, ողջունից:

21. Ինչպես նկատելի է, ա, ի, (ը), ո, օ, ձայնավորները չեն փոխվում. Բացառություն են միայն ասաւուած և ոյն բառերը. առաջինը լինում է ասաւույ (ա կորչում է), երերորդը՝ դիւի—դիւաց (և գառնում է ի).

Այս օրենքի միջոցով կարելի է որոշել՝ բուր և մի պետք է գրել, թե է-ով. օրինակ՝ սէր (սիրել) գրվում է է-ով, որովհետեւ սեռականում լինում է սիրոյ. իսկ սէր (կաթի) գրվում է ե-ով, որովհետեւ սեռականը լինում է սիրոյ.

22. Ի և ու ձայնավորների ոյս փոփոխությունը կոչվում է սղում, մյուսները՝ ամփոփում:

Սանրուրյան. —Աշխարհաբարում երբեմն սղման և ամփոփման կանոնը չի զործադրվում, բայց գրաբարում անկարելի է այդ. օրինակ՝ մուտք, աշխ. մուտքի, գրբ. մաից:

## Հրահանգ 6

Հոլովել հետեւյալ բառերը.  
Ի հոլովում. —սիրտ, բան, տաշտ, սրան, արուեստ, նուրբ,

շանթ, շերտ, հարճ, հարց, գանձ.  
Ի—ա հոլովում. —հազար, առակ, ձանապարհ, մարգարիտ,

տղի, շէն, կոյր, կօշիկ, աշանակ, արծաթեղէն, սենեակ.  
Ո հոլովում. —հող, հիւթ, արմատ, փուշ, պտուղ, ցորեան,  
խոտ, հունձ, հատ, մարդ, թոշուն, խմոր, մարգարիտ, մեռեալ,  
տուփ.

Ա հոլովում. —արե, առիւծ, սպաս, առաւօտ, պան, ժամ,  
դանձ, շարաթ.

Ա հոլովում. —Արշակ, Տրդատ, Տիգրան, Վարագդատ.

## Հրահանգ 7

Հոտ իւզոց. Օրիորդացն պատմէ հարսն. Բարբարին զանուն  
փեսային. Պահապան այգեստանի. Աղկոյզ նուճոյ է եղբօրսրդին  
իմ ինձ. Գերանք տանց (տների) նոցա մայքրք. Ես ծաղիկ գաշշ  
տաց, շուշան հովտաց. Լոկ զձայն փեսային և տոէ. Հարսն նշան  
տաց օրիորդացն. Զայն տատրակի լսելի եղեւ. Աղբիւր բուրաս-  
տանաց և ակն ջրոյ. Աւտեմ զպտուղս ծառոց. Ծնոտք նորա  
բուրեն զանուշահոսութիւն իւզագործաց. Մատուցին զթուղթն  
թագաւորին.

(Այս հրահանգի մեջ որոշել սեռականն ու տրականը.)

## ԳԱՍ 6

### Հոդ

23. Անորոշ հոդի փոխարեն գրաբար գործ են ածում մի, ոմն,  
ոք, իմն, ինչ. բղոքն էլ գոյականից հետադաս. —ոմն, ոք գործ  
են ածլում ոնձ ցույց տվող բաների հետ, իմն, ինչ՝ իր ցույց  
տվող բաների հետ, իսկ մի՝ երկու գեպքումն էլ. օրինակ՝ այր  
մի, բոյս մի, այր ոմն, այր ոք, բոյս իմն, բոյս ինչ:

24. Արտյալ հոդն է միշտ ն (ը չկա). Գրաբարում բառը  
որոշյալ հոդ է ստանում միայն այն դեպքում, երբ ցույց է տա-  
լիս որոշյալ մի անհատ, իսկ երբ բառը ցույց է տալիս ընդհա-

27. Առացինք, որ բայը չորս լծորդություն ունի. -Եւ, -իւ-  
-ուլ, -ուլ, Տվել ենք նաև առաջին լծորդության սահմանական  
ներկայի պատկերը. այժմ տալիս ենք մյուս երեքը.

խօսիմ	աղամ	թողում
խօսիս	աղաս	թողուս
խօսի	աղայ	թողու
խօսիմք	աղամք	թողումք
խօսիք	աղայք	թողուք
խօսին	աղան	թողուն

28. Այս չորս լծորդությունները ունեն նաև իրենց երկ-  
րորդ տիպարը, որը կազմվում է առաջին երեք լծորդության մեջ  
ներմուծելով -ան մասնիկը, իսկ չորրորդ լծորդության մեջ -ն  
մասնիկը. Դնում ենք այսաեղ չորս լծորդությունների երկրորդ  
տիպարի ներկայի պատկերը:

հատանեմ	ուսանիմ
հատանես	ուսանիս
հատանէ	ուսանի
հատանեմք	ուսանիմք
հատանէք	ուսանիք
հատանեն	ուսանին
գողանամ	զգենում
գողանաս	զգենուս
գողանայ	զգենու
գողանամք	զգենումք
գողանայք	զգենուք
գողանան	զգենուն

29. Էական բայի անկատարի պատկերն է.  
Եփ, Եփր, Եր, Եար, Եիր, Եին

30. Սրա համեմատ էլ կազմվում է չորս լծորդությունների  
երկու տիպարի անկատարը.

սիրէի	հատանէի
սիրէիր	հատանէիր

Նուր սեռ կամ տեսակ, հոդ չի ստանում. օրինակ՝ աշխարհարա-  
րում անխտիր տում ենք՝ շունը հավատարիմ է, առանց զանա-  
զանելու, թե խոսքը ընդհանրապես շան ցեղի՞ մասին է, թե մի-  
որոշ շան:

Գրաբարում, եթե խոսքը ընդհանրապես շան մասին է,  
տանց հոդի ասվում է հավատարիմ է շուն, իսկ եթե մի ծանոթ  
շան մասին է, առվում է հոդով հավատարիմ է շուն:

25. Գրաբարում որոշյալ հոդ չի դրվում նաև, երբ նշանակ-  
ված առարկան բնության մեջ մի հատ է. աշխարհարար տառւմ  
ենք՝ երկիրը գեղաձև է, լուսինը աղոտ է, երկինքը բարձր է  
(որոշյալ հոդով), բայց գրաբար պեսք է տաել՝ գեղաձև է երկիր,  
աղօտ է լուսին, բարձր են երկինք (տանց հոդի), որովհետև եր-  
կիրը, լուսինը, երկինքը մի մի հատ են բնության մեջ,

26. Երբ ունենք մի հատկացուցիչ և մի հատկացյալ, աշ-  
խարհաբարում հոդ դրվում է հատկացյալի վրա, իսկ գրաբարում  
հատկացուցիչի վրա. օրինակ՝ դդրի գույնը—գոյն թդրոյն:

Եթե հատկացուցիչը հատուկ անուն է, գրաբարի մեջ հոդը  
դրվում է հատկացյալի վրա. օրինակ՝ հույների պատերազմը—  
պատերազմ Յունաց. Խողոմնի իմաստությունը—իմաստութիւնն  
Խողոմնի:

Հոդ չի դրվում ոչ հատկացուցիչի, և ոչ էլ հատկացյալի  
վրա, եթե նրանք որևէ պատճառով հոդ չեն կարող ստանալ.  
օրինակ՝ դպրոցների աշակերտները—աշակերտ դպրոցաց. լուսնի  
լույսը—լոյս լուսնի:

### Հրահանգ 8

Պարտեզի գուռը բաց է. Ծառի պտուղը գեղեցիկ է. Լուսնի  
լույսը աղօտ է. Գիշերվա ժամերը երկար են. Գետերի ջրերը քաղցր  
են. Ծերերի խոսքերը իմաստուն են. Ծովի մեծամեծ ալիքները.  
Յուղի սրբակը լիքն է. Դավթի պատմությունը զարմանալի է.  
Հովհաննեսի (Յովհաննու) եղբայրը իմաստուն է. Գետրոսի զո-  
քանչը հիփանդ է. Հովսեփի աները ծեր է. Երեսնի պարիսպնե-  
րը անառիկ էին. Երասմի ջրերը հորդ են. Քամու (հողմ) զո-  
քությունը բռուն է. Լույսի տարրը նուրը է. Առջուծի մանչյունը  
սոսկալի է. Ծովի ջուրը աղի է.

սիրէր	հատանէր
սիրէաք	հատանէաք
սիրէիք	հատանէիք
սիրէին	հատանէին

խօսէի	ուսանէի
խօսէիր	ուսանէիր
խօսէր	ուսանէր
խօսէաք	ուսանէաք
խօսէիք	ուսանէիք
խօսէին	ուսանէին

աղայի	գողանայի
աղայիր	գողանայիր
աղայը	գողանայը
աղայաք	գողանայաք
աղայիք	գողանայիք
աղային	գողանային

թողուի	զգենուի
թողուիր	զգենուիր
թողոյը	զգենոյը
թողուաք	զգենուաք
թողուիք	զգենուիք
թողուին	զգենուին

Ինչպես նկատելի է, երկրորդ լծորդությունը՝ բոլորովին նույն է առաջինի հետ, և ամենատարի միջոցով լծորդությունը ուղղել անկարելի է:

### Հրահանգ 9

Դատաւորին զգողն և զւազակն պրկէ և քերէ, և հայր զորդի գմնեայ մահապարանալ՝ զատաւորաց մատնէ, Զէր պարա մմենին բնաւ առնել պատասխանի, Եւ այսպէս խաղացեալ երթան մհծաւ շքով և բազում պատուով. քարոզքն առաջի աղաղակեն, մի մի զգեղգեղեալ բարբառան նուագեն, որոտան, հնչեն, լնուն աղաղակաւ զիրտպարակնու Աստի անորի նուիրակը հպարտա-

ցեալք ամբարհաւաճեալք ստիպեն, ճեղեն, զիստանաղանձ ամբու-  
խըն ի բաց պարզեն, Խորհուրդք քո մտայոց առնէին զքեզ. Դու,  
որքայ, տեսանէիր և ահա պատկեր մի, մեծ պատկեր, և երեսք  
նորա և տեսիլ նորա ահագին յոյժ. և կայր առաջի քո. ահաւոր  
էր յոյժ պատկերն, Կերակուր նորա էր մարախ և մեղք վայրե-  
նի. Յայնժամ եկանէին առ նա ամենայն նըստազէմացիք և  
ամենայն հրէստատան և ամենայն կողմն Յորդանանոււ Յովհան-  
նէս արգելու զնա և ասէ. Դու զամենայն զիտես և զու իսկ զա-  
մենայն ճանաչես և եթէ սիրեմ զքեզ. Գիտեմք եթէ ճշմարիտ է  
վկայութիւն նորա. Ո՞չ սա էր որ նստէր և մուրանայր. Կէսքն  
ասէին, «Նա է», այլքն տաէին, «Ոչ, այլ նման է նմա», և ինքնէ  
տաէր թէ «Ես եմ»:

### Հրահանգ 10

Սիրում եմ իմ բարեկամներին. Հայրը խրառում է իր որ-  
դուն. Մաղում էինք մեր ցորենը. Գու. անսնում էիր մեր գյու-  
ղերը և ավանները. Մատերի պատուզները քաղում էինք և ուսում.  
Մի կին գրում էր մի թուղթ. Կինը հարգում է ամուսնու ազ-  
գականներին. Մի զեղեցիկ մարդարիտ էինք գտնում. Գուքս են  
գալիս. Ներս էինք մանում. Պատառը կուլ էինք տալիս. Գնաւ  
էիք ուզում. Դուրս գալ էինք ուզում. բայց չէին թողնում. Անա-  
սունները ման են գալիս. Լուսնի աղոս լույսը հանգում էր. Մեր  
շորերն էինք հագնում. Ուսուցիչների պատվերները լսում էինք:  
Շտապում էինք ներս մաներ. Ինչու եք զարմանում. Երթալր  
արգելում էինք. Ոչխարներ և ապարներ էինք մորթում. Երե-  
խան զրոսնում էր:

տեսնել—տեսանել	դուքս գալ—ելանել
ցորեն—ցորեան	մտնել—մտանել
գտնել—գտանել	կուլ տալ—կլանել
գուրս—արտաքս	ուզել—կամիլ
ներս—ի ներքս	ման գալ—շրջիլ
հանգել—շիջանիլ	արգելել—արգելուլ
շոր—հանդերձ	ինչու—զի
հագնել—ագտնիլ	տավար—արջառ
լսել—լսել, անսալ	մորթել—զինուլ
շտապել—ածապարել,	երիխու—մանուկ
փութալ	բայց—ալլ

## Միջմասնկավոր հոլովում

31. Այս հոլովման են պատկանում այն բառերը, որոնք վերջանում են ն, դ, թ տառերով, որոնց նախորդում է մի ուրիշ բաղաձայն, օրինակ՝ նիմն, գտն, տարր, ասաղ, փոքր:

Ծանոթ.—Ն հանգող այսպիսի բառերը աշխարհաբարում գրիված են ն-ից կամ դարձել են ը, ինչպես՝ նիմն—նիմ(ը), ձեռն—ձեռ(ը), գտն—գտ, ձուկն—ձուկ, ասան—ասաբ, եօրն—յօր(ը):

Գրաբար բառերի այս և վերջապորությունը պետք չէ շփոթել և որոշիչ հոգի հետ. այս կարգի բառերը կարող են նաև որոշիչ հոգ ստանալ, օրինակ՝

անորոշ՝ շարժումն—շարժում.

որոշյալ՝ շարժումնն—շարժումը.

Իմանալու համար, թե որիէ բառ գրաբարում և ունի, թե ոչ, կարելի է դիմել հետեւյալ ոլորզ միջոցին. վերցնել նույն բառից կազմված բարդ կամ ածանց ձևերը. եթե զրանց մեջ ներմուծված է ն տառը, որեմն բառը ն ունի, իսկ եթե ոչ, ուրեմն զուրկ է ն-ից. Օրինակ՝ ձուկ բառից ունենք ձկնորս, ձկնիու, ուստի բառն է ձուկն և ոչ՝ ձուկ, իսկ արծար բառից ունենք արծարագործ, արծարապատ, արծարելին և այլն, որոնց մեջ չկա ն, ուստի բառն է արծար:

32. Միջմասնկավոր հոլովմանիրն էլ չինք տեսակ են և որոշում են սեռականի կազմությամբ.

## Եզակի Հոգնակի

1. Ս. Տ. հիման	հիմանց
2. » » գաւին	գաւանց
3. » » տարեր	տարերց, տարերաց
4. » » տատեղ	տատեղց, տատեղաց
5. » » փոքրու	փոքրունց

Նույն խմբին են պատկանում նաև -իւն և -թիւն վերջապոր բառերը, որոնք լինում են Ս. Տ. եղ, -եան, -թեան, հոգն, -եանց, օրինակ՝ սիւն, ձիւն, կորիւն, անկիւն, մեծորիւն, պետքիւն:

33. Միջմասնկավոր հոլովման մեջ հոգնակի ուղղական և հայցական հոլովմանիրն էլ կազմվում են միջմասնիկով.

1. Հիմն հոգն. ուղ. հիմունք. հայց. գնիմունս
2. Գաւն » » գաւինք. » գգաւինս
3. Տարը » » տարերք. » տատերս
4. Ասաղ » » տատեղք. » զաստեղս
5. Փոքր » » փոքրունք. » զփոքրունս

Միայն -իւն, -թիւն վերջապոր բառերը սովորական ձեռվ մնում են -իւնք, -թիւնք, -իւնս, թիւնս:

34. Կան մի խումբ բառեր էլ որոնք թեև չունեն այսպիսի վերջապորություն, բայց հոլովման են նիմն բառի պես.

տուն—տան, տանց  
շուն—շան, շանց  
մանուկ—մանկան, մանկանց  
աղջիկ—աղջկան, աղջկանց  
անուն—անուան, անուանց  
պաշտօն—պաշտաման, պաշտամանց

Մի քանի բառեր էլ հոլովման են -իւն, -եան ձեռվ.  
ձնունդ—ձննդեան  
խորհուրդ—խորհրդեան  
ժողովուրդ—ժողովրդեան  
գալուստ—գալստեան  
փախուստ—փախստեան

## Հրահանգ 11

Դու վասն անձին քո վկայես. Անուանք առանց անձանց են յուշիապտրիկաց և իշացլուց, Դրունք նորա բարձունք. Շըթունք որդարոց ճանաչեն զբարձունու. Սուդ առին բարձունք երկրի. Դոյնք երեսաց, քայլք սուից յայտ առնեն զմարդ. Այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, և այլ փառք աստեղաց. Ար զնայուն աստեղքն են՝ արեգակն և լուսին և այլ ևս հինգ տակեղք. Լինի զրաւ թատերն. Ազգի աղբէ տեսիլս թատերց ցուցնեն. Ամենայն հարսանց եղին արգելանք սգոյ սրակապանք յօրինաց, Համբ նորա իրին զիսրիսիս մեզու. Առէք ձեղ սերմանս. Խոսկեցան սոկերք իմ:

Ցեսում էինք աստղերը: Սիրում ենք փոքրերին, որովհետու փոքրերը անմեղ են: Հավիմները արածացնում էին զառները: Տների այսուների անկյունները փոքր են. Շինում էինք աների հիմքերը: Երեխաները և աղջիկները խաղում էին, Դառների և ոչխարների բուրդը փափակի է. Ծակերտաների անունների ցուցակն էինք պատրաստում: Շները շների վրա են հարձակվում: Փոքրերի ձայնը մնացմ է: Տարրերը տարրերին էին խառնվում: Տարրերի անունները ճանաչում էինք և ճանաչում ենք. Աստղերի լույսը փայլում էր. Ընտրում էինք մանրերը, փոքրերը: Թանձրերը, կարծրները, բարձրները և անոսրները:

որովհետեղ—զի	հարձակվել—յարձակի
համար—վասն	խառնվել—խառնի
արածացնել—արածել	ունտներ—անուանք

### ԳԱՍ 9

#### Բացառականի կազմությունը

35. Բացառական հոլովը կազմում է եզակիսւմ և մասնիկով, որը գրգում է եռմասնկավոր ի, ի—ա, ու հոլովման մեջ ուղղականի ծայրին, իսկ միջմասնկավոր հոլովումների մեջ արականի ծայրին. Մնացյալ բարոր դեպքերում (ինչպես նաև հոգնակիում) բացառականը նույնն է արականի հետ.

Սանոր. Բացառականը ընդհանրապես ստանում է ի նախակիքը, որ ձայնափորի մաս գտնում է յ.

հաց	ի հացէ	ի հացից
քաղաք	ի քաղաքէ	ի քաղաքաց
գետ	ի գետոյ	ի գետոց
ծով	ի ծովէ	ի ծովուց
տիտան	ի տիտանայ	ի տիտանոց
հիմն	ի հիմանէ	ի հիմանց
գառն	ի գառանէ	ի գառանց
տարր	ի տարրէ	ի տարրեց, -աց
աստղ	յաստեղէ	յաստեղց, -աց
փոքր	ի փոքուէ	ի փոքունց

իւն	ի հնէ	ի հեանց
թիւն	ի թենէ	ի թեանց

### Հրամանգ 13

Ուստի է խավար, ուստի են չարիք, ուստի են աշխատութիւնք, ուստի են լկանք՝ մերթ ի ցըտոյ, մերթ ի խորշակէ: Նինողք ոչ ի քաղաքաց քաղաքս առնեն և ոչ ի տաճարաց տաճորս. Այլ որպէս ի գպրութենէն դպիր կոչի և ի ճարտարութիւնէ ճարտար, և ի բժշկութենէ բժիշկ և այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ յիրաց անտի առնուն զանուանս, նոյնակս և չարիքն ի զիկացն առնուն զանուանումն: Քանզի զօվացուցիչ է, զտապսի փորոյն փարատէ: Թիւր են ճանապարհ՝ որ ի ձախմէ են, Որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի գայ և այն պղձէ զմարդ. զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք. ոչ է բարւոք առնուլ զնաց մանկանց և արկանէն շանց. Այլք հատանէին ոստի ի ծառոց: Որպիսի ոչ եղի ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայծմ: Ոչինչ է պիտոյ բժիշկ ողջոց, այլ հիւանդաց: Ոչինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ:

### Հրամանգ 14

Քաղաքից էինք գալիս: Գետից ջուր էինք հանում: Լուսնից և ասողերից մեղ լույս է հասնում: Գալիս հասնում էին այլ և այլ քաղաքներից և գյուղերից: Քաղաքները հիմքից կործանվում էին: Փոքրերից մեկը դարիս էր. Արկածյալներին պետությունից օգնություն և նպաստ էր հասնում: Սյուներից մեկը ընկնում էր: Երեխան էինք և ձյուներից արձաններ էինք շինում: Գառների բրդի կույնը սպիտակ էր: Գառների բրդից թել էինք մասում: Թելերից կերպաններ էինք գործում: Կերպաններից շորեր էինք կարում և հագնում:

մեկը—մին	կործանվել—կործանիլ
ընկնել—անկանիլ	շոր—հանդերձ
բռրդ—տար	հագնել—ագանիլ

## Գործիական նոլով

36. Եղակի գործիական հազմելու համար հետմասնկավոր հոգվան մեջ բնի ձայրին ավելացնում են վ ձայնը. որինակ՝ ի ի—ա, ա հոլովումների մեջ գրվում է և ձևով, ո հոլովման մեջ վ ձևով, իսկ ու հոլովման մեջ ջնջվում է. Հոգնակի մեջ որանց վրա ավելանում է նաև թ. այսպես՝

հաց	հացիւ	հացիւք
քաղաք	քաղաքաւ	քաղաքաւք(օք)
գետ	գետով	գետովք
ծով	ծովու	ծովուք
տիտան	տիտանու	տիտանուք(օք)

Մանր.—Նկատելի է, որ ու հոլովման մեջ եղակի գործիականը նույնանում է սեռական-տրականի հետ:

37. Միջմասնկավոր հոլովման մեջ եղակի գործիականը կազմվում է եղակի սեռականի վրա ավելացնելով թ, որից առաջ սեռականի և ձայնը դառնում է մ. Հոգնակիում դարձյալ եղակի վրա ավելանում է թ.

հիմն	հիմամբ	հիմամբք
գառն	գառամբ	գառամբք
տարր	տարերք	տարերբք, տարերօք
աստղ	աստեղք	աստեղբք, աստեղօք
փոքր	փոքումբ,	փոքումբք
-իւն	-եամբ	-եամբք
-թիւն	-թեամբ	-թեամբք

Մանր.—Նկատելի են գրծ. գառամբ (և ոչ թէ՝ գառիմբ) և փոքր, փոքումբ ձևերը.

## Հրահանգ 15

Որ բամբասէ զհայր և զմայր՝ մանու վախճանեսցի. Զի խորհիք եթէ հաց ոչ ունիք. Ասացի ձեզ զգոյշ լինել ի խորայ. Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր, որդի անմիտ՝ արտմություն է մօր. Տնանկութիւն զայր խոնարհցուցանէ, ձեռք ժրայ

միծացուցանեն. Ապրեցաւ ի խորշակէ որդի իմաստուն, խորշականը լինի ամարայնի որդի անօրեն Յիշտտակ արդարոյ գովագութեամբ. Որ գնայ միամտութեամբ՝ դնայ յուսով. Որ ի շըրթունց բղինէ զիմաստութիւն, իրեն գաւազանաւ հարկանէ զայր անմիտ. Միծացելով զործէ անզգամ զշաբ. Ազոխ ատամանց վնասակար է և ծուխ աշաց. Արդարութիւն փրկէ ի մահվանէ. Արդար՝ յորսողաց փրծանի. ի մեծութենէ վատք կարօտ լինին. իսկ որ ժիրքն են՝ հասատատին մեծութեամբ. Այլ բարկացող՝ աղեղ է կերպարանօք. Են որ բանիւք իւրեանց խոցեն որպէս սրով. բայց լեզուք իմաստունց բժշկնա. Որ յանգուգն է շրթամբք՝ խոռվի զանձն յւր. Ուր ոչ գոն եզինք՝ մասուք սուրբ են. և ուր բազում արդիւնք են՝ յայտնի է եզին զօրութիւն:

## Հրահանգ 16

Մասը արմատով է ծառ, տունը հիմքով է տուն. Մարդիկ սկզբում են հացով, ջրով, մսով, բույսերով, նաև աղով և օղով. Երկնքի կամարը զարդարված է լուսնով և աստղերով. Մեծերով և փարքերով հանդերձ հեռանում էին քաղաքից. Մարդը աշխատությամբ է հայթայթում իր հայրը, երկիրը շրջապատված էր լեռներով, ծովերով և գետերով, Ոչխարները արածում են գտանեցով հանդերձ. Բույսը արևով է աճում:

լեռ—լեռոն	սնվել—սնանիլ
ջրով—ջուրը	զարդարված—զարդարեալ

## ԴԱՍ 11

## Ի հանգող բառերի նոլովումը

38. Ի հանգող բառերը, որոնք միավանկ են, հոլովմում են և հոլովումով. ինչպես՝ ձի, ձիոյ, ձիով, ձիոց և այլն.

39. Ի հանգող բառմավանկ բառերը ունեն խառն հոլովում. եղակի սեռականում ստանում են ոյ, եղակի տրականում՝ ոյ կամ ոչ, որոնց մոտ ի ձայնավորը գառնում է և ինչպես՝

Որդի—սեռական՝ որդոյ, տրական՝ որդոյ, որդոչ, սրա ամենմատ էլ բացառական՝ յորդոյ, յորդոչ.

40. Եղակի գործիականում և հոգնակի բոլոր հոլովներում լը վերջացայնի փոփոխությամբ ձևանում է եա կամ տ բունք, որոնց վրա ավելանում են սովորական վերջավարությունները՝ օրինակ՝

Եղակի գործ.	որդւով	թագուհեաւ
Հոգն. սեռ. ար.	որդւոց	թագուհեաց
Հոգ. բաց.	յորդւոց	ի թագուհեաց
Հոգ. գործ.	որդւովք	թագուհեօք

Սանոր.—տ հոլովումը համարվում է արական բառերին հասուկ, իսկ եա հոլովումը՝ իդական բառերին:

### Հրահանգ 17

Ի ներքոյ խնձորենոյն զարթուցի պքեղ. Պատմեցէք զայտ որդւոց ձերոց և որդւոց որդւոց ձերոց. Աքապաղ ոք շրջի ի մէջ մանեաց սիկալով. Դնեն ի վերայ մաքեաց և այծից. Կողի կավուց և կաթն մաքեաց. Ղսեմ զձայն շարժման ծայրից տանձեացն. Լաւ է բնակել տո անկեան ի տամալով, քանի ընդ կնոչ կագեցողի ի տան. Սուղ ինչ քացախ զբովանգակ հնձանս զինեաց ապականէ. Սթափեցաւ նա ի գինուոյ. Գինեաւ անօրէնութեան արբենան. Գոտես ճշմարտութեան պնդեցին զմէջս. Ուրեն ողկոյզք ի յարդւոյ. Երկիր է ցորենոյ և գարւոյ և գինուոյ. այգեաց և նոնինեաց. Ամուրեացն և այրեացն ասեմ. Թեզան յասուեաց կամ ի կտաւեաց կամ յամենայն մաշկեղէն նիւթոյ. Ի մարզիկ գնդէ կղզեաց կղզեաց. Մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին. Գործէր մեծամեծ կոտորած քաղաքացեացն. Փօխանակ ձիոյ, ոչխարի, արջառոյ և իշոյ, ելանէաք ձիովք և կառօք. Բեռինք զուգից ջորւոց. Ջիոց և ջորւոց և ուղտուց և իշոյ. Մոնուկ մի կոխեալ եղե ի ջորեացն. Զիովք և ջորեօք և ուղտիւք. Ոչ երբեք տեսաք թէ կովք էշո ծնան, և էշք եղինս, և ոչ պալք մաքիս, և ոչ մաքիք աղուէսս, և ոչ արփեծք ձիս, և ոչ ձիք օսս, բայց միայն մի ինչ ծնունդ է՝ զոր մարգիկ հնարեցան արտաքայ կարգաց բնութեան, ծնուցանել ի ձիոց և յիշոյ ջորիս.

### Գլ. 12

#### Համացույց տախտակ հոլովումների

##### Ի հոլովում

Ա.	հաց	հացք
Հ.	(կ)հաց	(կ)հացս
Ս. Տ.	հացի	հացից
Բ.	ի հացէ	ի հացից
Գ.	հացիւ	հացիւք

##### Է—Ա հոլովում

Ա.	քաղաք	քաղաքք
Հ.	(կ)քաղաք	(կ)քաղաքս
Ս. Տ.	քաղաքի	քաղաքաց
Բ.	ի քաղաքէ	ի քաղաքաց
Գ.	քաղաքաւ	քաղաքաւք(օք)

##### Ո հոլովում

Ա.	գետ	գետք
Հ.	(կ)գետ	(կ)գետս
Ս. Տ.	գետոյ	գետս
Բ.	ի գետոյ	ի գետոց
Գ.	գետով	գետովք

##### Ռ հոլովում

Ա.	ծով	ծովք
Հ.	(կ)ծով	(կ)ծովս
Ս. Տ.	ծովոյ	ծովոց
Բ.	ի ծովէ	ի ծովոց
Գ.	ծովու	ծովուք

##### Ա հոլովում

Ա.	տիտան	տիտանք
Հ.	(կ)տիտան	(կ)տիտանս
Ս. Տ.	տիտանայ	տիտանաց
Բ.	ի տիտանայ	ի տիտանաց
Գ.	տիտանաւ	տիտանաւք(օք)

Միջմասնկալոր հոլովումներ

Ու.	հիմն	հիմունք
Հ.	(դ)հիմն	(դ)հիմունս
Ս. Տ.	հիման	հիմանց
Բ.	ի հիմանէ	ի հիմանց
Գ.	հիմամբ	հիմամբք

Ու.	գառն	գառինք
Հ.	(դ)գառն	(դ)գառինս
Ս. Տ.	գառին	գառանց
Բ.	ի գառանէ	ի գառանց
Գ.	գառամբ	գառամբք

Ու.	տարը	տարերք
Հ.	(դ)տարը	(դ)տարերս
Ս. Տ.	տարեր	տարերց, տարերումք
Բ.	ի տարերէ	ի տարերց, -աց
Գ.	տարերբ	տարերբք, -րօք

Ու.	աստղ	աստեղք
Հ.	(դ)աստղ	(դ)աստեղս
Ս. Տ.	աստեղ	աստեղց, -ղաց
Բ.	յաստեղէ	յաստեղց, -ղաց
Գ.	աստեղբ	աստեղբք, -ղօք

Ու.	փոքր	փոքունք
Հ.	(դ)փոքր	(դ)փոքունս
Ս. Տ.	փոքրւ	փոքունց
Բ.	ի փոքրէ	ի փոքունց
Գ.	փոքրւ, -քումբ	փոքումբք

Ու.	արիւն	արիւնք
Հ.	(դ)արիւն	(դ)արիւնս
Ս. Տ.	արեան	արեանց
Բ.	յարեանէ	յարեանց
Գ.	արեամբ	արեամբք

Ու.	մեծութիւն	մեծութիւնք
Հ.	(դ)մեծութիւն	(դ)մեծութիւնս
Ս. Տ.	մեծութեան	մեծութեանց
Բ.	ի մեծութենէ	ի մեծութեանց
Գ.	մեծութեամբ	մեծութեամբք

Ու.	ձի	ձիք
Հ.	(դ)ձի	(դ)ձիս
Ս. Տ.	ձիոյ	ձիոց
Բ.	ի ձիոյ	ի ձիոց
Գ.	ձիով	ձիովք

Ու.	որդի	որդիք
Հ.	(դ)որդի	(դ)որդիս
Ս. Տ.	որդւոյ	որդւոց
Բ.	յորդւոյ, ~ուջէ	յորդւոց
Գ.	որդւով	որդւովք

Ու.	թագուհի	թագուհիք
Հ.	(դ)թագուհի	(դ)թագուհիս
Ս. Տ.	թագուհոյ	թագուհեաց
Բ.	ի թագուհոյ	ի թագուհեաց
Գ.	թագուհեաւ	թագուհեօք

ԳԱՅ 13

Անկանոն հոլովում

41. Անկանոն հոլովման են պատկանում այլ, աէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, օր, զիւղ և տիւ բառերը, որոնց հուսավանք պատկերը հետեւալն է.

Ու.	այր	արք
Հ.	(դ)այր	(դ)արք
Ս. Տ.	առն	արանց
Բ.	յառնէ	յարանց
Գ.	առամբ	արամբք

Աւ.	տէր	տեարք
Հ.	(գ)տէր	(գ)տեարս
Ս. Տ.	տեառն	տեարց, տերանց
Բ.	ի տեառնէ	ի տերանց
Գ.	տերամբ	տերամբք

Աւ.	հայր	հարք
Հ.	(գ)հայր	(գ)հարս
Ս. Տ.	հօր	հարց, հարանց
Բ.	ի հօրէ	ի հարց, ի հարանց
Գ.	հարը	հարբք

Նույն ձևով են հոլովում մայր, եղբայր, մօրեղբայր, եօրեղբայր, սանահայր և այլն:

Աւ.	քայր	քորք
Հ.	(գ)քոյր	(գ)քորս
Ս. Տ.	քեռ	քերց
Բ.	ի քեռէ	ի քերց
Գ.	քերբ	քերբք

Աւ.	կին	կանայք
Հ.	(գ)կին	(գ)կանայս
Ս. Տ.	կնոջ	կանանց
Բ.	ի կնոջէ	ի կանանց
Գ.	կնաւ, կանամբ	կանամբք

Երա նման են հոլովում ախիկին, առնակին:

Աւ.	օր	տւուրք
Հ.	(գ)օր	(գ)տւուրս
Ս. Տ.	տւուր	տւուրց
Բ.	յօրէ	յաւուրց
Գ.	տւուրբ	յաւուրբք

Աւ.	գիւղ	գիւղք
Հ.	(գ)գիւղ	(գ)գիւղս
Ս. Տ.	գեղջ	գիւղից
Բ.	ի գեղջէ	ի գիւղից
Գ.	գիւղիւ	գիւղիւք

Աւ.	տիւ	տիւք
Հ.	(գ)տիւ	(գ)տիւս
Ս. Տ.	տուընջիւն	տուընջեանց
Բ.	ի տուէ, ի տուընջենէ	ի տուընջեանց
Գ.	տուընջեամբ	տուընջեամբք

### Հրահանգ 18

Եին արք իբրև հինգ հազար, թող զկանայս և զմանկտի: Մշ երկոտասան (12) ժամ է աւուր. Դեռ աւուր շատ կայ. Պարտ է զործել, մինչև աւուր կայ. Մեծ էր բերան այրին. Մեծ են բերանք այրիցն, Ելանէր յայրէն, Արք, սիրեցէք զկանայս ձեր: Կանայք, սիրեցէք զեղբայրս ձեր: Այր կանամբ է այր, ին արամբ է կին կին ժրագլուխ պսակ է առն: Որդի հարակատ զնմանուշ թիւն հօր բերէ: Տեարք էին զիւղից: Կամէր խորել ի գնոց զեղցն: Ծառայ երկնչի ի տեառնէ:

### ԹԱՍ 14

Ներզոյական և նախդրիվ նայցական

42. Գործողութեան տեղի կողմէից բայը ցույց է տալիս շար-ժում կամ դադարում:

Շարժումն այն է, որ գործողությունը ուղղվում է դեպի մի տեղ, իսկ դադարումը՝ ցույց է տալիս, թե գործողութիւնը որ տեղումն է կատարվում: Օրինակ՝ աշխարհարար՝ ես առն եմ զնում, զու ասեք նատած ես.—առաջինը ցույց է տալիս շար-ժում, երկրորդը՝ դադարում:

Դրարարում շարժում ցույց տալու համար դրվում է նախ-դրիվ հայցական հոլով, իսկ դադարում ցույց տալու համար՝ ներդրյական:

43. Նախդրիվ հայցական հոլովը կազմվում է, ինչպես անունն էլ ցույց է տալիս, անորոշ հայցականի վրա գնելով լ(լ) նախդրը. օրինակ՝ ի առն «տուն, գեղի տուն, դոմոյ», չդ. ի առն «տներ, գեղի տները, ա դոմա», երամ ի առն «տուն եմ գնում», առաքեմ ի դպրոց «ուղարկում եմ դպրոց»:

աշակերտք զնան ի տունս իւրեանց «աշակերտները իրենց աներն են գնում»:

44. Երբոյականը կազմվում է եղակիում արականի վրա դնելով ի(1) նախդիրը, իսկ հոգնակիում՝ նույնն է նախդրիվ հայցականի հետ. օրինակ՝ ի տան ժամանք, անում, տան մեջ, տուն, ի տան «նստում եմ տանք», նստին ի տունս իւրեանց «նստում են իրենց աներում»:

45. Երբ եղակի ներգոյականը կազմելիս բացառականին նման գուրս գտ, ներգոյական ձևը չի գործածվում և նրա փոխարեն գրվում է նախդրիվ հայցական. Դա պատահում է ո, ու չոլովման ժամանակ. օրինակ՝ զետ, ի գետ, տիտան, ի տիտան; Մինույն պատճառով է, որ ներգոյականը հոգնակիում նախդրիվ հայցականի ձևով է:

46. Ո հոլովման պատճանող մի քանի բառեր կան, որոնք չեղինակ նախօրդ կանոնից, ներգոյականը կազմում են ի հովման ձևով. օրինակ՝

գիշեր	գիշերոյ	ի գիշերի
բերան	բերանոյ	ի բերանի
գուր	գրոյ	ի գրի
տիզմ	տղմայ	ի աղմի և այլն.

Տեղանունները չեն գործածվում ներգոյական ձևով, այլ միշտ՝ նախդրիվ հայցական, նույնիսկ եթե դադարում ցույց տան. ինչպես՝ բնակի ի Հոռմ, յերևան, ի Վան և այլն:

Ներգոյականը ցույց է տալիս նաև ժամանակ. ինչպես՝ ի նեղութեան, ի տօնի, ի նեղութիւնս, ի տօնս և այլն:

## Հրահանգ 19

Ես տեսանէի յերազի և թուէր ինձ թէ երիս (3) խանս նաշնոյ ունէի ի գլուխ իմ. Այս է մեկնութիւն նորա. եղեք խանքն երեք աւուրք են: Եդ (գրեց) զմեզ ի բանտի ի տան դահճապետին: Մի լինիր իմաստուն յաշա անձին քո. Ոգի որ ի արտմութեան է, թախծեալ շըջի, Յամենայն ժամանակս աշք չարաց սպասեն չարեաց: Տեսանէր թէ զիարդ ժողովուրդն ար-

կանէր պղինձ ի գանձանակն: Եւթն ասադ միայն է գնայուն, և այն ամենայն բնելուալ են յերկինս. և որ գնայուն աստեղքն են՝ արկակն և լուսին և այլ ևս հինգ աստեղք, ոչ եթէ յարեւիլից յարկմուաս կան, այլ յարեւմտից յարեւելու: Արեգակն իրու ձրագ մի ի մեծի տան, ի մէջ ձեզուան ի յատակի լուցեալ:

## Հրահանգ 20

Աշակերտները գնում են գպլոց: Երեխաները խազում են պարեպում: Աւսուցիչը դասեր է ավանդում ուսումնարանում: Ձկները լոգում են ծովի և գետի ջրերի մեջ, Ձկնորսը գնում էր զետ և զետում ձուկ էր որսում: Շուկայում հրեհն կար (էր): Մարգում և գաշտում ծաղիկներ են ածում: Բերանում ատամներ կան (են): Կը բորբոքվում էր հնոցում: Գիշերը քնում է, ցերեկը աշխատում էր:

կա—է	կրակ—հուր
կար—էր	ցերեկ—տիւ
կան—են	բորբոքուիլ—բորբոքիլ

## ԹԱՍ 15

### Որակական ածական

47. Որակական ածականները աշխարհաբարում գրվում են գոյականից առաջ, իսկ գրաբարում կարող են թե առաջ դրվել, և թե հետո. օրինակ՝ իմաստուն այր կամ այր իմաստուն:

48. Երբ ածականը նախադաս է, մնում է անփափոխ. իսկ երբ ետագաս է, թվով և հոլովով համաձայնում է գոյականի հետ. օրինակ՝

### Եղակի

Ա.	իմաստուն այր	այր իմաստուն
Հ.	զիմաստուն այր	զայր իմաստուն
Ս. Տ.	իմաստուն առն	առն իմաստուն
Բ.	յիմաստուն առնէ	յառնէ իմաստուն
Գ.	իմաստուն արամբ	արամբ իմաստուն

Հոգիակի

Ա. 1.	իմաստուն արք	արք իմաստունք
Հ.	զիմաստուն արս	զարս իմաստունս
Ա. Տ.	իմաստուն արանց	արանց իմաստունց
Բ.	յիմաստուն արանց	յարանց իմաստունց
Գ.	իմաստուն արամբք	արամբք իմաստունալք

49. Միավանկ ածականները նախադաս դրվելով էլ կարող չեմ համաձայնել գոյականի հետ. օրինակ՝ մեծ առն կամ մեծի առն, մեծ արամբ կամ մեծաւ արամբ, ի մեծ առնէ կամ ի մեծէ առնէ:

Հրահանգ 21

Ահաւասիկ ուսուցանեմ քեզ զբանո ճշմարիսս և զգիտութիւն. Մի լինիր ընկեր առն բարկացողի և ընդ բարեկամի զայրացողի մի ընակիր. Ի վերայ որդուոյ իմաստունոյ ուրախ լինի սիրոտ հօր. լնուն շահմարանք ամենայն մեծութեամբ պատուականաւ և բարեօք. Շըթունք սիրեսցեն զպատասխանիո բանից բարեաց. Երկինք բարձունք և երկիր խորին. Որպէս ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է, նոյնպէս աւեաիք բարեաց յերկրէ հեռաստանէ. Անձն յագեալ զմորիսխ և զմելը արհամարնէ, բայց անձին կարօտելոյ և գտոնն իբրև քաղցր թուրի. Ի գլուխ նորտ պատկ ի քարէ պատուականէ. Տեսանեմ զքեզ մեծաւ ուրախութեամբ: Զուարակք բազումք և ցուլք գէրք պաշտպեցին զիս:

ԴԱՍ 16

Կատարյալի կազմությունը

50. Ահավասիկ չորս լծորդությունների կրկին ահսակների կատարյալի խոնարհումը.

սիրեցի	հատեք
սիրեցեր	հատեկը
սիրեցց	հատ, և հատ
սիրեցաք	հատաք
սիրեցէք	հատէք
սիրեցին	հատեին

խօսեցայ	ուսաւայ
խօսեցար	ուսաւար
խօսեցաւ	ուսաւաւ
խօսեցաք	ուսաւաք
խօսեցայք	ուսաւայք
խօսեցան	ուսաւան

աղացի	զողացայ
աղացեր	զողացար
աղացաւ	զողացաւ
աղացաք	զողացաք
աղացէք	զողացայք
աղացին	զողացան

Սանոր.—Կատարյալի մեջ ուր որ բառը միավանկ է, ոկրտից ավելանում է և (նախահավելված), որ ձայնավորի մոռագոնում է է:

Հրահանգ 22

Մատանի էր անակն վայոց ձոր, շինեցի զսա և եղի (գրի) տկնի ի վերայ: Այը մի էր տանուտէր, որ տնկեաց արգի և ցանավ պատեաց զնա և փորեաց ի նմա հնձան և շինեց աշտարակ և ետ զնա ցմշակս, և զնաց ի տարաշխարհ: Իբրև մերձեցաւ ժամանակ պատոյ, առաքեաց զծուայս իւր առ մշակնա տոնու զպառուզ նորա: Զոմն առնջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին: Առաքեաց զծուայս իւր կոչել զհրաւ իրեալմն ի հարսանիս, և ոչ կամեցան գալ: Քարձեալ առաքեաց այլ ծառայս և ասէ, տացէք հրաւիրելոցն: Ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ և պարարակք զենեալ են և պմենայն ինչ պտտրաստ է, եկայք ի հարսանիսն: Եւ նոքա յուլացեալ գնա-

ցին, ումն՝ յակարակ իւր, և ումն՝ ի վաճառ իւր։ Թագաւորն բարկացաւ և ասաքեաց զգօրս իւր և սատակեաց զալահողան, և զբաղաքն նոցա այրեաց։ Այդի եղեւ սիրեցելոյն յանկեան, ի տեղուջ պարարտութեան, յանգով փակեցի, ձողաբարձ զարդարեցի, տնկեցի որթ, աշաբարակ շինեցի ի միջի նորս և գուր հնձան փորեցի։ Ստացայ հովիւս բագումս։ Ստացաւ Յովսէփ զամենայն երկիրն եպիպատացւոց։ Ընդէր մոռացար։ Մեք զքեզ ոչ մոռացաք և ոչ ստեցաք։ Մոլորեցաք ի ճանապարհէ ճշմարտութեան։ Մոլորեցայք յանապատի։ Օտար էի և ոչ ժողովեցէք զիս, մերկ էի և ոչ զգեցուցէք զիս, հիւանդ և ի բանաբ և ոչ տեսէք զիս, Այր իմաստուն շինեաց զտուն իւր ի վերայ վիմի։ Իջն անձըք և խաղացին վեաք, շնչեցին հողմք և բախեցին զտունն և ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր։ Ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ, ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնէլ, և ոչ ծառ չար՝ պտուղ բարի առնէլ։

### ԴԱՍ 17

#### Թվական ածական

51. Թվականները երեք տեսակ են. բացարձակ, դասական և անձներական։

Բացարձակ թվականներն են.

Մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եօթն, ուր, ինն, տասն, մետասն, երկոտասն, երեքտասն, չորեքտասն, հնգետասն, վեշտասն, եօթնետասն, ութնետասն, իննետասն, քսան, քսան և մի, քսան և երկու, ... երեսուն, քառասուն, յիսուն, վաթոսուն, եօթնասուն, ութսուն, իննսուն, հարիւր, հազար, թիւր։

Սրանք հոլովվում են հետեւյալ ձևով.

Ու.	մի	երկու	երեք	չորք
Հ.	զմի	զերկուս	զերիս	զչոքս
Ս.	միոյ, միոջ	երկուց	երից	չորից
Տ.	միում	»	»	»
Բ.	ի միոջէ	յերկուց	յերից	ի չորից
Գ.	միով	երկուք	երիք	չորիք

Ինչպես տեսնում ենք, մի ունի միայն հզակի, երկու, երեք, չորք միայն հողնակի, իսկ հինգից սկսած՝ թիւ եղակի, և թիւ հողնակի։

Ու.	հինգ	հինգք	վեց	վեցք
Հ.	զհինգ	զհինգս	զվեց	զվեցք
Ս.	հնգի	հնգից	վեցի	վեցից
Բ.	ի հնգէ	ի հնգից	ի վեցէ	ի վեցից
Գ.	հնգիւ	հնգիւք	վեցիւ	վեցիւք

Ու.	եօթն	եօթանք	ութ	ութք
Հ.	զեօթն	զեօթանս	զութ	զութս
Ս.	եօթան	եօթանց	ութի	ութից
Բ.	յեօթանէ	յեօթանց	յութէ	յութից
Գ.	եօթամբ	եօթամբք	ութիւ	ութիւք

Ու.	ինն	ինունք	տասն	տասունք
Հ.	զինն	զինունս	զտասն	զտասունս
Ս.	ըննի	ըննից	տասին	տասանց
Բ.	յըննէ	յըննից	ի տասանէ	ի տասանց
Գ.	ըննիւ	ըննիւք	տասամբ	տասամբք

Ու.	մետասան	մետասանք
Հ.	զմետասան	զմետասանս
Ս.	մետասանի	մետասանից
Բ.	ի մետասանէ	ի մետասանից
Գ.	մետասանիւ	մետասանիւք

Ու.	եօթնետասն	եօթնետասունք
Հ.	զեօթնետասն	զեօթնետասունս
Ս.	եօթնետասին	եօթնետասանց
Բ.	յեօթնետասնէ	յեօթնետասանց
Գ.	եօթնետասամբ	եօթնետասամբք

20—90 հետեւում են ի հոլովման. հարիւր, երկիրիւր, երեք-նարիւր, չորեքինարիւր... իննինարիւր հետեւում են ո հոլովման. ձագար հետեւում է ի—ա հոլովման։

Թիւր հետեւում է ու հոլովման։

### 52. Դասական թվականները հետևյալներն են.

Առաջին կամ առաջներորդ, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, իններորդ, ատոներորդ, մետասաներորդ, երկուասաներորդ, երեքտասաներորդ, չորեքտասաներորդ, հնգետասաներորդ, վեցտասաներորդ, եօթնետասաներորդ, ութետասաներորդ, իննետասաներորդ, քսաներորդ, երեսներորդ, քառասներորդ, յիսներորդ, զաթսներորդ, եօթնասներորդ, ութեսներորդ, իննասներորդ, հարիւրերորդ, երկերիւրերորդ, հազարերորդ, բիւրերորդ.

Սրանք հոլովգում են՝

Առաջին և վերջին՝ ո հոլովմամբ, մնացյալը՝ ի—ա հոլովմամբ. միայն թե ունենք՝

Տ. առաջնոյ կամ առաջնում,  
երկրորդի կամ երկրորդում  
Բ. յառաջնոյ կամ յառաջնմէ

53. Անձներական թվականները կազմում են եքին կամ եքեան զերջավորությամբ. հոլովգում են հետևյալ ձևով. միայն հոգնակի.

Ա. երկոքին, երկոքեան  
Հ. զերկոսին, զերկոսեան  
Ա. Տ. երկոցունց, երկոցուն  
Բ. յերկոցունց  
Գ. երկոռումբք

Այսպես նաև երեքին, չորեքին, ամենեքին և այլն.

54. Թվականները գոյականից կարող են թե առաջ դրվել, և թե հետո. առաջ դրված դեպքում համաձայնությունը կամակար է, վերջը դրված դեպքում պարտադիր գոյականն էլ դրվում է հոգնակի.

### Հրահանգ 23

Յամին ութուտասներորդի նաբառողոնսորայ արքայի, արար պատկեր ոսկի, բարձրութիւն նորա վաթսուն կանգուն և լայնութիւն նորա կանգուն վեց. Յամսեանն եօթներորդի որ մի իցէ ամսոյն. Այսպէս արացես զտապանն. յերեք հարիւր

կանգույց զերկայնութիւն տապանին և ի յիսուն կանգնոյ վայսութիւնն և յերեսուն կանգնոյց զբարձրութիւնն. Առն միոջ էին երկու որդիք. Արար ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան. Զորից կենդանեացն էին միոյ միոյ վեց թեք. Պատմեաց երկուց եղբարցն. Են իմ երկու դստերք. Առ ինձ երկուս ուլու երկուք և երիք վկայիւք մեսցի որ մեռանիցին, և մի մեռցի միով վկայիւ. ի բերանոյ երկուց և երիք վկայից հաստատեացի ամենայն բան. Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. Ո՞չ ապարէն երկու ճնճղուկք գանգի միոջ վաճառին. Բերէին տնկամայոյծ մի բարձեալ ի չորից. Դու ես ի վերայ հինգ քաղաքաց, ի Դաւթէ մինչեւ ի գերութիւնն Բարելացւոց՝ ազգք չորեքտասաննք. Ապա յետ ամաց չորեքտասանից միւսանգամ ելի յերուսաղէմ. Ի չորեքտասաներորդում աւուր ամսոյն/առաջնոյ. Ի սկսանել չորեքտասաներորդի աւուր ամսոյն. Ի թուին հազարերորդի երեքհարիւրերորդի իննաներորդի երրորդի.

### Հրահանգ 24

Իմ երկու ձեռներումն էլ բռնած էի յոթին էլ. երեքը բաժանեցի և չորսն էլ գրի (եղի) սեղանի վրա.

Հրոսից ամսի տանվեցերորդ օրը, հայոց երկուհարյուր տառնհինգ և Քրիստոնի 766 թվին. Իր եղբորը 14 քաղաքի վրա վերակացու դրեց. Գերի տարան տանութ քաղաքի բնակիչներին. Արտեղից կտա ինձ հազարներից հազարներ և բյուրերից բյուրելու Բաս Խորենացու. հայոց թագավորներից առաջինն էր Պալույրը. Հայկազյանց վերջին թագավորի անունն էր Վահե. Անհնաք հինգ նկանակ և երկու ձուկ իրը հինգ բյուր մարդիկ էին.

### ԳԱՍ 18

55. Ստացական ածականները հետևյալներն են՝ իմ, քո, մեր, ձեր, իւր. սրանք հետեւում են ո հոլովման. ինչպես՝

Ու.	իմ	իմք
Հ.	զիմ	զիմս
Ա.	իմոյ	իմոց
Տ.	իմում	իմոց
Բ.	յիմմէ	յիմոց
Գ.	իմով	իմովք

Սուացական ածականը գոյականից թե առաջ կարող է դըր-  
վել, և թե հետո և միշտ էլ համաձայնում է. գոյականի վրա  
որոշիչ հող գնելը ավելորդ է. Օրինակ՝

Ու.	տուն իմ	տունք իմ
Հ.	զտուն իմ	զտունս իմ
Ս.	տան իմոյ	տանց իմոց
Տ.	տան իմում	տանց իմոց
Բ.	ի տանէ իմմէ	ի տանց իմոց
Գ.	տամբ իմով	տամբք իմովք
Աւ.	իմ տուն	իմ տունք
Հ.	զիմ տուն	զիմ տունս
Ս.	իմոյ տան	իմոց տանց
Տ.	իմում տան	իմոց տանց
Բ.	յիմմէ տանէ	յիմոց տանց
Գ.	իմով տամբ	իմովք տամբք

56. Ցուցական ածականներն են՝ այս, այդ, այն, սոյն, դոյն,  
հոյն. Հոլովվում են հետեւյալ ձևով.

Ու.	այս	այսք, այսոքիկ
Հ.	զայս	զայս, զայսոսիկ
Ս.	այսք, այսոքիկ	այսց, այսոցիկ
Տ.	այսմ, այսմիկ	այսց, այսոցիկ
Բ.	յայսմ, յայսմանէ	յասց, յայսցանէ
Գ.	այսու, այսուիկ	այսու, այսոքիւք
Ու.	սոյն	սոքին
Հ.	զսոյն	զսոսին
Ս.	սոլին	սոցին, սոցունց
Տ.	սմին	»      »
Բ.	ի սմին	ի սոցունց
Գ.	սովին, սովիմբ	սոքիմբք, սոքումբք

57. Ցուցական ածականները կարող են գոյականներից թե  
առաջ դրվել, և թե հետո, առաջ դրվելիս գործ է ածվում կարճ  
ձեր, հետո դրվելիս գործ է ածվում երկար ձեր, և այս պարա-

գային գոյականի վրա գրվում են համապատասխան գիմորու

հողերը (ս, դ, ն), ինչպես՝ այս, այրդ այդ, այրն այն:

Ու.	այս այր	այրս այս
Հ.	զայս այր	զայրս զայս
Ս.	այսք առն	առնս այսորիկ
Տ.	այսմ առն	առնս այսմիկ
Բ.	յայսմ առնէ	յառնէս յայսմանէ
Գ.	այսու արամբ	արամբքս այսոքիւք
Ու.	այս արք	արքս այսոքիք
Հ.	զայս արս	զարսս զայսոսիկ
Ս.	այսց արանց	արանցս այսոցիկ
Տ.	»      »	»      »
Բ.	յայսց արանց	յարանցս յայսցանէ
Գ.	այսու արամբք	արամբքս այսոքիւք

Նկատելի է, որ երկար ձեր գործածելիս հայցականի և բա-  
յառականի վրա նախդիքը կրկնվում է. Փսխանակ ցուցական  
ածականի կարելի է գնել միայն գիմորու հող. ինչպես՝ այս,  
այրդ, այրն (նշանակում է՝ այս մարդը, այդ մարդը, այն մար-  
դը և ոչ թե՝ իմ մարդը, քո մարդը, նրա մարդը, ինչպես է  
որիորհարաբռում).

58. Անորու ածականներն են՝ ամենայն, այլ, միւս, իւրա-  
քանչիւր, ոմն, ոք, իմն, ինչ. Հոլովվում են հետեւյալ ձևով.

Ու.	ամենայն	մլ	այլք
Հ.	զամենայն	զայլ	զայլք
Ս.	ամենայնի	մլոյ	այլոց
Տ.	»	մլոյց, մլուում	»
Բ.	յամենայնէ	յայլմէ	յայլոց
Գ.	ամենայնիս	մլով	այլովք

Այլ բառի նման են հոլովվում՝ միւս, իւրաքանչիւր — ամենայն  
ցունիկ հոդնակի.

	կզ.	հոդն.	եզ.
Ու.	ոմն	ոք	իմն, ինչ
Հ.	զոմն	զոք	զիմն, զինչ
Ս.	ուրումն	ուրուք	ոմանց իրիք

Եղ.	Հոգն.	Եղ.
S.	ումեմն	ումեք
R.	յումեմնէ	յումեքէ
Գ.	ոմամբ	ոմամբք

59. Հարցական ածականներն են.

Ու.	սվ,	սյք	սր	սրք	զինչ
Հ.	զսվ,	զսյս	զսր	զսրս	զինչ
Ա.	սյր	սյյց	սրռյ	էր	
S.	սւմ	սյց	սրռմ	սրռց	իմ
R.	յումմէ	յոյց	յարմէ	յորնց	յիմէ
Գ.	որռվ	որռվք	որռվ	որռվք	իւ

Հաճախ կրկնությամբ առվում է ո՞ որ, ո՞յլ ոմանք, զի՞նչ ինչ-

60. Ամենայն ածականը սովորաբար գոյականից առաջ է դրվում և անփոփոխ է մնում. ինչպես՝

ամենայն մարդ, յամենայն մարդոյ.

Այլ ածականը գոյականից թե առաջ, և թե հետո է դրվում և համաձայնում է. ինչպես՝

Ու.	այլ այլ	արք այլք
Հ.	զայլ այլ	զարս այլս
Ա.	առն այլոյ	արանց այլոց
S.	առն այլում	արանց այլոց
R.	յառնէ այլմէ	յարանց այլոց
Գ.	արամբ այլով	արամբք այլովք

Կամ այլ այլ, այլոյ առն, այլում առն, յայլմէ առնէ, յայլով արամբ, այլ արք, այլոց արանց, յայլոց արանց, այլովք արամբք.

Ո՞ր հարցականը դրվում է միշտ գոյականից առաջ և համաձայնում է.

Ու.	որ տուն	որ տունք
Հ.	զոր տուն	զոր տունս
Ա.	որոյ տան	որոց տանց
S.	որում տան	որոց տանց
R.	յորմէ տանէ	յորոց տանց
Գ.	որով տամբ	որովք տամբք

Ամն, որ գրվում են միշտ գոյականից հետո և համաձայնում են.

Ու.	այլ ոմն, այլ ոք	արք ոմանք
Հ.	զայլ ոմն, զայլ ոք	զարս ոմանս
Ա.	առն ուրումն, առն ումեք	արանց ոմանց
S.	առն ումեմն, առն ումեք	արանց ոմանց
R.	յառնէ ումեմնէ, յառնէ ումեքէ	յարանց ոմանց
Գ.	արամբ ոմամբ	արամբք ոմամբք

Իմն, ինչ դրվում են միշտ գոյականից հետո և համաձայնում են.

Ու.	բան իմն, բան ինչ
Հ.	զբան իմն, զբան ինչ
Ա.	բանի իրիք
S.	բանի իմիք
R.	ի բանէ իմեքէ
Գ.	դանիւ իւիք

Ո՞ որ և զի՞նչ ինչ նորվվում են հետեւալ ձևով.

Ու.	ս ոք	սյք ոմանք
Հ.	զս ոք	զսյս ոմանս
Ա.	սյր ուրուք	սյյց ոմանց
S.	սւմ ումեք	սյց ոմանց
R.	յումմէ ումեքէ	յոյց ոմանց
Գ.	որռվ ոմամբ	որռվք ոմամբ

Ու.	զինչ ինչ	հոգնակի չունի
Հ.	էր իրիք	
Ա.	իմ իմիք	
S.	յիմէ իմեքէ	
R.	իւ իւիք	

## Հրամանգ 25

Լուր, որդեսկի, խրտառ հօր՝ քո և մի մերժեր զօրէնս մօր քո, զի պատկ շնորհաց լոկացի գլուխ քո և մանեակ ոսկի ի զարանցի քում. Ահաւասիկ առաջի առնեմ ձեզ զհոգուոյ իմոյ

զպատգամս, Ապախտ առնէիք զխորհուրդո իմ և յանդիմանութեանց իմոց ոչ անսայիք, Ես ծիծագեցայ զկորսանամք ձերով Բժշկոթիւն եղիցի մարմնոյ քում և գարման ոսկերաց քոց երկայն աւուրք և ամք կենաց յաջմէ իւրմէ և յանեկէ իւրմէ փառք և մեծութիւն: Հանձարով իւրով զանգունզա պատառեաց և ամպք հոսեցին զանձրե, Առն ուրումն մեծատան եառն անդք տոհմականս, Քանզի յորում իցէ ոք, այն՝ յորում էն, քան զայն որ ի նմա էն՝ մեծ գտանի, Վասն այդորիկ տսեմ ձեզ, Մի հոդայք վասն ոգլոց ձերոց և մի վասն մարմնոց ձերոց, Ամենայն որ լսէ զբանս իմ զայսովիկ և առնէ, նման է առն իմաստնոյ, որ շինեաց զտուն իւր ի մերայ վիմի: Ի քարանցս յայսցանէ յարուցանէ որդիս Արքահամու, Ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին, Խօսէր Պետրոս զբանս զայս, Լուեալ Անանիա զբանս զայսովիկ, անկաւ և ենան զագի: Զայս բանս խօսեցաւ, Իրրե լսէին զբանս զայս: Խիստ է բանդ տցէ, ով կարէ լսէր Զայդ բանս ասելով և զմեկ թշնամանես: Եղի յետ այսց բանից իբրև աւուրք ութ: Զինչ է բանս այս: Պատմէին ամենայն բանքս այս սոքիկ: Զի որ շարժին և փոփոխի՛ չէ էական, այդ կամ լիտք յումեքէ և յիմեքէ և կամ հասանալ ի չպոյէ, Բարւոք է աղապա թէ ազն անհամեսցի, իւ համեմեսցի:

### Հրահանգ 26

Իմ տանը շատ զբքեր կան, Մեկը ձեր տնից դուրս էր գտիս, Մեր պարտեզում տանձենիների և նոնինիների շատ տեսակներ կան, Ես այս պատուղները քաղել եմ մեր խնձորենիներից, Այդ ընկուզենու վրա քարձրացավ, Ի՞նչ բանիք պետք է նա: Որոնցից ստացաք այս իրերը, Որի զրքերն ես կարդում, Ռւմիք ես բերում, Ովքեր հն այդ մարդիկ, Ի՞նչ բանիք կարոտ ես դուք Ո՞ր տանն ես բնակվում գու, Ո՞ր տնից ես գալիս, Ո՞ր ծառերից քաղեցիր այս պատուղները, Այս բաները մի մարդու տուր Արանում կասկած չկա: Այս խոսքերով դիմեց նա ինձ, Արանցով զոհ զահացիք.

### ԹԱՍ 19

61. Անձնական գերանունները, իրենց հոլովմամբ հանդեք, հետեւյալներն են,

Ու.	ես	մեք	դու	դուք
Ն.	զիս	զմեզ	զքեզ	զձեզ
Ո.	իմ	մեր	քո	ձեր
Տ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ
Բ.	յինէն	ի մէնջ	ի քէն	ի ձէնջ
Գ.	ինե	մեօք	քե	ձեօք

Ու.	նա	նոք
Ն.	զնա	զնոսա
Ո.	նորա	նոց
Տ.	նմա	նոցա
Բ.	ի նմանէ	ի նոցանէ
Գ.	նովաւ	նոքօք

Այսպիս են հոլովմում նուև առ, դա.

Ու.	ինքն	ինքեանք	իւրեանք
Ն.	զինքն	զինքեանս	զիւրեանս
Ո. Տ.	ինքեան, իւր, իւրեան	ինքեանց	իւրեանց
Բ.	յինքենէ, յիւրմէ	յինքեանց	յիւրեանց
Գ.	ինքեամբ, իւրե,	ինքեամբք	իւրեամբք
	իւրեամբ, իւրեաւ		

### Հրահանգ 27

Հայկակալ ընդ նոսա փառաւորեմք զկարգիչն նոցա և զյօրինչ, զի մեզ ի պէտս են և կարգչին իւրեանց ի վասոս, Զի ոչ ոք է առաջին քան զնա և ոչ ոք է յետոյ նման նմա, և ոչ ընկեր հուսասար նորին և ոչ էութիւն հակառակ նմա և ոչ գոյութիւն ընդդիմակաց, Ինքն է պատճառ ամենայնի, Ամենայն ոք ի ձենջ, որ ոչ հրաժարէ յամենայն ընչից իւրոց, ոչ կամք իմ որակերտ լինել Յորժամ զիսիստ ոք իշխան կամք ի քաղցրութիւն, ածել չկարէ յայտ երթալ ասել՝ թէ գու խիստ ես, այլ քաղցրախառն բանիւք մատուցեալ ողոքէ թէ գու, տէր, քաղցր ես և բարերար ամենացուն, ամենեքին գոն են զքէն, բոլորք առ իրաւագետ ունին, և այնպէս կարէ մեղմով քաղցրացուցնել զիստութիւն իշխանին, Աղբերք մշտարուղիսք հանապազ

բղիսեն և ոչ պակասեն, որոց բղխմունքն զայլոց կարօտութիւնս  
լուսն և ինքեանք ի նմին յորդութեան կան մշտնչենաւորք.

### Հրահանգ 28

Նա ինձ հրավիրեց, քեզ չհրավիրեց. Մենք ձեզանով միաւ  
սին լինում ենք քսան անձ. Այս բոլորը քեզանից է. Մեզանից  
աշխատանք և ձեզանից վարձատրություն. Իմն է այս բոլորը.  
Բայց նա այս բոլորը առնելով ինձանից՝ տալիս է ձեզ, Ի՞նչ  
քան է մնում ինձ. Դու քո մասին ի՞նչ ես վկայում. 'Եռք ով  
եք կարծում-ձեզ! Մեր և ձեր տները իրավից հեռու են, ես ինձ  
լավ գիտեմ. Միայն ինձնով չի լինի, այլ քեզանով ու մեզանով.  
Այդ պատվերը մեզ ես տալիս, թե քեզ նրանք նրանց գրքերը  
նրանից առնելով, տալիս են նրանց, որոնք գուրկ են նրանցից և  
նրանցով իրոք լրացնում են իրենց կարուությունները. Ո՞վ  
առավ նրանից, ես նրանով եմ ապրում, Նրա հույսը նրանումն  
էր. Բաժանեց որանք դրանցից. Իրենք իրենց շնու Դու այս  
քեզնից ես տառմ. Այս խոսքերը ինձ հաճելի չեն. Եվ իրենք  
իրենցով երջանիկ են. Ո՞ւմն է այս գիրքը, Նույն մարդը, նույն  
խոսքը նույնով է հաստատում. Նույն մարդիկ նույն խոսքերը  
նույն բաներով են հաստատում.

### ԴԱՍ 20

62. Ապառնիի եզակի ա գեմքը կազմվում է կատարյալի  
եզակի ա գեմքի վրա ավելացնելով ց, այնուհետեւ խոնարհվում  
է առանձին վերջավորություններով, որոնք մասամբ նման են  
ներկային. Հոգնակի ա և բ գեմքերը միշտ նույն ձևով են և  
կազմվում են ցուրք, -ջիք վերջավորություններով.

Անա չորս լծորդությունների կրկին տիպարների ապառնիի  
պատկերը.

սիրեցից	հատից
սիրեսցես	հատցես
սիրեսցէ	հատցէ
սիրեսցուք	հատցուք
սիրեսջիք	հատչիք
սիրեսեն	հատցեն

խօսեցայց	ուսայց
խօսեսցիս	ուսցիս
խօսեսցի	ուսցի
խօսեսցուք	ուսցուք
խօսեսջիք	ուսչիք
խօսեսցին	ուսցին

աղացից	գողացայց
աղացես	գողացիս
աղացէ	գողացի
աղացցուք	գողացուք
աղատիք	գողատիք
աղացեն	գողացին

թռից	զգեցայց
թռցես	զգեցցիս
թռցէ	զգեցցի
թռցցուք	զգեցցուք
թռջիք	զգեցչիք
թռցեն	զգեցցին

### Հրահանգ 29

Ե՛կ, եղրօրորդի իմ, ելցուք յագարակս, ագցուք ի շենս և ի  
պարտէզս, կանխեսցուք յայգիս, տեսցուք թէ ծաղկեալ իցէ որթ,  
թէ ծաղկեալ իցէ նոճ, թէ ծաղկեալ իցէ նոնենի. Եվ եղիցի յա-  
ւոր յայնմիկ բղխեսցեն լերինք զբաղցըութիւն և բլուրք յորդես-  
ցին զիաթն, և ամենայն աղբերք Յուլայ բղխեսցեն ջուրս, եւ աղ-  
բերի ի տանէ Տեառն ելցէ և արբուցէ զծորն վիճակաց, Եվ եղիջիք  
տակցեալք յամենեցունց վասն անուան իմոյ, այլ որ համբերես-  
ցին ի սպառ՝ նա կեցցէ. Ոչ անցցէ ազգս այս, մինչև այս ամե-  
նոյն եղիցի, երկինք և երկիր անցցեն և բանք իմ մի անցա-  
նիցին. Անարգեսցէ զչարն և ընտրեսցէ զբարին. Տիրեսցէ  
յայնկոյս զետոյն, Գերծցէ տծելեաւն զգլուխ և զմազ ստից, և  
զմօրուսն սրբացէ. Բուծցէ մարդ երինչ մի յարջառոց և մաքիս  
երկուս. Աղեղնաւորք մտանիցեն անդր. Մի հասցէ անդր եր-

կիւղ. Բղիսնցէ երկիր զբանջար խոտոյ, Հանցեն ջուրք գետունու շնչոց կենդանիաց և թռչունս թեւորս ի վերայ երկրի. Թողդէտ այլ զհայր իւր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ. Ելից յերկինս, ի վերոյ քան զատեղս երկնից արկից զաթոս իմ, Ելից ի վեր քան զամպս. Արդ ահաւադիկ ի զժխոս իջցես. Զարմացին ի վերայ քո և աստօցեն. Անկցիս ի վերայ լերանց իրրե զմեռեալ. Մի մհացէ յաւիտեանս ժամանակաց զաւակ չար. Հանցէ և սատոկեսցէ զքեզ, այր դու, և հանցէ զպատմուճան քո և զպսակդ փառաց քոց, և ընկեսցէ զքեզ յերկիրն մեծ և յանչափ, և անդ մեռանիցիս.

### Հրահանգ 30

Կվարեմ հողը, կցանեմ սերմերը, կոռոկեմ ջրով իր ժամանակին և հասնելու ժամանակ կքաղեմ ցորենը, կկապեմ խուրձիւրձ, կդիզեմ շեղջ շեղջ կալի մեջ, կկալսեմ ցորենը, կմաքրեմ հարդից և կլցնեմ շտեմարանների մեջ, կքանդենը մեր շահմարանները, կընդարձակենք մեր ամբարները, ավելի մեծերը կշնենք, կմթերենք այստեղ այն արգյունքը, որ պիտի հավաքենք մեր ապարակներից, մեր արտերից, մեր այգիներից և մեր պարտեզներից և կդիզենք հարստություն շատ տարիների համար. Կտեսնես եղբօրս, բերանացի (բանիւ բերանոյ) կհայտնես նրան, ինչ որ ասացի քեզ, իսկ եթե նրան այնաեղ չկանես, կհարցնես թե ուր է և կգրես իրեն մի նամակ և հավատարիմ մեկի ձեռքով կուղարկես. Կիջնի անձրելը, կոռոկի մեր գաշտերը, մեր արտերը և մեր արոտները կդալարեն, կծաղկեն, և երբ արել կծագի, կհասնեն և լավ արդյունք կրերեն. Այն ժամանակ կքաղեք մրգերն ու բերքերը, որչափ պետք է մեզ համար կպահեք, իսկ մնացյալը կվաճառեք քաղաքում.

### ԴԱՍ 21

63. Հըամայականը ունի միայն եզակի և նոդնակի երկրորդ զեմք, առաջին և երրորդ գեմքի համար զործածվում է ապառնի ձեւը. Հըամայականի բացասականը կոչվում է արգելական.

64. Հըամայականի եզակի բ գեմքի համար կտ նաև մի

ուրիշ ձեւ, որը կազմվում է -չիր վերջավորությամբ և համապատասխանում է -չիր ձերն. օրինակ՝ յիշեսիր—յիշեսիր, սիրեսիր և այլն.

սիրես	համա
մի սիրեր	մի հատանիր
սիրեցէք	հատէք
մի սիրէք	մի հատանէք
խօսեաց	ուսիր
մի խօսիր	մի ուսանիր
խօսեցարնւք	ուսարնւք
մի խօսիք	մի ուսանիք
աղա	գողացիր
մի աղար	մի գողանար
աղացէք	գողացարնւք
մի աղայք	մի գողանայք
թնդ	զգեցիր
մի թողուր	մի զգենուր
թողէք	զգեցարնւք
մի թողուք	մի զգենուք

### Հրահանգ 31

Մի արացես դու քեզ կուսու և մի պաշտեսցես զնոսա: Յիշեսիր զօրն շաբաթու սրբել զնա: Զգեց օր կործեսցես և արաց զամենայն զգործս քո, յաւուրն եօթներորդի մի զործեսցես ի հմա զամենայն զգործ քո: Պատուեա զհայր քո և զմայր քո: Մի ցանկանար կնոջ ընկերի քո և մի ծառայի նորա և մի տղախնոյ նորա և մի եղին նորա և մի իշոյ նորա և մի ամենայն անսանոյ նորա և մի ամենայնի զինչ ընկերի քո իցէ: Դու խօսեաց ընդ մեզ, Մի խօսեսցի ընդ մեզ. Մի մերձենար արոր, լոյն զկօշիկս քո յոտից քոց: Զգեա զձեռն քո և բուռն հար: Արկ զձեռն քո ի ծոց քո: Արձակեա զժողովուրդ իմ: Արտացեն ինձ տօն յանապատի, Մի համարիք եթէ եկի լուծանի զարնու: Թող զպատարագն քո առաջի սեղանոյն և երթ նախ

հաշտեաց ընդ եղբօր քում, եթէ տկն քո աջ գայթակից եցուցանէ զքեզ, իւլիս զնա և ընկեա ի քէն, Յզեա արս և կոչեա զնա. Արի, Պետրոս, զեն և կեր.

### Հրամանգ 32

Մաիր նեղ զոներով. Արձակիր այդ մանուկներին. Խոսիր, ինչու ես լուսմ. Անցիր գետից, Կարիր կապերը, Պատասխանիր իմ խօսքերիո. Լոիր և թող նա խոսի, Նայիր և անս. Սովորեցիք այս խօսքերը. Խօսեցիք, ինչու եք լուսմ. Կարեցիք բոլոր այս կապերը. Հարձակվեցիք այդ գազանների վրա, արձակեցիք ձեր կապարները և սպանեցիք նրանց. Ուղարկիր ինձ երկու ծառա. Պահեցիք քաղաքը. Բոլորդ դուրս ելեք. Ելիր այդ տեղից:

### ԴԱՍ 22

65. Ստորագտասական ներկան կազմվում է ներկայի հիմքի վրա աւելացնելով -ից, -ից, -այց, -ուց և խոնարհնելով սահմանական ներկայի ձեռք.

սիր-ից-եմ	հատ-ան-ից-եմ
սիր-ից-իս	հատանիցէս
սիր-ից-է	հատանիցէ
սիր-ից-եմք	հատանիցեմք
սիր-ից-էք	հատանիցէք
սիր-ից-ին	հատանիցին
խօս-ից-իմ	ուս-ան-ից-իմ
խօս-ից-իս	ուսանիցիս
խօս-ից-ի	ուսանիցի
խօս-ից-իմք	ուսանիցիմք
խօս-ից-իք	ուսանիցիք
խօս-ից-ին	ուսանիցին

աղ-այ-ցեմ	գող-ան-այց-եմ
աղայցիս	գողանայցիս
աղայցէ	գողանայցէ

աղայցեմք	գողանայցեմք
աղայցիս	գողանայցիս
աղայցէն	գողանայցէն

թող-ուց-ում	զգենուցում
թողուցուս	զգենուցուս
թողուցու	զգենուցու
թողուցումք	զգենուցումք
թողուցուք	զգենուցուք
թողուցուն	զգենուցուն

### Հրամանգ 33

Երանի է ձեզ յորժամ նախատիցին զձեղ և հարածեսցին և ամիցեն զամենայն բան չար զձենջ սուս վասն իմ. Պուք էք աղ երկրի, ապա թէ աղն անհամիցի, իւ աղիցի. ոչ իմիք աղ-ցիցէ այնուհետե, բայց եթէ ընկենուլ արտաքս և կօխան լինել ի մարգկանէ. Եթէ ոչ առաւելուցու արգարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից. Որ սպանանիցէ պարտական լիցի գատաստանի. Որ ամիցէ ցեղարայը իւր «յիմար» պարտաւոր լիցի ատենի. Էկր իրաւոխոն ընդ սոսիի քում վազագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի անապարհի. Պուցէ մատնիցէ զքեզ սոսին դատաւորի. և դատաւորին գտնձի և արկանիցիս ի բանտ. Ոչ ելանիցիս անտի մինչե հատուցանիցես զյետին նաքարակիտն. Ո՞ իցէ ի ձէնչ մարգ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց, միթէ քար տայցէ նմա, և կամ ինդրիցէ ձաւկն, միթէ օձ տայցէ նմա. Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ և զմիուն սիրիցէ կամ զմին մեծարիցէ և զմիւն արհամարհիցէ. Մի հոգայք վասն ոպւց ձերոց՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք. և մի վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ ապանիցիք. Մի արկանէք զմարգարիս ձեր տառջի խոզաց, զի մի առ ստն կոխիցին զնոսա և զարձեալ երդիծուցանիցեն զձեզ.

Թթ. կական բայի ստորագտասականը լինում է՝

իցեմ	իցեմք
իցիս	իցէք
իցէն	իցին

Ուզում եմ, որ տոնի գոյ ինձ մոտ, ես տեսնեմ, և եթե լավ  
է, ուղարկեմ մորս մոտ Երբ որ քամիները շնչեն, ամպերը  
որոտան, և անձրել տեղա իբրև տեղատարափ, գետերը շարժվեն,  
ջրերը ափերով զեղվեն և ծածկեն արտերը ու անդաստանները:  
Երբ արել ծագի, ճառագայթները ցոլան և սփռվեն տարածվեն  
երկրի վրա, հողը տաքանա, խոտերը ծին և ծաղիկները ծաղկեն  
դաշտերում, ծառերը զարդարվեն սերեներով և նրանց մեջ  
պտուղները գույնզգույն փայլեն: Երբ խավարը իջնի պատի  
երկիրը և գիշերը թագավորի համատարած:

ԴԱՍ 23

67. Դերբայր լինում է երեք տեսակ՝ անորոշ դերբայ, ան-  
ցալ դերբայ և ապանի գերբայ: Ինչպես՝

սիրել, սիրեալ, սիրելոց  
հատանել, հատեալ, հատանելոց  
խօսել, խօսեալ, խօսելոց  
ուսանել, ուսեալ, ուսանելոց  
աղալ, աղացեալ, աղալոց  
գողանալ, գողացեալ, գողանալոց  
թողուլ, թողեալ, թողլոց  
զգենուլ, զգեցեալ, զգենլոց

68. Դերբայներից կազմվում են հետեւյալ բաղադրյալ ժա-  
մանակները.

Հարակատար	Գերակատար
սիրեալ եմ	սիրեալ էի
սիրեալ ես	սիրեալ էիր
սիրեալ է	սիրեալ էր
սիրեալ եմք	սիրեալ էաք
սիրեալ էք	սիրեալ էք
սիրեալ են	սիրեալ էին

Ստորադասական անցյալ  
սիրեալ իցեմ սիրեալ իցեմք  
սիրեալ իցես սիրեալ իցէք  
սիրեալ իցէ սիրեալ իցին

Ներկա ապանի

սիրելոց եմ	սիրելոց եմք
սիրելոց ես	սիրելոց էք
սիրելոց է	սիրելոց են

Անկատար ապանի

սիրելոց էի	սիրելոց էաք
սիրելոց էիր	սիրելոց էիք
սիրելոց էր	սիրելոց էին

Ստորադասական ապանի

սիրելոց իցեմ	սիրելոց իցեմք
սիրելոց իցես	սիրելոց իցէք
սիրելոց իցէ	սիրելոց իցին

69. Կարելի է դիմավոր բայի տեղ գործածել անցյալ կամ  
անորոշ դերբայ. այն ժամանակ ենթական փոխանակ ուղղա-  
կանի՝ դրվում է անցյալ դերբայի հետ՝ սեռական, իսկ անորոշ  
դերբայի հետ՝ տրական, ինչպես,

Լուաւ նա զայս և մեկնեցաւ=  
Լուեալ նորա զայս՝ մեկնեցաւ  
Տեսեալ եմ ես զնա=տեսեալ է իմ զնա:  
Տեսեալ ես զու զնա=տեսեալ է քո զնա:  
Տեսեալ է եղբայր իմ զնա=  
Տեսեալ է եղրօր իմոյ զնա:  
Տեսեալ (ին) եղբարք մեր զնա=  
Տեսեալ (է) եղբարց մերոց զնա:  
Թէ կամիմք զի բազաւորեսէնա ի վերայ մեր=

Թէ կամիմք բազաւորել նմա ի վերայ մեր:  
Չտամ թոյլ զի անցանիցէք դուք ասոտի=

Չտամ թոյլ անցանել ձեզ ասոտի:

Հրահանգ 35

ԶԱՂԵՔՍԱՆԳՐԵ խարէին դեք թէ կենդանի կայցէ, որոց ըստ  
ՅԵՐԱԿՄԱՆ ճնարողութեանն կապեալ արկեալ կախարդանօք  
զին ի շիշ, կարծեցուցանէին թէ Աղեքսանդրոս կենդանի իցէ և

մահ խնդրիցէ: Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաքեաց գրիւցապաշտու հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց: որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց զաշխարհ: և ի սնոսի յոյս կապեալ կան անհաւատք որպէս և Հրեայք ի զուր ակնակալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ դալոց է շինել զերուսաղէմ և ժողովել զՀրեայս և անդ թափուրել նմա նոցա:

Հատուած գնացեալ Վարդպէս մանուկն  
Ի Տունաց գաւառէն զՔասազ գետով,  
Եկեալ նստեալ զՇըլէշ բրուվ,  
ԶԱրտիմէդ քաղաքաւ, զՔասազ գետով,  
Կուել կոփել զգուռնն Երուանդայ արքայի:  
Ճաշ գործեալ Արգաւանայ ի պատիւ Արտաշիսի  
Խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշտպաց:  
Արտաւազդայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արտաշիսի:  
Տեղի ապարանից՝ ի հիմնանալն Արտաշատու,  
Նա անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարտակերտ:

### Հրահանգ 36

Նա տեսնելով այս բոլորը, ասում է նրան, շեմ ուզում, որ նա գա: Բերելով նա այս բաները, հանձննեց նրանք իր եղբայրներին: Կանչելով իր քույրերին, պատվիրեց նրանց ինչ որ լսել էր իր մորից, եթե ես գործել եմ մի բան, որ հակառակ է օրենքի, պատժեցնք ինձ: Տեսել եք զուք այն բոլորը, ինչ որ մենք բերել էինք մեր տնից, կլինեն թերես ժարդիկ, որ կհավատան այդպիսի տիւմար խօսքերի: Զեք կարդացել զուք այն համակը, որ հայրս գրել է և մի հավատարիմ մարդու մեռով ուզարկել մեզ: Նա ներս մտնելով՝ հարցըրեց: Նա, հարցնելով այս բաները և տեղեկանալով ինչ որ եղել է, շատ զարժացավ և ասաց. Չեմ թույլ տա, որ նա նրան բերի մեր տունը: Նա ընտրելով մի վայր՝ այն տեղում կացել մնացել է:

### ԳԱՍ 24

70. Ա լծորդության առաջին տիպարի բայերից ածեմ, թերեմ, հանմ խոնարհում են երկրորդ տիպարի նման.

կտու. ածի, բերի, հանի  
տպառ, ածից, բերից, հանից  
հրամ. ա՛ծ, բե՛ր, հա՛ն,

Ա լծորդության երկրորդ տիպարի երեսութ ունեցող բայերից նրանք, որոնց մեջ ան արժատական է և աչ թե մասնիկ, խոնարհում են առաջին տիպարի ձևով. ինչպես սերմանել, դարմանել, ժամանել և այն:

Հարկանել բայլ կորցնում է կ ձայնը և լինում է՝ կտու. հարի, տպառ, հարից, հրամ, հա՛ր, անց, գերբ, հարեալ,

71. Բ լծորդության բայերից նախիմ խոնարհում է երկրորդ տիպարի պիս. նստայ, նստայց, նիստ և այն:

Բ լծորդության բայերից մի քանիսը անցյալ զերբայը կազմում են նաև եղեալ ձևով. ինչպես խօսեցեալ, կոչեցեալ:

72. Գ լծորդության բայերից բանամ, բանամ լինում են կատարյալում՝ բացի, բացի, տպառ, բացից, հրամ, բա՛ց, բացից:

Հոգամ, յուսամ, որսամ, շանամ, ցնծամ լինում են կատարյալում՝ նոզացայ, յուսացայ, որսացայ, շանացայ, ցնծացայ, տպառ. նոզացայց, յուսացայց, որսացայց, շանացայց, ցնծացայց, բայց հրամայականում՝ նոզա՝, յուսա՝, որսա՝, շանա՝, ցնծա՝:

Լուանամ, իմանամ, մոռանամ բայերը հրամայականում լինում են լուա, իմա, մոռա:

Բանամ, դառնամ բայերը խոնարհում են՝ կտու. բարձի, դարձայ, տպառ. բարձից, դարձայց, հրամ. բա՛րձ, գա՛րձ, անցյալ դերբայ՝ բարձեալ, դարձեալ:

73. Դ լծորդության նում վերջացող բայերի մեծ մասը և ձայնը գարձնում է ց. ինչպես՝

լնում, լցի, լցից, լցի, լցեալ  
խնում, խցի, խցից, խցեալ  
ընկենում, ընկեցի, ընկեցից, ընկեալ  
զգենում, զգեցայ, զգեցայց, զգեցիր, զգեցեալ  
յենում, յեցայ, յեցայց, յեցիր, յեցեալ  
ընթեռնում, ընթերցայ, ընթերցայց, ընթերցիր, ընթերցեալ  
Ալնում, զրոնում, հեղձնում բայերը կորցնում են և ձայնը.  
առի, առից, առ, առեալ  
զրոսայ, զրոսայց, զրոսիր, զրոսեալ  
հեղձայ, հեղձայց, հեղձիր, հեղձեալ

Ահա ես ածից ջրհեղեղ ջրոյ ի վերայ երկրի, ապականել զամենայն մարմին յորում է շունչ կենդանի. և ածից ես անձրև ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր. Զի տրդար ես յամենայնի զոր ածեր ի վերայ մեր. Ածէք զնա առ իս և ածին զնա առ նաւ. Եւ եկեալ ի վերայ զքառասուն իւրոյ, ած զնա ի պանդոկի մի. Արա ինձ խորախկա, որպէս և ես սիրեմ, և բեր մատն ինձ զի կերայց. Եւ տարաւ ի ներքու այրն զորեալն ի առան Յովսեփայ, և բերին ջուր լուսանալ զոստ նոցաւ. Եր նորա գիւղ, վաճառեաց և երեր գգինսն, Եւ ենան զնա աթտաքս և ասէ յնաւ հայեաց ընդ երկինս և թուեան զոստեզու, եթէ կարաօցես թուել զնոսաւ. Եւ նստաւ տապանն յեօթներդում ոմսեանն ի քսան և յեօթն ամսոյն ի լերինս Աբարատայ. Նիստ ընդ աջմէ իմմէկ. Եւ կոչեցեալ Պաւլոսի առ իւր զմի ի հարիւրապետացն, ասէ. Զպատանիս զայս տար առ հազարապետն, զի ունի ինչ պատմել նմաւ. Ենար կարկուտն յամենայն երկրին եղիպտացւոց զամենայն որ ինչ էր ի դաշտի, ի մարդոյ մինչև ցանասուն, և զամենայն բանջար որ ի դաշտի էր՝ ենար կարկուտն. Բացի զրերան իմ և խոսեցայ և ասեմ յայրն որ կայր յանդիման ինձ. Բացից առակօք զբերան իմ, բիւցից զծածկեալսն ի սկզբանէ աշխարհի. Թէ յարիցէ ի վերայ իմ ճակատամարտ, սակայն և յայսմիկ ի քեզ յուսացայ. Լուր, դուստը, և տես. խոնարհեցն զունկն քո, մոռա զտուն հօր քու իսկ այն մի էր որ որսացաւ ինձ օրս և երեր մատոյց. և կերայ յամենայնէ մինչև քո եկեալ եր.

Նրանց քո առաջը բերի. Հանիր կողովեցդ ինչ որ բերիք: Շնչ բերի, որ հանեմ. Զժամանեցի դարմանելու նրանց. Սերմանեցիք, դարմանեցիք, բայց արդյունքը չհանեցիք. Կզարնեմ մածունը և հարած մածունից կարագ կանեմ. Ես նստեցի, դու էլ արի մոտս նստիր. Կանչելով նրան և խոսելով նրա հետ՝ վեր հանեց բոլոր կաղանիքները. Կթրջեմ կոկորդս ցուրտ ջրով, բաց իւնեմ բերանս և կերգեմ նրա գովեստը. Քո բոլոր պետքերը հոգացի, հույսու ունեցաւ, որ քեզ լուկ կինչի և ջանացի, որ հա-

նես քո իդձերին. Որի՞ վրա հուսամ. Երկու նապաստակ և երեք ձագար որսացի, Եա յնծաց իմ գալու վրա. Իմացիք, թե այս տեղ ես և կմնաս միշտ այստեղ և մոռացիք քո տունը. Կրառնամ այն բեռները, և հետ կդառնամ. Բարձիք և դարձիք: Լցրեցի սրվակը և վակեցի. Գետին գցեցի. Կհենվեմ նրա վրա. Կարգա և տես: Դու էլ կկարգմաս, ինչ որ ես կարգացի. Խեղու տոթից, վեր կենամ և զրոսնեմ մի քիչ: Մի քիչ զբունելով դարձաւ տուն:

## Գլու 25

74. Աստ, անդ «այստեղ, այնտեղ» (գաղարում).

Այսր, այդի, անդը «գեսի այստեղ, գեսի այդտեղ» (շարժում).

Աստի, այտի, անտի «այստեղից, այդտեղից, այնտեղից».

Այս բառերը գործածվում են հաճախ «այս, այդ, այն» ցուցականների փոխարեն.

Եերգոյականի հետ՝ աստ, անդ.

Եախտդիկանի հետ՝ աստի, այտի, անտի. օրինակ՝

Ի քաղաքի աստ=ի քաղաքիս յայսմիկ.

Ի քաղաք անդր=ի քաղաքն յայն.

Ի քաղաք այդր=ի քաղաքդ յայդ.

Ի քաղաքէ աստի=ի քաղաքէս յայսմանէ.

Ի քաղաքէ անտի=ի քաղաքէն յայնմանէ.

Ի քաղաքէ այտի=ի քաղաքէդ յայդմանէ.

75. Ի նախդիրը անորոշ հայցականով հաճախ ունի գործիալանի իմաստ, երբեմն էլ նշանակում է «համար». ինչպես՝ Ազաղակեաց ի ձայն մեծ.

Լիցի ձեզ ի կերակուր, ի զրուան.

Անորոշ գերբայի հետ նշանակում է «համար, ժամանակ».

ինչպես՝

Եկեալ էմ ի լաել կամ առ ի լսել.

Ի տեսանելն զնա «երբ նրան տեսավ».

Ի լուսանալ «լվանալու համար կամ լվանալու ժամանակ».

Առ ի լուանալ բրդանալու համար»:

Կարելի է նաև սեռական հողովով՝ առ ի լուանալոյ բրդանալու համար».

### Հրահանգ 39

Եւ անտ կին մի Քանտնացի ի սահմանաց անտի նոցակեալ աղաղակը և տոէր, Խակ արդ մեզ յանապատի աստ ուստի իցէ այնչափ հաց՝ մինչ յագեցուցանել զայսչափ ժողովուրդ։ Եւ մինչեւ իշանէին ի լեռնէ տնտի. Զի ուր իցեն երկու կոմ երեք ժողովնեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա, ել ընդ առաւոստ ի վարձու անել զմշակու յայտի խւր, Ընդէր կայք տառ զօրս ցերեկ դատարկք, Եւ յելանելն նոցա յերիքովէ, գնացին զնեստ նորա ժողովուրդ բազումք, Եւ ի մտանելն նորա յերուսաղէմ, դղրդեցա քաղաքն ամենայն. Եւ հան արտաքս զամենեսին որ վաճառէին և գնէին ի տաճարի անդ, Թերեւս ամաշեցեն յորդոյ տատի իմմէ. Զի արդ պաշտիցեմք վարեդակն, որ մերթ կոչի իբրեւ զծառայ, առ ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ, եւ ընդ ժամանակու ժամանակու ի խաւար զանայ՝ տարի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից. Արդ բարիուքէ արեգակն և գեղեցիկ բնութեամք, և մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից՝ յօդուա և ի գարման, իբրեւ ճրագ մի ի մէծի տան ի մէջ ձեռուան և յատակի լուցեալ՝ առ ի զիստարն և զառուերն զերկուց մէծացն անօթոց ի բաց ի միջոց փարտաելոյ:

### Հրահանգ 40

Այս քաղաքում չկա մի մարդ, որ անգործ և գատարէ լինի. Նա հեռանալով այս քաղաքից՝ գնաց այն քաղաքը՝ բնակելու համար այնտեղ. Կթափառեմ այս ու այնտեղ. Վագեցին նրա մոտ լսելու համար նրան. Գալիս էիր այստեղ, գնում էիր այնտեղ, մնում էիր արբունք, հավաքում էինք այստեղից, այնտեղից, նրան գեղ էին խմել տալիս՝ փարատելու համար սըտից ցավերը, Գրելու ժամանակ երգում էր. Գոռում էր սարսափելլ գոշունով, Տվեց նրան օճտո՛ լվանալու համար ձեռքերը:

### ԴԱՍ 26

Կրավորական բայ

76. Աշխարհորարի մեջ կրավորական բայերի վերջավորությունը միշտ լինում է վել Գրաբարում զանազան է և ամեն մի լծորդություն ունի իր առանձին կրավորական ձևը. Այսպիսի՝

Առաջին լծորդության առաջին և երկորդ տիպարի բայերի ներգործականը վերածվում է կրավորականի՝ և վերջավորությունը դարձնելով ի և խօնարհելով երկորդ լծորդության պես. Օրինակ՝ սիրեմ—սիրիմ, հատանեմ—հատանիմ:

Երկորդ լծորդության կրավորականը նույնն է ներգործականի հետ. օրինակ՝ խօսիմ, ուսանիմ նշանակում են թե «խոսում եմ, սովորում եմ» (ներգործական), և թե «խոսվում եմ, սովորվում եմ» (կրավորական). Այս պատճառով էլ այս լծորդությունը հաճախ կոչվում է հասարակ:

Երրորդ լծորդության կրավորականը կազմվում է հետեւյալ ձևով.

1) Առաջին տիպարի մեջ ներկան, անկատարը, և արգելամանը նույնն են ներգործականի հետ, այսպես՝ աղամ, աղայի, մի՛ աղար, մի՛ աղայը նշանակում են թե «աղում եմ, աղում էի, մի՛ աղար, մի՛ աղաք», և թե աղացվում եմ, աղացվում էի, մի՛ աղացվիր, մի՛ աղացվեք»: Ապանին, կատարյալը և հրամայականը խոնարհում են երկորդ տիպարի պես. այսպես՝

կտր. աղացայ, աղացար, աղացաւ,  
աղացաք, աղացայք, աղացան,

տղ. աղացաց, աղացիս, աղացի,  
աղացուք, աղացիք, աղացին,  
հրամ. աղացիք, աղացարնուք:

Իսկ ստորագատականի մեջ և վերջավորությունը գարձնում էնք ինք՝ ինք ինչպես՝

աղայցիմ, աղայցիս, աղայցի,  
աղայցիք, աղայցիք, աղայցին.

2) Երկորդ տիպարի մեջ ամբողջ բայը, թե ներգործականը կրավորական խոնարհում է նույն ձևով, և միայն

ստորագասականի մեջ է, որ այս վերջավորությունը դառնում է շիմ, այսպես՝ գողանացիմ, գողանացիս, գողանացիւ, գողանացիմք, գողանացին:

Զորբորդ լծորզության կրավորականը կազմվում է հետևյալ ձևով.

1) Առաջին տիպարի մեջ ներկան, անկատարը, արգելուկանը և ստորագասականը նույնն են ներգործականի հետ, այսպես քողում, քողուի, մի՛ քողուր, քողուցում նշանակում են թե «Թողնում եմ, թողնում էի, մի թողնիր, թողնեմ», և թե «Թողնում եմ, թողնիր էի, մի թողնիր, թողնեմ».—Կատարյալը, ապահովին և հրամայականը խոնարհվում են երկրորդ տիպարի պիտականությունում:

կտր. թողայց թողար, թողու,  
թողար, թողայք, թողան.

ապ. թողայց, թողցիս, թողցի,  
թողցուք, թողջիք, թողցին.

հրամ. թողիք, թողարուք:

2) Երկրորդ տիպարի մեջ ամբողջ բայր, թե ներգործականը և թե կրավորական, խօսարնվում է նույն ձևով. Օրինակ՝ ընթեռում, ընթեռուի, ընթերցայ, ընթերցայ նշանակում են թե «կարդում եմ, կարդում էի, կարդացի, կկարդամ», թե «կարդացվում եմ, կարդացվում էի, կարդացվեցի, կկարդացվեմ»:

77. Անցյալ գերբայի կրավորականը միշտ նույնն է ներգործականի հետ և կազմվում է եաւ վերջավարությամբ. օրինակ՝ սիրեալ, հատեալ, քողեալ նշանակում են թե «սիրած, կտրած, թողած», և թե «սիրված, կտրված, թողնված», իսկ ապառնի գերբայի կրավորականը կազմվում է եաւ, -ալի, -իլ վերջավորությամբ, մինչ ներգործականը ունի ելոց, -ալոց, -ոց. օրինակ՝ սիրելի «սիրվելիք», հատելելի «կտրվելիք», աղալի «աղացվելիք», գոլանալի «գողացվելիք», քողի «թողնվելիք», ընթեռնելի «կարդացվելիք»:

78. Երբ ներգործականը և կրավորականը նույն ձեն ունեն, կարելի է զրանք զանազանել խնդրառությամբ. եթե բայի հետ գործածված է հայցական սեռի խնդիր, ուրեմն ներգործական է, իսկ եթե բացառական հոլովով մի խնդիր, ուրեմն կրավորա-

կան է. Օրինակ՝ սիրելի զնոսա «սիրում էի նրանց» (ներգործական), սիրելի ի նոցանէ «սիրվում էի նրանցից» (կրավորական):

## Հրահանգ 41

Մի դատիք, զի մի դատիցիք. զի որով դատապահնաւ դատապիք՝ դատեկուց էք. և որով չափով չափեց ձեզ. Ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ և որ բախէ՝ բացցի նմա. Ամենայն ձառ՝ որ ոչ առնէ պառող բորիք՝ հատանի և ի հուը արկանի. Վաղվագակի սրբեցաւ ի նմանէ բորսութիւնն. Եւ առա շարժումն մեծ եղեւ ի ծովան, մինչ նուին ձածկել յալյաց անտի. Ոչ արկանեն գինի նոր ի տիկս հինա. ապա թէ ոչ տիկըն պատառին և գինին հեղու. Քաջալերեաց, գուստը Փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ. Բացան աչք նոցա. Ռինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեցի, և գաղտնիք՝ որ ոչ ծանիցի. Բազում ծամանակս կեցցես և յաւելցին քեզ ամք կենաց. Զի ոչ անսաց հրամանին, յիրափ պատճեցաւ. Վարագիք՝ որ գագանագոյն է քան զամնայն գաղանս, ուտի միսն և ոչ վնասէ. Եթէ զարինն ոք ըմպիցէ՝ սատակի. Հանան մաքմինք նոցա ի գեղեցմանաց. Բժշկեցան վերք նորա. Այլ ոմն ողանաւ յաւազակաց:

## Հրահանգ 42

Նրա լեզվի կապերը արձակվեցին. Ապարտնքի գոները բացվեցին. Ռակին և արձաթը հանքերից են հանվում. Եաւ իր ոյգին ուղարկվեց. Նրանց անունները հիշատակարանների մեջ գրվեցին. Նրա գլուխը կտրվեց և բերվեց նրա տռած. Զէք ուզում մխիթարվելը. Քաջալերվեցեք ամենքդ. Ժողովուրդը բերդի մեջ տպակինեց. Կանչվեց և վերակացու կարգվեց երկու քաղաքի վրա. Սիրեց իրեններին և իրեններից սիրվեց. Այս բոլորը ձեզ թողնվեց. Այն համակները բարձր ձայնով կարդացինեցին. Շատ երին կհաղթես, բայց հետո կհաղթվես. Եթե սիրես քո որդիներին և ինսամեն նրանց, նրանք էլ քեզ կսիրեն և կիսնամեն քո ծերության օրը. Հողը գնվեց, հիմքը դցվեց, շենքը շինվեց, չորս կողմը ընդարձակ պարտեղ տնկվեց և չքեղ զարդերով զարվարվեց.

## Առ նախդիրը

79. Առ նախդիրը սեռական, երբեմն էլ հայցական կամ՝ բացառական խնդրով նշանակում է «համար, պատճառություն», և աշխարհաբարում թարգմանվում է բացառական հոլովով. օրինակ՝

Առ անի «վախից», առ նախանձու «նախանձից», առ երկիրդի «վախից, երկյուղից», առ ամօրոյ «ամօթից», առ սկը ք «քո սիրո համար», առ չգիտան «չիմանալուց», առ տանել «տանելուց», առ ի չզոյլ «չգանգելուց, չլինելուց».

80. Առ նախդիրը տրականով ցույց է տալիս մոռը (գաղարում), իսկ անորոշ հայցականով՝ դեպի, մոռը (շարժում). օրինակ՝ եկայք առ իո. գնաց առ արքայն. առաքեցի զնա առ եղրայր իւր. առ գրան խորանին, առ հօր իւրում. եկաց առ նմա. առ առն իւրում:

81. Առ նախդիրը գործիական խնդրով նշանակում է՝ 1) ժամանակ, 2) մոռավը, 3) համեմատությամբ. օրինակ՝ առ Սոլոմոնին «Սոլոմոնի ժամանակ», առ Տրդատաւ «Տրդատի օրով», առ կենդանութեամբ «կենդանության ժամանակ», առ նովաւ «նրա օրով», առ եզերք զետոյն «գետի եզերգով», առ լեռամբ «լեռան մոռով», առ ափամբ «ափի մոռով», առ կաղնեան «կաղնու մոռով», առ ցորենով «ցորենի հետ համեմատած», առ այնու «նրա հետ համեմատած»:

## Հրահանգ 43

Ած զնա առ Ագամ. Առ այլ քո գարձիր: Մտին առ նա: Դարձաւ անդրէն առ նա: Առ զնա անդրէն առ իւր: Մտաեան առ նա ամենեքեան: Առ սէր քո արքի: Ո՞ր ի ձէնչ առ հոգալ իւրում յաւելու կարիցէ ի հասակ իւր կանգուն մի: Առ չմուծել ծախիցն փախուական եղի: Զայս արարէք առ իմոյ յիշատակի: Մտեալ է առ Սիմոնի ուժեմն: Առ նմա ագան զայն օր: Ամբաստան եղեն առ արքայի: Առ առակէ շրջեցուցանէին: Առ կենդանութեամբ առն իւրոյ: Առ եղիսէիւ մարգարէիւ: Զինչ է յարդ առ ցորենով: Արդարացաւ ապստամբութիւնն իսրայելի առ ապստամբութեամբն Ցուղայ: Ոչ առ տանել ինչ առեմ զայս: Ոչ յայտնեաց զանձն առ երկիրդի: Շիկնէր առ ամօթոյ:

82. Յ նախդիրը, որ նշանակում է «մինչև», ունի երկու գործածություն. ա) զրվում է մինչև բառից հետո՝ հաջորդ գոյացանի վրա. ինչպես՝ մինչև ցկամուրջն, մինչև ցնա, բ) գործածում է ասեմ, հարցանեմ, տամ՝ բայերի հետ՝ տրականի փոխարեն. օրինակ՝ ասէ նմա—ասէ ցնա, տային նոցա—տային ցնոսա, հարցի նմա—հարցի ցնա:

83. Զ նախդիրը դրվելով բացառականի վրա՝ կազմում է պատմական հոլով, որ նշանակում է «մասին», վրա, վերաբերմամբ». օրինակ՝ զիացէ «հացի մասին», զբաղաքէ, զգեաոյ, զգեաց, զումբէ, զինել «իմ մասին», զնմանէ, զաւանէ, զայմանէ «այս տան մասին»:

84. Աւել «բռնել» և կախել բայերը ստանում են պատմական հոլովը խնդիր. օրինակ՝ սւնէր զձեռանէ նորա. կալաւ զփողիցն. կախեալ կայ զծառոյն. կախեաց զփայտէ:

85. Զ նախդիրը դրվելով գործիականի վրայ՝ կազմում է պարառական հոլով, որ նշանակում է. ա) շուրջը, բոլորտիքը, բ) մոռավորապես այն ժամանակ. ինչպես՝ զբաղաքաւ «քաղաքի բոլորտիքը», զպարսազրօք «պարխապների շուրջը», զինել «շուրջս», զինել ծամու «մոռ ժամը իննին», զմիջօրէիւ «կեսօրվան ժամանակները»:

86. Արկանել «գցել» և ածել «կապել, պատել» բայերը ստանում են պարառական հոլով. օրինակ՝ Արկցես զնադերձս քո զձեւ. Առեր գանդերձն գեղեցիկ և արկեր զնոքօք. Ած զորմով տանն պատուալս. Ածին փոսն զբանական:

87. Զ նախդիրը բացի հայցական սեռի խնդրից՝ կազմում է նաև հայցական ընութեան խնդիր, որ նշանակում է չափ, ժամանակ, ձեւ, եղանակ. ինչպես՝ զաւուր հինգ զմղոնն երիս. խօսեցաւ զայս օրինու:

## Հրահանգ 44

Կալաւ զձեռանէ նորա: Տեսեալ զծողովուրդս բազումս զիւրե հրամայեաց երթալ յանկոյս. Եւ մատուցեալ զպիր մի ասէ ցնա. Եւ ասէ ցնոսա. Երթայք. Եւ անա մատուցեալ առ նա անդամայոյն մի. Ասէ ցանդամալոյն. Ասեն ցանդակերտս նորա. Եւ կոյոյն մի:

չեցեալ առ ինքն գերկոտասանհօին աշակերտուն իւր երթայք տուաւել առ ոչխարսն կորուսեալս տանն իսրայելի: Աղջոյնն ձեր առ ձեզ դարձցի: Ոչ է աշակերտ տուաւել քան զվարգապետ իւր շատ իցէ աշակերտին եթէ եղիցի իրու զվարդապետ իւր: Ակաւ տսել ցժողովուրդն զՅովնաննէ: Յաւուրցն Յովնաննու մինչեցայժմ: Երկինք որչափի ի վեր են՝ գոյնչափի ի խոնարհ են, և դոյնչափի յամենայն կողմանց շուրջ զերկրաւ: Ճառագայթք արեգական կանուէն կախեալ կան: Մինչև ցքարինս և ցփայտու և ցծառս և ցարմատս խոտոյ անգամ: Աղարուք տստ դայս գիշեր: Առ մեզ ազիր, զի ընդ երեկս է: Եղի անձրի ի վերայ երկրի զքառասուն տիւ և զքառասուն գիշեր: Զվեց օր զործեցես և տրացեն զամենայն զպոթս քու եւ զինն ժամտուն զոչեաց ի ձայնն մեծ և տսէ:

### ԱԱՅ 29

#### Ընդ և ըստ նախողիբները

88. Ընդ նախողիբը սեռական խնդրով նշանակում է «փոխարքեն, մեկի տեղ»: օրինակ՝ ընդ նորա «նրա փոխարքեն», ընդ եղրօր իւրոյ չիր եղբար փոխարքեն», ընդ մեր և ընդ մեր «մեր և ձեր փոխարքեն»:

Ընդ նախողիբը եղակի տրտկան և հոգնակի անորով հայցական ինդրով նշանակում է «հետը»: օրինակ՝ ընդ նմա «նրա հետ», ընդ նոսա «նրանց հետ», ընդ եղրօր իմում «եղբարս հետ», ընդ եղբարս իմ «իմ եղբարյների հետ», բայց՝ ընդ իս «ինձ հետ»:

Ընդ նախողիբը հայցական խնդրով նշանակում է «միջով, վրա, տարածությամբ»: օրինակ՝

Եմուտ քարն ընդ սաղուարտն ի ճակատն: Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր: Կապեաց զջորին ընդ մացառն: Համբաւ քաջութեանն ընդ ամենայն կողմանս ընթանայր: Երանիցէ ընդ ոնդունս ձեր: Արէ շոջեաց ընդ երկիրդ:

Ընդ նախողիբը հայցական խնդրով կրկնվելով նշանակում է «մեջակղը»: օրինակ՝ մի լիցի կոիւ ընդ իս և ընդ քեզ: Կախեալ էր ընդ երկինս և ընդ երկիր:

Ընդ նախողիբը գործիական խնդրով նշանակում է «տակը», ինչպես՝ նստէր ընդ ծառովն: ունիմ ընդ ինս զինուորս: Հնա-

զանդ լեր ընդ ձեռամբ նորա: ընդ իշխանութեամբ: ընդ հո-  
վանեաւ, ընդ յարկաւ իմով:

89. Ըստ նախողիբը տբական խնդրով նշանակում է «համե-  
մատ»: օրինակ՝ ըստ նմա, ըստ բանի քում:

Ըստ նախողիբը հայցական խնդրով նշանակում է «մի տեղից  
այն կողմ»: օրինակ՝ անցին ըստ կետն: Ելին ըստ քաղաքն:

### Հարահանգ 45

Խոնեցաւ ընդ նոյի և ընդ որդիս նորա՝ որ ընդ նմա էին և տսէ: Եւ ահաւասիկ ես հաստատեմ զուխտ իմ ընդ ձեզ և ընդ զաւակի ձերում և ընդ ամենայն շնչոյ կենդանւոյ՝ որ ընդ ձեզ զաւակի ձերում և ընդ ամենայն շնչոյ կենդանւոյ որ է ընդ ձեզ, և ի մէջ ամենայն շնչոյ կենդանւոյ որ է ընդ ձեզ, եղիցի ի նշա-  
նակ յաւիտենական ուլստին ընդ իս և ընդ ամենայն երկիր: Եւ յիշեցից զուխտ իմ որ ընդ իս և ընդ ձեզ և ի մէջ ամենայն շնչոյ կենդանւոյ: Երեք սոքս էին որդիք նորա և ի սոցանէ սիսեցան ընդ ամենայն երկիր: Դէպ եղեւ քահանայի միոց իշտ-  
նել ընդ նոյն ճանապարհ: Եկեալ ընդ նոյն անգի, եսկս և զանց արար: Արացես ըստ իմաստութեան քում: Ննջեաց Դաւիթ ընդ հարս իւր և թաղեցաւ ի քաղաքի, Թաղաւորեաց որդի նորա ընդ նորա, Ոչ զոյ ըստ նմա մարդ արդար: Որ շատ խօսի, սպա-  
քէն ըստ նմին և լիցէ: Ըստ ընութեան զութս և ըստ ծնողաց խնամս անցանէ մարդասիրութիւն նորա: Անցանէ ըստ բլուրս և ըստ արձանս ըստ այս: Զարմանային ընդ վարդապետութիւն նորա: Զավասչիք ընդ ձառովկա:

### ԱԱՅ 30

#### Հարաբերական դերանուն

90. Անչպես աշխարհաբարում, նոյնապէս և գրաբարում որ:  
Հարաբերական դերանունը կազմում է հարաբերական նախո-  
գասություններ:

Աշխարհաբարում շատ սովորական է ող և ած վերջավո-  
րությամբ դերայների գործածությունը: Գրաբարում սրանք

մերտածվում են հարաբերականի. օրինակ՝ տեսնող ժարով—այլուն  
որ տեսի. իմ տեսոծ ժարովը—այրն զոք տեսի:

Այս բառը, որի համար զրգած է հարաբերականը, կոչվում  
է հարաբերյալ. օրինակ վերի խոսքերի մեջ այրն հարաբերյալ է.

91. Հարաբերյալը սովորաբար զրգում է հարաբերականնից  
առաջ, սակայն երբեմն կարող է նաև հետո դրվել. օրինակ՝  
արքն որ տեսին զնոսա—որ տեսին զնոսա արքն.

92. Եթեմն հարաբերյալը զորությամբ է իմացվում, և այն  
ժամանակ որ հարաբերականին անմիջապես հաջորդող բառի  
վրա զրգում են ս, դ, և գիմորաշները, հետեւյալ ձևով.

Ս զրգում է ես, սա, այս բառերի և նրանց հոգնակիների  
տեղ:

Դ զրգում է դու, դա, այդ բառերի և նրանց հոգնակինե-  
րի տեղ:

Ն զրգում է նա, այն բառերի և նրանց հոգնակիների տեղ.  
օրինակ՝

Ես որ խօսիմ ընդ քեզ=որ խօսիմ ընդ քեզ

Եցո զոք տաեմ=զոք տաեմ:

Ետ որ տատ է=որ տատ է:

Եռքա որ խօսին=որ խօսին:

Դու որ տեսեք=որ տեսեք:

Եյդ զոք գու տանես=զոք գու տանես:

Նա որ շարժի և փոփոխի=որ շարժին և փոփոխի:

Եցն որ սիրէ=որ սիրէն:

Եռքա որ սիրեն=որ սիրեն:

93. Հարաբերականը կարելի է կապել հարաբերյալի հետ  
երեք ձևով. ա) նախադասելով հարաբերյալը՝ որին հետեւմ է  
հարաբերականը. բ) հարաբերյալը դնելով առաջ, որից հետո հա-  
րաբերյալը. գ) հարաբերյալը իմանալով զորությամբ և նրա հո-  
լովը առաջ հարաբերականին. Օրինակ՝

ա) Տներ նմա, որ խնդրէ ի քէն.

բ) Որ խնդրէ ի քէն՝ տուր նմա.

գ) Որում խնդրէ ի քէն՝ տուր.

4լում՝

ա) Հնչեսցեն երկոքին ականջք նոցա, որ լսիցեն զայս.

բ) Որ լսիցեն զայս՝ հնչեսցեն երկոքին ականջք նոցա.

գ) Որոց լսիցեն զայս՝ հնչեսցեն երկոքին ականջք:  
Ըստ այսմ՝ հարաբերականը կարող է հոլովվել բոլոր հոլով-  
ներով. ինչպես՝ ուղղ. որ խնդրէ, սեռ. որոյ խնդրէ, տը. որով  
խնդրէ, հայց. զոք խնդրէ, բաց. յորմէ խնդրէ, գործ. որով խնդրէ,  
խնդրէ, հայց. զոք խնդրէն, որոց խնդրեն, յորոց խնդրեն,  
հոգ. որք խնդրեն, զոքս խնդրեն, որոց խնդրեն, յորոց խնդրեն,  
որովք խնդրեն, ոյն է՝ աշխարհաբար «ուզողը, ուզողի, ուզողին,  
ուզողից...»

## Հրանանգ 46

Որ պարզես ի տեսոնէ կամ ձիք ի բարեկամէ տանուցու, ո-  
ինչ չարութիւն գործէ, իսկ որ բանաբար յանաւագէն հանիցէ,  
չարութիւն գործէ. Քանզի որում իցէ ոք, այն յորում էն, քան  
զայն որի նմա էն, մեծ գտանի, զի բաւական եղեւ տանել բո-  
լուր զնա: Որ ածն ի չպոյէ ի գոյ զչոյսն: Որ ոչ լուիցէ ուն-  
կամք՝ լուիցէ թիկամք: Ո՞հ որոց թողեալ իցէ զանապարհու-  
հառակիզ գնալ ի ճանապարհու խաւարինս, որոց թիւր իցեն ճա-  
նապարհու իւրեանց և կամակոր շաւիղք նոցա: Որ հատուցանէ  
շար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեցէ:

## ԲԱՍ 31

### Ածականի ասախեանները

94. Ածականի բաղդատական աստիճանը կազմելու համար  
ունենք չորս ձև. ա) հավասարության աստիճանը ցույց տալու-  
համար դնում ենք պարզ ածականը, որ միացնում ենք գոյա-  
կանի հետ իբրև զ նախագրությամք. օրինակ՝ խորագէտ իբրև  
զօձ և միամբ իբրև զաղաւնի. բ) առավելության համար պարզ  
ածականը կապում է գոյականի հետ քան զ նախագրությամք.  
օրինակ՝ մեծ քան զնա. գ) կարելի է ավելացնել նաև եւս բա-  
ռք. օրինակ՝ մեծ ես է քան զնա. դ) կարելի է նաև ածականի վըա-  
տիկացնել զոյն մասնիկը. օրինակ՝ իմաստագոյն է քան զնա.

95. Գերադրական աստիճանը կազմելու համար պարզ  
ածականի վրա դնում ենք յոյժ, կարի, անհնարին և նման բա-  
ռեր. Ամենա-ձեզ գերադրական չի համարվում ընտիր գրաբարի  
մեջ և տմեն բառի համար սովորական չէ:

Կարի չար առնէ: Եւ էր հեծելազօրն կարի յոյժ: Կարի զօրաւոր են յոյժ: Կարի զօրաւորագոյն քան զմեղ եղեր: Մի կարի արդար լինիր: Զմնչ առաւելագոյն ունէր քան զառաքեալսն: Աչ է աշակերտ առաւել քան զվարդապետ իւր: Արոց իրը լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի: Ոչ է ծառայ մեծ քան զաէր իւր և ոչ առաքեալ՝ մեծ քան զայն որ առաքեացն զնս: Մեծ ևս ինչ ուրախութիւն քան այս ոչ ունիմ: Յայնժամ երթայ և առնու ընդ իւր եօթն այլ այսու շարագոյնու քան զինքն և մտեալ բնակէ անդ: և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջնն: Մեծ ևս քան զայս ուր ոչ ոք ունիցի: Մեծամեծս ևս քան զայնու ցուցանէ նմա զգործս: Ցուցանիմք թէ ևս քաջ պատերագմող է ձի քան զնա և վարագ ևս զօրագոյն և նապաստակ առաւել ևս արագագոյն և սիրամարդ կարի ևս գեղագոյն և փոր բնու իսկ քաջաձայն և փիզ յայժ յաղթանդամ և արծուի քաջատեսն ամենայն իսկ թոշունք ևս առաւել մեծատունք են քան զնա:

## ԴԱՍ 32

96. Ածականները ստանում են զանազան հոլովով խնդիրներ: օրինակ՝ հաւասար նորին, հակառակ նմա, հիւթաբեր ի պէտս նորա, կարօտ իւիք, կարօտ յիմաստութենէ, կարօտ խրատու, մերկ ի հանդերձից, լի շնորհօք, պատրաստ ի կորիւ, ազատ ի կարեաց և այլն:

97. Թվական ածականները և քանակություն ցույց տվող մի խումբ բառերի հոգնակիները, ինչպես նաև անորոշ ածականները (ոմն, ոմանք, այլք, ո՞վ) ստանում են բացառական հոլովով խնդիր: օրինակ՝ մին ի նոցանէ, հինգն ի նոցանէ, բազումք յաշակերտաց նորա, ոմանք ի մէնջ, այլք ի բարեկամաց նորա, կսք ի նոցանէ, շատք յանասնոց և այլն:

98. Նախադրությունները ստանում են զանազան հոլովներով խնդիրներ: ինչպես

առաջի նորա	յանդիման նորա
դնեմ՝ զինի իմ	հանդէպ մեր
ի պերտ սեղանոյ	ընդդեմ նորա

յետոյ դրանն	հակառակ նմա
ի մէջ նոցա	մինչեւ ի գուռն
արտաքոյ սրահին	շուրջ զնովաւ
ի ներքոյ դրանն	ի ձեռն նորա
առընթեր նմա	հանդերձ ընտանեօք
հեռի ի նմանէ	
մերձ ի քաղաքն	
դէպ յարեւելս	

99. Եմ էական բայր երբեմն գտանում է չեզոք և նշանակում է «կա»: օրինակ՝ են աստ արք երկու, էր ի տեղուջն յայնմիկ պարտէզ: Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խորդից: անդ էին թակոյլիք կճեայք վեց:

100. Էական բայր սեռական խնդրով նշանակում է ունենալ: օրինակ՝ Առն միոջ էին երկու որդիք: Են իմ երկու գոտերք: Եղեն նորա ուստերք և գստերք:

101. Կոչականից հետո հաճախ դրվում է դու, եթե կոչականից առաջ ածական կա՝ ստանում է դ, իսկ եթե կոչականը ունի հատկացոցիչ, կոչականն է ստանում դ գիմորշը: օրինակ՝ կին դու, չի է հասեալ ժամանակ իմ,

Ե՛կ, արքայդ Պարսից.

Լուր, սուրբդ Քրիգոր:

102. Հատուկ անունների վրա դրված ածականները, որոնք ըստ օրինի կարող են թե առաջ, և թե հետո դրվել երկու զեպքումն էլ համաձայնում են հոլովով: առաջ դրված զեպքում ստանում են և հոգը, իսկ հետո դրված զեպքում հոդ չեն ստանում: ինչպես:

Թաջն Վարդան, Վարդան քաջ.

Մեծն Տիգրան, Տիգրան մեծ:

Սուրբն Մեսրոպ, Մեսրոպ սուրբ:

Երանելին Տրդատ, Տրդատ երանելի:

Մեծին Սահակայ, Սահակայ մեծի:

Բաջին Վարդանայ, Վարդանայ քաջի:

Մեծաւ Սահակաւ, Սահակաւ մեծաւ:

Թաջին Վարդանու, Վարդանու քաջի:

103. Երբ որևէ բառ ունի բացահայտիչ, այդ բացահայտիչը  
թվով և հորովով համաձայնում է բացահայտյալի հետ. ինչպես՝  
առ ընդ իւր զՊետրոս և զորդիսն Որոտման, զՅակուրոս և զՅով-  
հաննէս.

104. Ենթակայի ստորագելին սովորաբար լինում է ուղղա-  
կան. օրինակ՝ դու մէծ ես. Բայց հաճախ, երբ ստորոգելին գո-  
յական է, դրվում է նախզրիվ հայցական. օրինակ՝ եղէց ձեզ ի-  
հայր և դուք եղիջիք ինձ յորդիս:

Առենի, անուանենի, զնենի, կարգեն, կոչեն, ուսուցանեն բայերի  
հետ եթե կա մի սեռի խնդիր, որ ունի ստորոգելի, այդ ստո-  
րոգելին գրվում է անորոշ հայցական հոլովով. օրինակ՝ Կոչեցի  
զձեզ բարեկամու. Զմեզ եղիք պատճառս աւելածու:

### ԳԱՍ 33

#### Պակասավոր բայեր

105. Պակասավոր են կոչվում այն բայերը, որոնց միայն  
մի քանի ժամանակներն են զործածական. դրանք հետեւյալ-  
ներն են.

ա) Գոմ, գոս, գոյ, գոմք, գոյք, գոն.  
գոյի, գոյիր, գոյր, գոյաք, գոյիք, գոյին.  
գուցէ (միայն ստոր. եղ. դ դեմք).

բ) Գոզեմ «ասում եմ» (անկործածական).  
հրամ, գնգ, գոզջիր, գոզլք.  
ապ. գոզցես, գոզցուք, գոզջիք, գոզցեն.

գ) Բամ «ասում եմ».  
ներկ. բամ, բաս, բայ, բամք, բան  
հրամ. բամ.

(Ես բայը անկախ չի զործածվում, այլ միշտ ասեմ բայի  
հետ. օրինակ՝ ասացի բամ, ասացեր բաս, բայ ասէ,  
ասեն բան, ասեմք բամք, ասեն բան):

#### Անցողական բայեր

106. Կազմում ենք կատարյալի առաջին գեմքի վերջին ձայ-  
նավորը հանելով և տեղը դնելով -ուցանեմ. օրինակ՝

Ննջեմ ննջեցի ննջեցուցանեմ  
անցանեմ անցի անցուցանեմ  
աշխատիմ աշխատեցայ աշխատեցուցանեմ  
խաղամ խաղացի խաղացուցանեմ  
ընում լցի լցուցանեմ  
զգենում զգեցայ զգեցուցանեմ  
հատանեմ հատի հատուցանեմ  
Անկանոն կազմություն անեն՝

կորչնիմ—կորուսանեմ

փլանիմ—փլաւզանեմ

107. Անցողական բայը խոնարհում է հետեւյալ ձևով.  
ներկ. հատուցանեմ, հատուցանես...  
անկ. հատուցանէի, հատուցանէիր...  
կտր. հատուցի, հատուցեր, հատուց,  
հատուցաք, հատուցէք, հատուցին.  
ապ. հատուցից, հատուցես, հատուցէ,  
հատուցուք, հատուցչիք, հատուցեն.  
հրամ. հատն, մի հատուցաներ,  
հատուցէք, մի հատուցանէք.  
ստոր. հատուցանիցեմ, հատուցանիցն...  
զերը. հատուցանիլ, հատուցեալ, հատուցանելոց:

108. Եռոյնի կրավորական ձեղ.

ներկ. հատուցանիմ, հատուցանիս...

անկ. հատուցանէի, հատուցանէիր...  
կտր. հատուցայ, հատուցար, հատուցաւ,  
հատուցաք, հատուցայք, հատուցան.

ապ. հատուցայց, հատուցիս, հատուցի,  
հատուցուք, հատուցչիք, հատուցին.  
հրամ. հատուցիր, մի հատուցանիր,  
հատուցանուք, մի հատուցանիք.

ստոր. հատուցանիցիմ, հատուցանիցիս...

զերը. հատուցանիլ, հատուցեալ, հատուցանելի.

109. Անցողական կարելի է կազմել նաև ամ բայի հարա-  
յրությամք. օրինակ՝ Ետ նմա ըմպել Տաց քեզ ձաշակել. Տնւր  
ընթեռնույ զդիրդ.

Անկանոն բայեր

110. Հնդհանրապես անկանոն բայերի կատարյալը, ապառչին, հրամայականը և անցյալ դերբայն է՝ որ զարտուզում են սովորական կանոնից:

Այստեղ տալիս ենք բոլոր անկանոն բայերի խոնարհումը (այլուրինական կարգով),

1) Առնեմ «անում եմ».

Ներկ. առնեմ, առնես... անկ. առնէի...

Կտր. արարի, արարեր, արար,

արարաք, արարէք, արարին.

ապ. արարից, արարես, արարց,

արարցուք, արարչիք, արարցն.

հրամ. արա, մի առներ, արարէք, մի առնէք.

ստոր. առնիցեմ, առնիցիս...

գերբ. առնել, արարեալ, առնելոց:

## Կրավորական

Ներկ. առնիմ... անկ. առնէի...

Կտր. արարայ, արարար, արարաւ, արարաք, արարայք,  
արարան.ապ. արարայց, արարշիս, արարց,  
արարցուք, արարչիք, արարցն.

հրամ. արարչիք, մի առնիր, արարչիք, մի առնիք.

ստոր. առնիցիմ, առնիցիս...

գերբ. առնիլ, արարեալ, առնելի:

2) Ասեմ.

Ներկ. ասեմ... անկ. ասէի, կտր. ասացի, ապ. ասացից,  
հրամ. ասա, գերբ. ասացեալ.—կրավ. ասիմ, ասէի, ասացու,  
ասացայց...

3) Գամ.

Ներկ. գամ, գաս, գայ, գամք, գայք, գան.

անկ. գայի, գայիր, գայը...

Կտր. եկի, եկիր, եկն, եկաք, եկոյք, եկին.

ապ. եկից, եկեսցես, եկեսցէ, եկեսցուք, եկեսչիք, եկեսցեն.  
հրամ. եկ, մի գար, եկայք, մի գայք.  
ստոր. գայցեմ, գայցես...

գերբ. գալ, եկեալ, գալոց.

4) Գիտեմ.

անկ. գիտէի, կտր. գիտացի, ապ. գիտացից, հրամ. գիտա,  
շերբ. գիտել, գիտացեալ, գիտելոց:

5) Գնեմ.

Ներկ. գնեմ... անկ. գնէի...

Կտր. եղի, եղիր, եղ, եղաք, եղիք, եղին.

ապ. եղից, գիցես, գիցէ, գիցուք, գիջիք, գիցեն.

հրամ. գիր, մի գներ, գիք, մի գնէք.

ստոր. գնիցեմ, գնիցես...

գերբ. գնել, եղեալ, գնելոց:

Կրավորական

Ներկ. գնիմ... անկ. գնէի...

Կտր. եղայ, եղար, եղաւ, եղաք...

ապ. եղայց, գիցիս, գիցի, գիցուք, գիջիք, գիցին.

հրամ. եղիջիր, մի եղնիր, եղարնէք, մի գնիք.

ստոր. գնիցիմ, գնիցիս...

գերբ. գնիլ, եղեալ, գնելի:

6) Եղանիմ «Եինում եմ».

Ներկ. եղանիմ... անկատ. եղանէի...

Կտր. եղէ, եղեր, եղն, եղաք, եղէք, եղին.

ապ. եղէց, եղիցիս, եղիցի, եղիցուք, եղիջիք, եղիցին.

հրամ. եղիջիր, մի եղնիր, եղերնէք, մի եղանիք.

ստոր. եղանիցիմ, եղանիցիս...

գերբ. եղանիլ, եղեալ, եղանելոց:

7) Երբամ.

Ներկ. երթամ... անկ. երթայի...

Կտր. չոգայ, չոգար, չոգաւ, չոգաք...

ապ. երթայց, երթիցես, երթիցէ...

հրամ. երթ, մի երթար, երթայք, մի երթայք.

66

67

Կրավորական

ստոր. երթայցեմ...  
դերը. երթալ, երթեալ, երթալոց.

8) Երկնչիմ «վախենում» եմ».

Ներկ. երկնչիմ... անկատ. երկնչիմ...

կտր. երկեայ, երկեար, երկեաւ,

երկեաք, երկեայք, երկեան.

ապ. երկեայց, երկեցես, երկիցէ,

երկեցուք, երկիջիք, երկեն.

հրամ. երկիք, մի երկնչիք, երկերուք, մի երկնչիք.

ստոր. երկնչիցիմ...

դերք. երկնչիլ, երկուցեալ, երկնշևոց.

Այս ձևով են խոնարհվում թագչիմ, թռչիմ, հանգչիմ, մատչիմ, մարտնչիմ, փախչիմ, մարտչիմ, կրթչիմ, հարթչիմ (վախից վեր ցատկեմ) և այլն, որոնք բոլորն անհն ոչ արժատական չ-

9) Զարքնում «զարթնում եմ».

Ներկ. զարթնում... անկ. զարթնուի...

կտր. զարթեայ, զարթեար, զարթեաւ,

զարթեաք, զարթեայք, զարթեան.

ապ. զարթեայց, զարթիցես, զարթիցէ,

զարթիցուք, զարթիջիք, զարթիցն.

հրամ. զարթիք, մի զարթնուր, զարթիք, մի զարթնուք.

ստոր. զարթնուցում...

դերք. զարթուլ, զարթուցեալ, զարթնոց.

Այս ձևով են խոնարհվում այսնու «ուռչել», երդենու, ոսանու ցատկել», ցանու «բարկանալ», քաղցնու «քաղցածանալ», փախնու «փախչել»:

10) Ըմպիմ «խմում եմ».

Ներկ. ըմպեմ... անկ. ըմպէի...

կտր. արբի, արբեր, արբ կամ էտր,  
արբաք, արբէք, արբին.

ապ. արբից, արբցես, արբցէ,

արբցուք, արբջիք, արբցին.

հրամ. արբ, մի ըմպեր, արբէք, մի ըմպէք.

ստոր. ըմպիցիմ...

դերք. ըմպել, արբեալ, ըմպելոց.

Կրավորական

Ներկ. ըմպիմ... անկ. ըմպէի...

կտր. արբայ, արբար, արբաւ, արբաք, արբայք, արբան.

ապ. արբայց, արբցիս, արբցի,

արբցուք, արբջիք, արբցին.

հրամ. արբիք, մի ըմպեր, արբերուք, մի ըմպիք.

ստոր. ըմպիցիմ...

դերք. ըմպել արբեալ, ըմպելի.

11) Լինիմ «լինում եմ».

Ներկ. լինիմ... անկ. լինէի...

կտր. եղէ, եղեր, եղեւ, եղէք, եղեն,

ապ. լիցիմ, լիցիս, լիցի, լիցուք...

հրամ. լիր, լիջիք, մի լինիր, լիրուք, լիջիք, մի լինիք.

ստոր. լինիցիմ...

դերք. լինել, լիրեալ, լինելոց.

12) Լսեմ «լսում եմ».

Ներկ. լսեմ... անկ. լսէի...

կտր. լուայ, լուար, լուաւ, լուաք, լուայք, լուան.

ապ. լուայց, լուիցես, լուիցէ,

լուիցուք, լուիջիք, լուիցն.

հրամ. լուր, մի լսեր, լուարուք, մի լսէք.

ստոր. լսիցիմ...

դերք. լսել, լուեալ, լսելոց.

Կրավորական

Ներկ. լսիմ... անկ. լսէի...

կտր. լսելի եղէ, լսելի եղեր...

ապ. լսելի եղէց, լսելի եղիցիս...

հրամ. լսելի լիր, մի լինիր լսելի,

լսելի լիրուք, մի լինիք լսելի.

ստոր. լսիցիմ, կամ լսելի լինիցիմ...

դերք. լսելի լինել, լսելի լիալ, լսելի.

13) Կամ «կանգնում եմ, մնում եմ».

Ներկ. կամ, կայ, կամք, կայք, կան,

անկ. կայի, կայիք, կայը, կայաք...

կտր. կացի, կացեր, կաց, եկաց,  
կացաք, կացէք, կացին.

սպ. կացից, կացես, կացցէ,  
կացցուք, կացջիք, կացցեն.

հրամ. կաց, մի կար, կացէք, մի կայք.

ստոր. կայցեմ, կայցես, կայցէ...

գերբ. կալ, կացեալ, կալոց:

14) Կարեմ «կարող եմ», կարողանում եմ».

ներկ. կարեմ... անկ. կարէի...

կտր. կարացի, կարացեր...

սպ. կարացից, կարացես...

հրամ. չունի.

ստոր. կարիցեմ, կարիցես, կարիցէ...

գերբ. կարել, կարացեալ:

15) Կեամ «ապրում եմ».

ներկ. կեամ, կեաս, կեայ, կեամք, կեայք, կեան.

անկ. կէի, կէիր, կեայը, կեաք, կէիք, կէին,

կտր. կեցի, կեցեր, կեաց (եկեաց), կեցաք, կեցէք, կեցին.

սպ. կեցից, կեցցես, կեցցէ, կեցցուք, կեցջիք, կեցցին.

հրամ. կեաց, մի կեար, կեցէք, մի կեայք.

ստոր. կեցցեմ, կեցցես...

գերբ. կեալ, կեցեալ, կելոց:

16) Ճանաշեմ «ճանաչում եմ».

ներկ. ճանաշեմ... անկ. ճանաչէի...

կտր. ծանեայ, ծանեալ, ծանեաւ,

ծանեաք, ծանեայք, ծանեան.

սպ. ծանեայց, ծանիցես, ծանիցէ...

հրամ. ծանիք, մի ծանաչէք, ծաներնուք, մի ծանաչէք...

ստոր. ճանաշիցեմ...

գերբ. ճանաշել, ծանուցեալ, ճանաշելոց:

### Կրավորական

ներկ. ճանաշիմ... անկ. ճանաշէի...

կտր. ծանօթ եղէ, ծանօթ եղեր...

սպ. ծանօթ եղէց, ցանօթ եղիցիս...

հրամ. ծանօթ լեր, մի լինիք ծանօթ,

ծանօթ լերնոք, մի լինիք ծանօթ.

ստոր. ճանաչիցիմ կամ ծանօթ լինիցիմ...

գերբ. ծանօթ լինել, ծանօթ (լեալ), ճանաչելին

17) Մեղանշեմ «մեղք եմ գործում».

ներկ. մեղանչեմ... անկ. մեղանչէի...

կտր. մեղայ, մեղար, մեղաւ, մեղաք...

սպ. մեղայց, մեղիցես, մեղիցէ,

մեղիցուք, մեղիջիք, մեղիցեն.

հրամ. մեղիք, մի մեղանչեր,

մեղարնոք, մի մեղանչէք.

ստոր. մեղանչիցեմ...

գերբ. մեղանչել, մեղուցեալ, մեղանչելոց

18) Յանցանեմ «յանցանք եմ գործում».

ներկ. յանցանեմ... անկ. յանցանէի...

կտր. յանցեայ, յանցեար, յանցեաւ...

սպ. յանցիեց, յանցիցես, յանցիցէ,  
յանցիցուք, յանցիջիք, յանցիցեն.

հրամ. յանցիք, մի յանցաներ,  
յանցերնոք, մի յանցանէք.

ստոր. յանցանիցեմ...

գերբ. յանցանել, յանցուցեալ, յանցանելոց

19) Յառնեմ «գեր եմ կենում».

ներկ. յառնեմ... անկ. յառնէի...

կտր. յարեայ, յարեար, յարեաւ...

սպ. յարեայց, յարիցես, յարիցէ...

հրամ. արի, մի յառներ, արիք, մի յառնէք.

ստոր. յառնիցեմ...

գերբ. յառնել, յարուցեալ, յառնելոց

20) Ունիմ «բռնում եմ».

ներկ. ունիմ... անկ. ունէի...

կտր. կալայ, կալար, կալաւ, կալաք...

սպ. կալայց, կալցիս, կալցի, կալցուք...

հրամ. կալ, մի ունիք (նաև՝ կալայցիս)

կալայք, կալարնոք, մի ունիք.

ստոր, ունիցիմ...  
դեր, ունին, կալեալ, ունելոց,

### Կրավորական

Ներկ, կալեալ լինիմ (կամ ըմբռնիմ)...  
անկ, կալեալ լինէիմ...  
կոր, կալեալ եղէ...  
տպ, կալեալ եղէց.  
հրամ, կալեալ լիր...  
ստոր, կալեալ լինիցիմ  
դերբ, կալեալ լինել, կալեալ, ունելի.

21) Աւանմ «ուտում» եմ».

Ներկ, ուտեմ... անկ, ուտէի.

կոր, կերայ (կերի), կերար (կերեր), կերու (եկեր),  
կերաք, կերայք, կերան.  
տպ, կերայց (կերից), կերիցիս, կերիցէ,  
կերիցուք, կերիջիք, կերիցեն.  
հրամ, կեր, մի ուտեր, կերայք (կերէք), մի ուտէք.  
ստոր, ուտիցիմ...  
դերբ, ուտել, կերեալ, ուտելոց.

### Կրավորական

Ներկ, ուտիմ... անկ, ուտէի...  
կոր, կեր եղէ, կեր եղեր... (կուր եղէ)...  
տպ, կեր (կուր) եղէց, կերիցիս, կերիցի, կեր (կուր) լիցուք,  
լիջիք, լիցին (կերիցին).

հրամ, կեր լիր, մի ուտիք, լիրուք կեր, մի ուտիք.  
ստոր, ուտիցիմ...  
դերբ, կեր լինել, կերեալ, ուտելի.

22) Տամ «տալիս» եմ».

Ներկ, տամ, տաս, տայ, տամք, տայք, տան.  
անկ, տայի, տայիք, տայը, տայտք...  
կոր, ետու, ետուր, ետ,  
տուաք, ետուք, ետուն.  
տպ, տաց, տացես, տացէ  
տացուք, տաչիք, տացեն.

Նրամ, տնւր, մի տար, տնւք, մի տայք.  
ստոր, տայցեմ, տայցես...  
դերբ, տալ, տուեալ, տալոց:

### Կրավորական

Ներկ, տուեալ լինիմ... անկ, տուեալ լինէիմ...  
կոր, տուայ, տուար, տուաւ...  
տուաք, տուայք, տուան.  
տպ, տուայք, տացիս, տացի,  
տացուք, տաջիք, տացին.  
հրամ, տաջիք, մի տուեալ լինիր,  
տաջիք, տուարնոք, մի լինիք տուեալ.  
ստոր, տայցիմ, տայցիս...  
դերբ, տուեալ լինել, տուեալ, տալի.

23) Տանիմ «տանում» եմ».

Ներկ, տանիմ... անկ, տանէի...  
կոր, տարայ, տարար, տարաւ,  
տորաք, տարայք, տարան.  
տպ, տարայց, տարցիս, տարցի,  
տարցուք, տարջիք, տարցին.  
հրամ, տար, մի տանիր, տարայք, մի տանիք,  
ստոր, տանիցիմ  
դերբ, տանիլ, տարեալ, տանելոց:

### Կրավորական

Ներկ, տարեալ լինիմ...  
անկ, տարեալ լինէի...  
կոր, տարեալ եղէ...  
տպ, տարեալ եղէց...  
հրամ, տարեալ լիր...  
ստոր, տանիցիմ, տարեալ լինիցիմ...  
դերբ, տարեալ լինել, տարեալ, տանելի.

ԳՐԱԲԱՐԵ  
ԾԱՂԿԱՔԱԴ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ԾՐՁԱՆ

1.

Ե Բ Գ Վ Ա Հ Ա Գ Ա Ւ Ի

Երկնէր երկին և երկիր,  
Երկնէր և ծովն ծիրանի.  
Երկն ի ծովուն ունէր և զկարմը իկն եղեգնիկ.  
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր.  
Ընդ եղեգան փող բոց ելանէր.  
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պտտանեկիկ.  
Նա հուք հեր ունէր,  
Բոց ունէր մօրուս,  
Եւ աչկունքն էին արեգակունք:

Խոր. Ա. Դա.

2.

Ե Բ Գ Վ Ա Բ Դ Գ Է Ս Ի

Հատուած գնացեալ Վարդպէս մանուկն  
ի Տուհաց գաւառէն, զՔասախ գետով,  
Եկեալ նստեալ զԵրէշ ըլլով,  
ԶԱրտիմէդ քաղաքաւ, զՔասախ գետով,  
Կոել կոփել զդուռնն Երուանդայ արքայի.  
Խոր. Բ. կե.

3.

Քեզ ասեմ, այը քաջ Արտաշէս,  
Ար յաղթեցեր քաջ ազգին ելանաց,  
Ե՛կ հաւանեաց բանից

Աչագեղոյ դստերս Ալանաց՝  
Տալ զպատանիդ,  
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝  
Զայլոց դիւցազանց զարմից  
Բառնալ զինդանութիւն,  
Կամ ծառայեցուցանել  
Եւ ի ստրկաց կարգի պահել.  
Եւ թշնամութիւն յաւիտենական  
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել.  
Խոր. Բ. ձ.

4.

Եւ ուստի աացէ քաջն Արտաշէս  
Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց,  
Ընդ քաջազգւոյն կոյս օրիորդիս Ալանաց.  
Խոր. Բ. ձ.

5.

Հեծաւ արի արքայն Արտաշէս ի Սեւան գեղեցիկ,  
Եւ հանհալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,  
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,  
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց.  
Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,  
Արագ հասուցանելով ի բանակն իւր.  
Խոր. Բ. ձ.

6.

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիս.  
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն.  
Խոր. Բ. ձ.

7.

Վիշտապազունք զողացան զմանուկն Արտաւազոց,  
Եւ զե փոխանակ եղին:  
Խոր. Բ. կա.

Տենչայ Սաթենիկ տիկին տենչանո՞  
Զարտախուր խաւարտ և զտից խաւարծի՞  
Ի բարձիցն Արդաւանայ:

Խոր. Ա. լ.

9.

Ճաշ գործեալ Արդաւանայ ի պատիւ Արտաշիսի,  
Խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշտապաց.  
Խոր. Ա. լ.

10.

Արտաւազոց ոչ գտեալ,  
Քաջի որդւոյն Արտաշիսի,  
Տեղի սպարանից՝  
ի հիմնանալն Արտաշատու,  
Նա անց գնաց և շինեաց  
ի մէջ Մարաց զՄարակերտ:  
Խոր. Ա. լ.

11.

Մինչ զու գնացեր,  
Եւ զերկիրս ամենայն ընդ քեզ տարար,  
Եւ աւերակացս որպէս թագաւորեմ:  
Խոր. Բ. կա.

12.

Դու յորս հեծցիս յազատն ի վեր ի Մասիս,  
Զքեզ կալցին քաջք,  
Տարցին յազատն ի վեր ի Մասիս,  
Ընդ կացցես և զոյս մի տեսցես:  
Խոր. Բ. կա.

Ո՞ւ տայր ինձ գծուին ծխանի  
Եւ զառաւօտն նաւասարդի,  
Զվազելն եղանց և զվագելն եղջերուաց.  
Մեք փող հարուաք և թժմբի հարկանէաք:

Մատ. 19:

Իրբեւ զսէդն Տըգատ, որ սիդալովն  
Աւելեաց զթումըս գետոց և ցամաքեցոյց,  
Իսկ ի սիդալն իւրում զյորձանս ծովուց:

Ազար. § 123

Թէ քո Շարայի որկորն է,  
Մեր Շիրակայ ամբարքն չեն:

Խար. Ա. ճ.

## ՄԵՍԻՐԱՊՑԱՆ ՇՐՋԱՆ

1.

Ա.Խ.Ա.Կ. ՍՈՂՈՄՈՒՆԻ ՈՐԴԻՈՅ ԴԱ.Ի.ԹԻ  
ԹԱԳԱ.Ա.ՈՒՐԻ ԽՄՐԱՅԵԼԻ

Ճանաշել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանձարոյ, ընդունել զգարձուածս բանից, ի միտ առնով զարդարութիւն հշմարիտ և ուզզել զիրաւունս: Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս և զհանձար: Որոց իբրև լոփէ իմաստուն՝ իմաստնապոյն լիցի: իսկ որ հանձարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստացի, ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, զճառս իմաստնաց և զառակս նոցա: Սկիզբն իմաստութեան երկիր Տեսոն, Հանձար բարի ամենեցուն որ առնեն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգօնութիւնն. զիմաստութիւն և զխրատ ամբարիշաբ անդունեն: Խոր, որդեակ, խրատու հօր քո և մի՛ մերժեր զօրէնս մօր քո, զի պատկ շնորհաց ընկալցի զլուխ քո և մանեակ ոսկի ի պարանոցի քում:

Ա.Խ.Ա.Կ. 1—9

2.

## ՈՐՄԻԶԴԻ ԵՒ Ա.ԲՀՄՆ

Մինչ չե բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիք և ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս մամ յերկրի, Զրուան ուն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք: Զհազար ամ յաշտ արար, զի թերևս որդի մի լինիցի նմա, որում անուն Որմիզդ, որ զերկինս և զերկիու և զամենայն որ ի նոսա՝ առնիցէ. և յիտ հագար ամի յաշտ առնե-

լոյն սկսաւ ածել զմտաւ. ասէ. Օդո՞ւտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ, և լինիցի ինձ որդի Որմիզդ, եթէ ի զուր ինչ ջանայցեմ; Եւ մինչ դու նա զայս խորհը, Որմիզդ և Արքմն յղեցան յարգանդի մօր իրեանց. Որմիզդն ի յաշտն առներայ, և Արքմն ի յերկուանալով անտի: Ապա իմացեալ Զրուանայ, ասէ. Երկու որդիի են յորովայի անդ. որ որ ի նոցանէ վաղ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից; Եւ ժանուոցեալ Որմզդի զլուործուրդս Հօրն՝ յախնեաց Արքմենին. ասէ. Զրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ ոք ի մէնչ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուացէ; Եւ զայն լուեալ Արքմենին՝ ծափեաց առովայնն, և ել եկաց առաջի Հօրն: Եւ տեսնեալ զնա Զրուանայ, ոչ զիտաց եթէ ո՛ ոք իցէ. և Հարցանէր՝ եթէ ո՛վ ես զու: Եւ նա ասէ. Ես եմ որդին քո: Ասէ ցնա Զրուան. Իմ որդին անուշանու և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդառու ես: Եւ մինչըն նոքա զայն ընդ միմեանս խօսէին, ծնեալ Որմզդի ի ժամու իւրում լուսաւոր և անուշանու, եկն եկաց առաջի Զրուանայ: Եւ տեսնեալ զնա Զրուանայ, գիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա է՝ վասն որոյ զբաշտն առնէր. և տեսեալ զբարսմունսն՝ զոր ի ծեռին խրում ունէր, որովք զբաշտն առնէր, ետ ցՈրմիզդ, ասէ. Ցայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմհետէ դու վասն իմ առնիցեն: Եւ ի տակ Զրուանայ զբարսմունս ցՈրմիզդ և օրհնել զնա, մատուցեալ Արքմենի առաջի Զրուանայ՝ ասէ ցնա. Ո՞չ այսպէս ովստեցէր՝ թէ ո՛ ոք յերկուց որդուցն իմոց յառաջ առ իս հասցէ, զնա թագաւոր արարից, եւ Զրուանն առ ի ջրելոյ զլուտոն՝ ասէ ցԱրքմենն. Ա՞չ առու և չարագործ, տուեալ լիցի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և զիրմիզդ ի վերայ քո արթայ կացուցեալ. և լիտ ինն հազար ամի զիրմիզդ ի վերայ քո արթայ կացուցեալ. և զինչ կամիցի առնել՝ արասցէ:

Յայնժամ սկսան Որմիզդ և Արքմենն առնել արարածու. և ամենայն ինչ՝ զոր Որմիզդն առնէր, բարի եր և ուղիղ. և զոր ինչ Արքմենն գործէր, շար էր և թիւր:

Տիգիի Բ. ո.

3.

### ՅԱՂԱԳՍ ՅՈՂԱՆԱԾՈՒ ԵՓԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ՎԱՐՈՒՅ ՆՈՐՄ.

Այլ Յոհան հալիսկոպոս, որդի Փառինայ հալրապետի, Յինառուրց, թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս: Եւ էր սա այլ կեղ-

ձաւոր, և երևեցուցանէր ինքն զանձն իւր մարդկան պահող և խոր-գոտհանդերձ. մինչ զի մոլուս անզամ ոչ ապանէր, այլ զամառն հետ-կով պատէր և զմանոն կեմով: Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր տալ զտագհութիւն իւր ընդ երկիրդին Աստու-ծոյ, այնշափ ինչ, զի զիրս անարժանու և շաւատալիս գործէր:

կերպարանացն, զինչ կերպարանք և ի ներքս մինեսցեն, նոյն և  
երկի. եթէ բոլորակ, եթէ երեքելուակ, եթէ շորեքելուակ, և եթէ զիա՛րդ  
և իցէ՝ զկերպարանս չփոխէ. բայց գոյնն զըրոյն գոյն առնու

Եւ չիցէ՝ տեսեալ, զիա՛րդ որք ի տար աշխարհէ յետ բազում  
ժամանակաց գայցեն, և ընտանիքն նշան խնդրեն, ո՛չ զփառառ-  
ութեան ինչ, թեպէտ և փառառոր գայցեն. այլ զառաջին կենացն,  
թէ արդարի սա նա՞ իցէ. և ու այնշափ ինչ ճշգրիտ ի հանդիսաւ:

Հային, որպէս յօնացն կերպարանս և ձեռացն նշմարանս, և ի  
հերսն՝ թէ ծաղկահեր կամ գանգրահեր իցէ. և մարմնոյն թերու-  
թիմաք քարոզ անծանօթին լինին:

(Էջ 116-7)

4. Ո՞վ իցէ ի ձէնչ, որոյ իցէ բարեկամ, և երթիցէ առ նա ի  
հասարակ գիշերի, և ասասցէ. «Յա՛րեկամ, տո՛ւր ինձ երիս նկա-  
նակս հաց. քանզի բարեկամ իմ եկն ի ճանապարհէ, և չիք ինչ որ  
առաջի դիցեմ»: Եւ նա պատասխանի տացէ և ասասցէ թէ «Դուրքող  
փակիսալ են, և մանկումք ընդ իննեւ կամ յանկողնի. մի՛ աշխատ  
առներ զիս. ո՛չ կարեմ յառնել և տալ»: Եւ զի՞նչ յետ այնորիկ.  
ամէն ասեմ ձեզ, եթէ և վասն բարեկամութեանն ո՛չ տացէ, սա-  
կայն վասն ժառութեան նորա յարուցեալ տացէ նմա ամելի բան  
որշափ կամէյն:

(Էջ 159)

5. Զոր օրինակ յորժամ բժիշկն զերկաթն ի գործ արկանէ և  
խարանս ի մարմինն դնէ, ո՛չ այնու ընդ մարդոյն կռուի, այլ ընդ  
ցաւսն մարտնչի: Միթէ տեսեն՝ երթեք զրժիշկ առ ցաման ձեռն  
ի գործ արկեալ, կամ առ զայրացու ինչ ի խարանս մատուցեալ,  
կամ այլ ինչ նոյնապիսի: Թեպէտ և հիւանդին երեսքն բժշկին աճա-  
գին թուեսցին, այլ բժշկին օպուտ գործեալ կայի միտոս. և ո՛չ վասն  
զի ցաւածին աճագին բժշկութիւնն թուցի, և ճարտարութեանն  
խոտառուն աճագին ինչ իցէ: Վիրածն յորժամ տեսանիցէ զրժիշկն՝  
զի կտրել զվերն կամիցի, աճագին համարի, և իբրև ի թշնամու  
խուսափէ. իսկ յորժամ բժշկեացի, զոր երթեմն տեսանէք և զերբսս  
դարձուցանէք, յետոյ մօտ հայի և երկիր պագանէ: Եթէ չոփտի-  
ցեմք իսկ, զի առ զայրացու ցաւոցն՝ թշնամանս զնեն հիւանդին  
բժշկացն, և թիշկն ներէ զայրացելոցն. քանզի զիտէ՝ եթէ ո՛չ ի  
կամացն են թշնամանքն, այլ առ ցաւսն: Իսկ յորժամ ապաքինին  
յախտէն, և վարձ ևս տան նոցա, զորս անսպորտս համարէին.  
տան վարձս՝ ո՛չ իբրև պահանջեալք, այլ ինքնակամ յօժմութեամբ:  
Նոյնպէս և մեր այժմ դժկամակ լինիմք ընդ նեղութիւնս. և յորժամ  
հասանիցէ պտուզ նեղութեանցն, ապա զարմացեալ ասեմք՝ եթէ  
անցար մեր ընդ հուր և ընդ ցուր, և հաներ զմենդ ի հանգիստ:

(Էջ 176)

## Ի ՔՐՈՆԻԿՈՒՆԵՆ ԵԽՍԵԲԵԱՅ

Աղդ եղկ հօրին նորա նարուպաղսարայ, եթէ շահապն նախարարապետ՝ որ կարգեալ կայր ի վերայ աշխարհին Եղիպատացոց և կողմանցն Ասորաց և Փիմիկաստան գաւառացն, կապարձս գարձոց, յետո եկաց յապստամբութիւն, եւ զի չ'ո ատակ այնուհետև ինքն կշտամբել, գումարեաց եղ ի ձեռին որդուցն իւրում նարուկողոսորաց, որ այնուհետև ի չափ իսկ հասակի հասեալ էր, մասն ինչ ի զօրացն, և առաքեաց երթալ ի վերայ, Երթեալ հասեալ նարուկողոսորոս՝ խոսմբ գործեալ տայր պատերազմ ընդ ապստամբին և յաղթիր, և զաշխարհն, որպէս և էր իսկ ի բնէ, անդքէն ընդ իւրեանց թագաւորութեամբ նուաճէր: Իսկ հօրին նորա նարուպաղսարայ գեպատ գեպատ տայրին ի նմին ժամու հիւանդանալ ի Բարեկացոց քաղաքին և վճարել զիկնաս, թագաւորեալ ամս իս:

Զգաստ լինէր յետ բազում ժամանակաց նարուկողոսորայ զօրին վախճանէ. կարգէր յարօպարէր զիրս երկրին Եղիպատացոց և զայրոցն աշխարհաց, և զգերին Հրէից և զՓիմիկեցոց և զԱսորոց և զնդիպատացոց ազդացն, հրաման տայր ումանց ի բարեկամացն հարստարտուն զայր և զայլ և զառ և զիրս և զկազմած խուզացանի ի Բարեկամն Երթեալ հասեալ՝ զտանձնալ պիրս ամենաբար ի Քաղդէացոց, և պահեալ նմա զթագուտութիւն՝ ուրումն ազնուականի ի նոցանէ: Տիրէր բովանդակ հայրենի իշխանութեան, և զգերոցն հրաման տայր՝ յազնիվ տեղիս Բարեկացոց աշխարհին բնակեցուցանել, եւ ինքն յառէ և յաւարէ պատերազմին՝ զմենհանն Բելայ և զայլն ամենացն առատութեամբ զարդարէր, եւ ի բուն քաղաքն և այլ ևս արտաքուատ ի ներս յաւել զուրէ. և պմդէր գտեղիսն, զի մի՛ ևս լինիցի հնար պաշարողաց՝ զգեսն ի քաղաքն գարձուցանել: Եւ յաւելոյր երիս պարիսպն ներքնոյ քաղաքին և երիս արտաքնուան. և զիէս պարապացն ի նիթծուն աղիսոյ և ի նութէ շինէր, և զիէսն ի լոկ աղիսոյ. և պատեր աղնուադքին զբաղարն պարսպօք, և զգունան գորդարէր զիւցազունու եւ այլ արքունիս մօտ ի հայրենի արքունիսն շինեալ յաւելոյր. զորոց զշափ և զգեղ և զգեղի զպի յօրինուածն Հազիւոք ուրիք եթէ պատմել կարասցէ: Բայց ամնչափ միայն՝ թէ երարի նորակեստ նորամնան մեծապայծու և չնաշխարհիկ զործ էր. և կատարեցաւ

Համօրէն ի հնգետասան ատուր, եւ յարքունիմն աշտարակաքար-կութիս բարձրաբերձս հանդերձ մահարձանօք շինեալ յօրինէր. և գծակատս կողակացն ի նմանութիւն Երանց յարքարէր: Եւ տնկետ ծառս ազդի ազդիս, և գործեաց և կազմեաց զանուանեալ բու-րաստանան կախաղանաւ, վասն տենչանաց կնոջն իւրոյ ի զեռնա-յին հովասուն վայրաց, որ ի Մարաց. աշխարհին հովասուն մնեալ էր:

(19 61—70)

16.

## ԿՈՐԾԱՆՈՒՄՆ ՄԵԶԵՆԻՑ

Առնոյր այնուհետև խորհուրդ հաւանութեան ընդ թագաւորին և ընդ իշխանան, նախարարօքն և զօրօքն հանդերձ վասն խաղաղութեան հասարակաց, բակել, կործանել, բառնալ զգայթակելութիւնն, ի միջոյ ի բաց կորուանել, զի մի՛ ումեկ լիցի խէթ և խովթ այնուհետև ընդ ուս անկանել և խափան առնել՝ եկանել յազատութիւնն վերին:

Եսկ անդէն վողվագակի թագաւորն ինքնիշխան հրամանաւ և ամեննեցուն հաւանութեամբ, գործ ի ձեռն տայր Երանելույն Գրի-գորի, զի զյառաջազոյն զհայրենական հնամենացն նախնիացն և զիւր կարծեալ աստուածն չաստուածս անուանեալ՝ անշիշտաւակ առնել, զնշել ի միջոյ: Ապա ինքն իսկ թագաւորն խաղայր զնայր ամեննայն զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքէ՝ Երթալ լիք-տաշատ քաղաք, աւերել անդ զբաղինսն Անահուտիսն զիցն, և որ յերազամոյն տեղիսն անուանեալ կայր: Նախ զիպեալ ի ճանապարհի երազացոյց երագահան պաշտուման Տրի դից, դարի գիտութեան քրծաց, անուանեալ Դիւան գրչի Որմզդի, ուստան ճարտարութեան մեծեան, նախ ի նու ձեռն արկեալ՝ քակեալ այրեալ աւերեու քանդեցին:

Ուր և երենեալ կերպարանեալ դիւան ի նմանութիւն առնն և ձիոյ բաղմութեան, կտղմութեան զնդի և հետեւակագորս, մկնդա-տրք և ուննաւորք, առաջի ընթացեալք ի կերպարան մարգիսն նմանութեան, նիգակօք և նշանօք, ի զէն և ի գարդ վառեալք, մե-ծու զոշմամբ զաղաղակ հարեալ՝ վիախատեալք Անահուտիսն մե-հնանն անկանեին, ուստի ընդ հասեալուն մարտ եղեալ կոուէին:

նետու անոյժս և քարավէժս թանձրատարափս ի վերուստ ի շինուածոցն ի խոնարհ զմարդկան ցնդէին: Խոկ Գրիգոր՝ իրբեւ տեսնալ պայն, դիմէր ի դուռն մեհենին և ամենայն շինուածք մեհենին ի հիմանց դղոգեալ տապալեցան. և լուցեալ յանկարծորէն փայտակերտն հրդեհեցաւ և ծովին ծառացեալ մինչ յամպս հատանէր: Խոկ մարդկանն հասելոց անդէն քանդեալ դիմունս մնացեալս աւերէին, և զգանձսն մթերեալս՝ աղքատաց, տուռապելոց և շրատրաց մասն հանէին: Եւ զդաստակերտուն և զսպասաւորան քրմօքն հանդերձ և նոցին գետնովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցոյ սպասաւորութեան:

Եւ երթայր հասանէր ի Դարանաղեաց դասառն, զի և անդ զանուանելոցն զստու աստուածոցն զրագինսն կործանեցին, որ էր ի զեօդն Թորդան, մեհեան անուանեալ սպիտակափտու դիցն Բարշամինայ: Նախ զնս կործանէին, և զպատիեր նորին փշրէին. և զգանձսն ամենայն, զոսկոյն և զարծաթոյն, աւար հարկանէին և զայն աղքատաց բաժանեալ բաշխէին: Եւ զգեզդն ամենայն դաստակերտուն հանդերձ և սահմանօքն յանուն եկեղեցոյն նուիրէին...

Ապա երթեալ հատանէր յամուր տեղին անուանեալ Անի, ի թագաւորաբնակ կայեանսն հանգստոցաց գերեզմանաց թագաւորացն Հայոց: Եւ անդ կործանեցին զրագինն Զես դիցն Արամաղդայ, Հօրն անուանեալ դիցն ամենայնի: Եւ անդ կանգնեալ զուրունական նշանն, և զասանն ամրականան հանդերձ ի ծառայութիւն եկեղեցոյն նուիրէին:

Եւ ապա յետ այսորիկ անդէն ի սահմանակից դասառն Եկեղեց ելանէր: Եւ անդ երենեալ դիացն ի մեծ և ի բոն մեհենացն Հայոց թագաւորացն, ի տեղիս պաշտամանցն, յԱնահուական մեհենին, յԵրէզն աւանի, ուր ի նմանութիւն վահանաւոր զօրու ժողովեալ դիւացն մարտնչէին, և մեծագոշ բարբառով զիերինս հնչեցուցանէին: Որբ փախստական եղեալք, և ընդ փախչելն նոցս կործանեալ բարձրաբերձ պարփակքն հարթեցան: Փշրէին զուսիփ պատկերն Անահուական կանացի դիցն, և ամենակին զտեղին քանդեալ փառնէին, և զոսկին և զարծաթին աւար առեալ: Եւ անտի ընդ գետն Փայլ յայնկոյն անցանէին, և քանդէին զնանէական մեհեանն զըստերն Արամաղդայ ի Թիգն յաւանի: Եւ զգանձս երկոցուն մեհե-

նացն աւարեալ ժողովին՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցոյն Աստուծոյ թողովին տեղեօրն հանդիրձ:

Եւ արագէս ի բազում տեղեաց բառնալին զգայթակղեցուցիլսն անմոռմալս, զգովիալսն, կրեալսն, կրփեալսն, քանդակեալսն, անպիտանսն, անօպւտան, վնասակարսն, աբարփեալսն անմոռութեամբ ցնորելոց մարդկան:

Գայր հասանէր ի Մրհական մեհեանն անուանեալ որդույն Արամաղդայ, ի զիւղն՝ զոր թագայառին կոշին բատ պարթեարէն լեզուին: Եւ զայն ի հիմանց բրեալ խէին, և զգանձսն մթերեալս աւար հարկանէին և աղքատաց բաշխէին, և զուսպիսն նուիրէին եկեղեցոյ...

Լուս Գրիգորիկս, թէ Վահէվանեան մեհեանն մնացեալ է յերկին Տարոնոյ, մեհեանն մեծագանձ, լի ուսկով և արծաթալ, և բազում նուէրը մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ. ութերուդ պաշտօն հոչակատր, անուանեալն Վիշապաքաղն Վահապինի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի մարս լեզինն Քարքիայ, ի վելայ զետոյն Եփրատայ, որ հանդէալ հայի մեծի լերինն Տարոսի, որ և անուանեալ ըստ յաճախաշտ պաշտաման տեղեացն՝ Յաշտիշտա: Զի յայնժամ դեռ ևս շէն կային երեք բագինք ի նմա, առաջին՝ մեհեանն Վահէվանեան, երկրորդն Ոսկեմօր Ոսկեմօն դից, և բագինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր դից, և երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղեան դից. Ահնեակ Վահապնի կարգեցեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէս: Արդ՝ դիմեաց զայ սուրբն Գրիգորիս, զի բանդեցէ և զայն ևս, զի տակավն իսկ տպէտ մարգիկ խառնակութեան զո՞էին յայս բագինս մնացեալս:

(Ագարանգեղոս).

## 17.

### Հ Ր Դ Ե Հ

Իցէ՝ տեսնալ, յորժամ հրդեհ զմեծամեծ տանց հարկանիցի, զիարդ ցոլանայ բոցն և ծովին և անդը յերկինս կցի, և շիք որ ժափ մատչել և զշարն շիշուցանել. այլ ամենայն որ քնդ անձին ձեպի և զիւրն միայն զիւէ. և հրդեհն ոչ մեղմու, այլ սաստիկ զամենացն ծագակեցի. և բազում անգամ ամենայն բազարն շուրջ կայցէ և տեսողք և անդ շարեացն լինիցին, և ոչ զօրավիգն և օդնականք: Եւ

անդ իցէ տեսանել, զի ոչ ինչ օգտառն լինիցին որ շուրջն կայցին.  
այլ իւրաքանչիւր որ զձեռս ձգիցին, և նոցա՛ որ առ ժամայն իցեն  
հեկեալ, զտեղն իմն ցուցանիցին, կամ ընդ պատուանս զբոցն  
ցոլացեալ, կամ զգերանսն՝ որ Համ կիսայրեաց անկանիցին, կամ  
ողջոյն իսկ զփողոցմ՝ որ միանգամայն ի սեանցն և ի մութից  
զերծանիցին և յերկիրն կործանիցին: Իցին թերեւ և բաղումք  
յանդունք և ի վսեր եկեալք՝ որ և մօս իսկ ժամիցին ի հրդեհ շին-  
ուածոյն Հասանել, ո՞չ զի ձեռն տայցեն և զշարն շիշուցացանիցին,  
այլ զի ցանկալի իմն զուեսիլն Համարիցին, յորժամ ի մօտոյն  
սուոյդ կարիցեն նշմարել, որոց մինչ ի բացեայն կային, շերեւ  
ամսպէս: Եւ անսի զի՞նչ օգուտ գտանիցին, բայց թէ միայն մնաս:  
Եւ եթէ գեղեցիկ ևս և մեծամեծ շինուածքն իցեն, զայն Համարին  
եղուկ և ողորմ, բազում արտասուաց արժանի: Նա և է իսկ ողորմ  
տեսիլ, քանզի սիւնքն Հանդերձ Համեղագէս խոյակօքն մանրիցին  
և ի բատակսն կործանիցին: Ի իցէ ինչ բազում՝ զոր ինքնանք բեկ-  
տիցին, կէսն ի հրոյն այրեսցի և կէսն շինողացն ձեռքն մղիցեն  
բնինուցուն, զի մի՛ ևս քան զես սաստիկ ջամբ Հրոյն լինիցի:  
Անդ իցէ տեսանել և զբագում պատկերան՝ զոր ազգի ազգի նկա-  
ռուք քանդակեալ զորշեալ, յորժամ ձեղունքն բանացեն և մերկ  
յարկացն լինիցին, բազում անշբութեամբ մերկացեալ խանձատեալ  
նշասսկ կացցեն: Ի զագոի ազգի դհանդերձն, և զուիկելին և զար-  
ծաթեղին անօթսն, զոր յանիքարծ ուրեք տանտաէրն Հանդերձ իւրով  
միայն ամուսնովն տեսանէր, սապատք Հանդերձիցն և խնկոցն  
կաւշարայթ ի մարմարակուռ սենեակսն յերփների կձէիցն դրուա-  
զացն՝ ամենայն միանգամայն ի միոյն Հրոյն դռեֆիկ կործառանոց  
լինիցի:

Եւ Հասանէ տեսանել այսուհետեւ աղբակիրս որթաւորս թիա-  
ւորս գամենիսեան խառն և անհարց ի ներքս մտեալ: Եւ այլ ինչ ոչ  
իցէ անդ տեսանել, բայց միայն շուր և հուր և մոխիր և  
զփայտսն թերժյրեաց:

Անկերեան նվիս. կը 781—2.

18.

### ՆԿԱՐԱԳԻՐ ԶԻՈՅ

Դո՞ւ ագուցեր ձիոյ զօրութիւն և զփեցուցեր զբա՞ ընդ պարա-  
նոցան նորա: Արդիր զնովաւ սպառազինութիւն, և փառս լանցաց

նորա զյանդպնութիւն: Որոտայ ի զաշտի և զափի հասանէ, ելանէ  
ի զաշտ զօրութեամբ, ի պատահել նետաց՝ արհամարէէ, և ոչ  
դարձցի յերկաթոյ: Ի վերայ նորա շուղան աղեղն և սուսեր, և շար-  
ժին վահանի և նիզակի: Եւ բարկութեամբ ապականէ զերկիր. և  
ոչ հասատայ՝ մինչև միոլ հարկանիցի: Եւ իրեւ փող հարկանի, նա  
վաշ վաշ կարդայ, ի հեռաստանէ առնու զհուտ պատերազմի՝ վազս  
առներով և միոնշելով

(Յոր. ԱԲ. 19—25).

19

### ՆԿԱՐԱԳԻՐ ՄԻՎԱԿԱՆ ԳԱԶԱՆԻ

Զդրունա երեսաց նորա ո՞ բանայցէ. շուրջ զատամամբ նորա  
ան: Փոր նորա վահանք պղնձիր. յօդք նորա իրեւ զվէմ զայլախազ,  
մի զմիոյ կնի կցեալ, և օդ ոչ անցցէ ընդ նա: Զմիմեանց կալցին և  
մի՛ մեկնեսցին: Ի գոնչելոյ նորա փայլատակունք հատանին. աշք  
նորա իրեւ գտեսիլ արուսեկի: Ի բերանոյ նորա բամբարք բորբո-  
բեալք և Հատանին անկանին շանթք հրոյ: Ընդ ոնդունա նորա ծովս  
ելանէ հնոցի հրոյ կայծականց: Անձն նորա կայծակունք, և բոց ի  
բերանոյ նորա ելանէ: Ի պարանոցի նորա բնակէ զօրութիւն, առաջի  
նորա կորուա ընթանաց: Անդամք մարմնոյ նորա մածեալք. Իթէ  
զեղցէ ի վերայ նորա՝ ոչ իւրտեսցին. զի սիրո նորա սարացեալ է:  
իրեւ զվէմ, և Հատատատեալ կայ իրեւ զսալ դարբնաց անշարժ: Ի  
իւրտել նորա՝ աշ զազանաց և շորբուտանեաց և զենուց երկրի:  
իթէ պատահեսցին նմա արդունք, ոչ ստոնանեն զէնք և նիզակի:  
Քանզի Համարի զերկաթ յարդ, և զպդին իրեւ զիփայտ փուտ: Ոչ  
խոցուէ զնա աղեղն պղնձի. Համարի զամբար խուռ. և իրեւ  
զեղէզն Համարեցան նմա ուռունք: Սազք առնէ զշարժումն Հրալից:  
Անկողինք նորա տէզք սրեալք. ամենայն ուսկի ծովս ընդ նովաւ  
իրեւ զկաւ անբաւ: Եռացուցանէ զանդունդս իրեւ զկաթսայ: Հա-  
մարի զծով իրեւ զոշինչ, և զտարտարոսն անդնպոց իրեւ զգերի  
մի: Համարեցաւ զանդունդս իւր ճեմելի: Զամենայն բարձունս տե-  
սանէ, և ինքն է թագաւոր ամենայնի՝ որ ի չուրսն են:

(Յոր. ԱԲ.).

Փեսայն ցարսանն ասէ.

— Ահաւադիկ կաս գեղեցիկ, մերձաւոր իմ, ահաւադիկ կառ զեղեցիկ. աշք քո աղամիք. վարսք քո իբրև զերամակս այժից որք երեւցան ի Գաղատպէ. Աստամունք քո իբրև զերամակս կորելոց որք ելանեն ի լուալեաց. իբրև զմել որդան են շրթունք քո, և խօսք քո զեղեցիկք. իբրև զկեզկ նուան են այտք քո: Մինչև տիւն նուազեսցէ և ստուերքն շարժեսցին, վասցից ես ինձէն ի լետոն դմոննեաց և ի բլուրն կնդրիի: Ամենակին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ ի քեզ: Արտակաթ արարեք զմեզ միով ակամիք քով, և միով քառամանեկաւ պարանոցի քո: Մեղք կաթեցուցանեն շրթունքը քո, մեղք և կաթն ի ներքոյ լեզուի քո, և հոտ հանգերծից քոց իբրև զհոտ կնդրիի: Մտի ի պարտէզ իմ, կթեցի զմուսս իմ հանգերծ խնկովք իմովք. կերայ զհաց իմ մեղու իմով արքի զդինի իմ կաթամբ իմով: Ես ննջեմ և սիրու իմ արթուն կայ:

Հարսնն զգայ զփեսային բախել զդուունն.

— Զայն սիրելու իմոյ բախէ ի դրանն:

Փեսայն ասէ.

— Բա'ց ինձ, մերձաւոր իմ, աղամիք իմ, կատարեալ իմ. զի զլուխ իմ լցաւ ցօղով, և վարսք իմ ի շաղից զիշերոց:

Հարսնն ասէ զայս ինչ.

— Մերկացայ զպատճուճան իմ, զիա՞րդ ագանիցիմ զնուացի զուսս իմ, զիա՞րդ աղոտեղացուցից զնոսս:

Միրելին իմ ձգեաց զձեռն իւր ընդ պատուճանն, և որովայն իմ խոռվեցաւ ի նա: Յարեայ ես ի բաճալ սիրելոյ իմոյ. ձեռք իմ կաթեցուցին զմուսս, և մատունք իմ զմուսս լցեալս ի վերայ ձհուաց փակաղակին: Բացի ես սիրելոյ իմոյ. սիրելին իմ անց, և ոպի իմ ել ընդ բանի նորա:— Ենողեցի զնա և ոչ զտի. կոշեցի զնա և ոչ ետ ինձ ձայն: Երդմնեցուցանեմ զձեզ, դատերք Երդասպիմի, եթէ զտանիցէք զսիրելին իմ՝ պատճեսչիր նմա, եթէ խանդակաթ իմ և սէր քո:

Արդ բարիոր է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից՝ յօդուու և ի դարձան, իբրև ջրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ՝ առ ի զսաւարն և զսուերն զերկուց մեծացն անօթոց ի քաց ի միջոյ փարաւելոյ. քայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ՝ զայն ոչ զիտէ, զի չէ ի բանաւորաց և ի մատարաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց: Եւ թէ չուր թէ հուր թէ երկիր թէ օդ, թէ իցեն և թէ չիցեն՝ զայն ոչ զիտէն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան՝ անդադար մատուցանեն, վարելով այնր՝ որ կագմեացն զնոսս: Եւ մեք ոչ անարգեմբ զնոսս, և ոչ պաշտօն մատուցանեմբ նոցա. այլ հայեցեալ ընդ նոսս՝ փառաւորեմբ զկարգիչն նոցա և զօրինիչ, զի մեզ ի պիտօն են, և կարգչին իրենանց ի փառս:

Զիա՞րդ պաշտիցեմբ զարեգակն, որ մերթ կոչի իբրև զծառայ առ ի սպասն՝ յոր կարգեցաւ հասանելոյ, և մերթ երթայ զոյէ իբրև զարշուրեալ, և տայ տեղի խաւարին լնով զմիջոց ի մեծի տանն. և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ՝ առ ի յանդիմանովին և յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ արարեալ եթէ չեմ ևս արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս և զամենայն տիւ լուսաւոր պահէ, և զցայդ զօղեցուցանէ. և երփեր երփեր խաւարեցուցանէ՝ և իբրև խօսուն բերանով անշշունքն բողոքէ՝ եթէ չեմ արժանի պաշտօն առնլոյ, այլ պաշտօն հարկանելոյ: Կամ զլումին՝ որ մերթ կոչիցէ վարագացեալ՝ հրամանաւ, և մերթ սարսէ ի գոշելոյն՝ սաստիւ: Եւ կամ զհում՝ որում և զփեղ իսկ երկորոդ արարիշ կազմեաց յօդինիշն, զի յորժամ կամիցին՝ խափուցանիցին: Կամ զերկիր՝ որ հանապաղ բրեմք, և ցանկ իոփեմք, և զազը զմեր և զանասնոց մերոց ի նա հեղումք: Կամ զջուրի՝ զոր հանապաղն ըմպեմք, և զանուշութիւն նոցա ի ժանահուառութիւն ի փորի մերում գարձուցանեմբ, և ղներքին և զարարաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք:

Եւ այսու ամենայնի յայտ է՝ թէ զոր առ աստուածոն ունին, անարգեն շատք և անպատճեն: Նա և դոզումն և սոսկումն ունի

զարարածման, յորժամ դպատիւ արարչին որ նոցա մատուցանից, և յայտ առնէ երկիր շարժելովն, և յուսաւորժն խաւարելովն, և օդին գժվմելովն և քսամնելով, և ծով սաստկութեամբ ալիսացն սպանմակեօթ: Զի թէ ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սաստակել՝ առ ի խնդրելոյ գվակէ ժամարդանաց հասարակաց արարչին: Կամ ծով ծածկելով, որ տկար ասպովն պաշարեալ՝ շիշմէ անցանել ըստ հրաման: Առաջ երկիր կլանելով, որ ի վերայ ոչնչի կայ հաստատեալ, և յոշինչ գառնալ և զարձուցանել չէ պատշաճ զիւր զբանակիչն: Կամ հողմ պարտասեցանելով, որ կինդանութիւնն է ամենաքիչ շնչաւորաց, և շիշմէ արգելուկ զիենդանութիւնն՝ առանց հրամանի կինդանապահին: Կամ օդք երբեմն զաստամանիմն շնչելով, և երբեմն զիւրշակն բնիլով, և լինէր ամենայն ինչ ոչ ինչ:

Եղինիք էջ 14-17.

22.

## ԱԱՌ ԱՇԽԱՋՀ

ԱԱ նա աւասիկ իրքի զկառս իմն լծեալ ի չորփց եթիվարաց զաշխարհս տեսանելք, ի զերմութենէ, ի ցրտավթենէ, ի ցածարութենէ և ի խոնաւութենէ, և զօրութիւն իմն ծածուկ կառավար, որ զշորս կազմեցողսն ընդ միմեանս ի հաշտութեան և ի հաւանութեան պահեալ նուածէ: Ամենայն կառք ի համազեաց երիվարաց լծին: բայց միայն այսց կառաց՝ որ ի չհամազեաց լծեալ են: և որ ի համազեացն լծեալ են, երբեմն սայթաքեն, երբեմն օձուեն և ի տաղնապի զկառավարն և զանձինս կացուցանեն: և երբեմն խորտակումն իսկ կառացն զործեն: և յորժամ ողջ կառքն իցեն և ողջ կառավարն և վարժ երիվարքն, ուշ եղեալ ի հանդէպ երևացն եկիթ արշավին: եւ այս կառք զարմանալիք ի հակառակ և յանման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք, ո՞չ ի մի միայն կողմէն ի հանդէպ երիսացն և եթ արշավին, այլ յամենայն կողմանս վարդին, և ընդ հանուր արշավին, և ընդ քնաւ սլանան, և ամենայնի բաւական են: Յորժամ ընդ արևելս ընթանան, չէ ինչ արգել՝ թէ ընդ արմառուս ոչ արշավիցին: և յորժամ ընդ հիւսիսի վարդին, չէ ինչ արգել՝ թէ ընդ հարաւ ոչ սուրացեն: զի ձեսն կառավարին բաւա-

կան է յամենայն կողմանս զիմեցուցանիւ և ընդ շորս անկիւնս տիկիզերաց արշաւեցուցանիւ:

Եղինիք, էջ 17.

23.

## ԽՌՆԱՐՀՈՒԹԵՒԽՆ

Սիրիսցես զիսոնարհութիւն, զի նմանեալ է զօրութիւնն երկաթեզէն պարսպի: Սիրիսցես զգաւատութիւն, զպտուլ անուշութեան զի որ ուտէ ի նոցանէ, լաղի անձն նորա, և ուրախ լինի և ցնծայ: Ամենայն ծառ ի պտղոյ իւրմէ ճանաշի, և խորհուրդ մարդոյ ի բերանոյ իւրմէ ճանաշի: Եւ զամենայն մարդ՝ առ որում մերձենան իմաստուն, ի լեզուէ նորա ճանաշէ զիսորհուրդս նորա: Եւ յորժամ ամէ որ պրան խենդկառակութեան, նա ո՞չ հաստատէ առ նա պլույլիս իւր: Եւ մարդ՝ որ ի չարփս խորհի, ի շրթանց նորա ճանաշէ իմաստունն: և եթէ պրանս ծաղու և խաղու և արհամարհանաց և հայրութեան խօսի, ճանաշէ այն՝ որ լսէն զնոսաւ Մար բարի պտղուլ բարի առնէ, և ծառ շար պտղուլ շար առնէ: և ո՞չ կարէ ծառ զան պտղուլ քաղցր առնել, և ո՞չ ծառ քաղցր՝ բերել զպտուլ զան: քանդի ի պտղոյ անսափ ճանաշի ծառն: Սոյնպէս և ոյր բաղցր, որ կայ ի սիրու նորա բարի, ի նոյն գանձուց պրտի հանէ և խօսի: և այր զառն, որ կայ ի սիրու նորա շար, ի նոյն զանձուց պրտի հանէ և խօսի: Եւ եթէ հազար պտղուլ իսէ ի ծառն, ի միուշ անտի կարես զու ճանաշէլ զժառն ամենայն, և եթէ ճաշակիցին պտղուլ մի ի ծառոյն, որոյ պտղուլ իւր բաղցր և ամուշէ է, ցանկաչ անձն քո, թէ զպտուլ ծառոյն այնորիկ գուէ միայն կերիցես: Նոյնպէս և այր իմաստուն, որ մերձենայ առ մարդ շար, նախ ի բանից նորա ճաշակէ զնա, ապա եթէ տեսանիցէ թէ բանք նորա անուղղայ և մոլորականք են, այլ ո՞չ ես կամի լսել նմա: Եւ եթէ մերձենայ առ մարդ իմաստուն և ուսեալ կատարեալ, նատի առ նմա և յամէ մինչեւ ճաշակէ զբանս նորա: Եթէ տեսանէ զի բարիք և բարցունք են և դիտութիւն և հանճար լի են, ի ժամէ անտի ալնապէս կամի, թէ զամենայն բան նորա լուփցէ և ուսցի: Եւ մարդ՝ որ խորհուրձ է, ի ճաշակաց իւրոց որոշէ զնա իմաստուն: Եւ որ երկիր երբեմ իմաստուն լուռ և խոնարհ և միամիտ, և սիրու իւր ի չարփս խորհուրձի, նման է նա խոնարհի ի մէջ խոնարհաց: իմաստունը՝ որ

խորհին զբարիս, ի դառն մրգոց անտի ո՛չ ճաշակեն, որ խառնեալ իւացէ նա ի մէջ սերկել մրգոց, և ճաշակ նորա զբի՞ն դառնա- յուցանէ:

Սիրեա' զլսոնաբհութիւն, սիրելի՛, որ հոս իւր անոյշ է և հոմ իւր քաղցր: Խանարծն և ի բարձրութեան իւրով խոնարժագոյն է, և սիրուն է նոտ բարձրացելոց և խոնարժաց: Բարեկամք խոնարժի բազումք են, և ոյք հարցանեն զողցունէ նորա՝ շի՛ք նոցա չափ:

Զգօն, էջ 187-9.

24.

## ՎԱՄՆ ՍՈՎՈՒԽ ՈՐ ԿԱԼԱԽ ԶՀՐԵԱՅՍՆ

Ասացից վասն անհնարին նեղութեանցն որ եկին հասին նոցա ի սովի անոց: Յորեան յայտնապէս քնաւ ոչ ուրիշ երեկը. զի վաղ- վաղելով բնթառացին և մտանէին ի տունս և ի մառանս, և խիլ արկանէին և յուղէին, և թէ ինչ առ ումեք զուանէին և որ ուրանա- յին՝ հարկանէին ի հարուածս գառնութեան. և թէ ոչ զուանէին առ մարդ՝ որ վասն սովոյն թագուցեալ էին, անհնարին առնջանօք չարչարէին զնոսա: Բազումք իսկ ի ծածուկ զստացուածս իւրեանց փոխանակէին ընդ կապճի միոյ ցորենոյ՝ եթէ մեծատունք էին, և եթէ աղքատք՝ ընդ վարոյ, և թագուցանէին զանձինս ի ներքնա- տունս իւրեանց: Եւ կէսք ի նոցանէ ի բազումք կարօտութենէ զցու- րեանն ուտէին՝ իրբու շէր աղացեալ, և էին որ եփէին, որպէս և հարկ օբնին հրամացէր. և սիդան քնաւ ամեննեին ուրիշ ո՛չ ուղղէր, և անդստին ի կրակէ անտի յափշտակէին և ուտէին զկերակուցն. և արտասուաց արժանի էր տեսիլ նորին. և որ միանգամ զօրա- փոյնք էին քան զընկերս իւրեանց, յափշտակէին զնա, և որ հի- աննուուքն էին, լային և կային: Բայց քան զամենայն վիշտա և նե- ցութիւնս անցեալ զանցանէր նեղութիւն սովուն. իրբ որ յապում վայրի ամօթոյ պատկառանաց արժանի են, ի մէջ նորա անարգեալ արհամարժէին. զի կանայք յարանց իւրեանց մանկունք ի հարց իւրեանց, և կորանք քան վամենայն՝ մարք ի բերանոյ աղայոց իւրեանց յափշտակէին զկերակուրն. և իրբու սիրելիին իւրեանց ի ձեռս փուեանց թառամեալ համարէին, ոչ անխայէին բառնալ զիայ կենաց նոցա: Թիսկէտ և այսպէս ուտէին, սակայն թագչել ոչ կա- րէին. յամենայն տեղիս իսկ հասեալ ժամանէին խոռվիչքն՝ այնմ

յիմիք զոր յափշտակէին նոքա: Զի յորժամ տեսանէին ուրեք դուրս փակեալ նշան էր այս այնոցիկ՝ թէ կերակուր ինչ զուցէ ի ներքս. երթային և խորտակէին զդութան, արտաքուստ ի ներքս անկանէին, և հասանէին ունէին զկերորդս նոցա և հանէին զկերակուրն. բայց կլանէին ծերքն՝ որ ժուժեկալէին կերակրոց, և խզէին զգէսս կա- նանց որ թագուցանէին ինչ կերակուր. և ոչ զոյր ողորմութիւն ի վիրայ ալեաց ծերոց և ո՛չ տղայոց. զի զտղայսն առնուուն և նովին կերակրովն կախէին և զարկուցանէին զերկիր:— Սոսկումն և զո- զումն էր և լսելոյ անգամ, զոր ինչ համբերէր մարդ ի խոստունն միոյ նկանակի և վասն ափոյ միոյ ալեր գարույ: Իսկ այնոցիկ որ սողէին և եղանէին գաղտուուկ ըստ պահակապանսն Հոռոմոց զի- շերայն, բաղել իւրեանց խոտ ի վայրէ և բանջար, ընդ առաջ լի- նելին նոցա. և յորժամ համարէին եթէ ահա ապրեցաք ի թշնամեաց անոփի իւրեանց, յափշտակէին ի նոցանէ զայն ինչ զոր բերէինն և ինչ ի նմանէ ոչ տային նոցա:

Եւ խոր ևս սաստկանայք սովն և լիզաջինչ առնէր զամենայն ժողովուրբն, և տանհստան իի էին կանամբք և մանկուու՝ որ լու- ծեալ անկեազ դնէին, և հրապարակք՝ ծերոցն զիակամբք. իսկ երի- տաստրգք և կուսանք դրսուչին իրբու զստուեր, և իրբու պատկերք ի հրապարակս շրջէին և անվիեալ պորէին և ճար ուրիշ միոյ ի նո- ցանէ ոչ լինէր ի չարչարանաց. զի թաղել իսկ ոչ կարէին զսիրելիս իւրեանց. և այն որ ժուժեկալն էր, ձանձրացեալ էր ի տրոտութինէ անոփի զիականցն մենելոց. և թէ զի՞նչ անցք իսկ ընդ նա անցցին՝ ո՛չ գիտէր. զի բազումք ի նոցանէ ի վիրայ թաղելոցն անկանէին և մեռանէին:— Բայց բազումք մինչ չն հասեալ էին ի վիրեղման անգք՝ մեռանէին. և յայս ամենայն անհնարին նեղութիւնն՝ ողքը և լայիք ոչ գոյին. զի սովն սաստկացեալ զամենայն վիշտա չարշ- րանացն մոռացուցանէր. և ցամաք աշօք տանջեցեալք ի մահ հա- յէին՝ ընդ այնոսիկ որք զառաջէին զնոսա ի մահ. զի խոր լուութիւն պատհաւ էր զբաղաքան և զիշեր լի մահուումք:

Տեսեք. պատմ., էջ 155.

25.

## ՅԳԱԱԶԵԼԻՔ ԲՆՈՒԹԵԱՆ

Ե՛կ զու, նախ տե՛ս զգարուն, և ի նմին զծաղիկսն ազգի աղդի. լարդի զկերամբութիւն և շուշանի զսպիտակութիւն ի միոչէ ցողոյ,

ի միոցէ, երկրէ: Ե՞կ տե՛ս դու զջշմարտութիւն ի միոցէ Հաստատութեանէ ծառոյք, զիա՞րդ զիէս ի նոցանէ ի հովանիս, և զիէս ի նոցանէ ի պատուզ ազգի ազգի քաժանիալ ցուցանէ: Մի է այսի, և զիմն մի ի նոցանէ յայրեաց տուեալ է և զիմն մի ի նոցանէ ի բայս, և զիմն մի նոցանէ ի գնուակու, և զիմն մի ի տերես, և միանգումալն դամենայն ոդկոյզս խաղողոյ: Ե՞կ զարմացի՛ր դու զիշիցանն կեղաւանօք զմիմեամբք պատելով և ստէպ առ միմեամբք զծունը կապելով: Ի միոցէ երկրէ երանէ սողուն և գալան, երէ վայրի, փայտ և կերակուր, ուսկի և արծաթ, պղինձ և երկաթ և քար: Մի բոյս բարուց ծննդեան ջրոյ, և ի սմանէ ազգ թոշնոց երկնից, և զողակաց ծովու, զի զոր օրինակ նորա ի ջուրս զուղին, սոյնովէս և սոքա ընդ օսս վերացեալ ընդ երկինս թոշն:

Այս ծով մեծ և անդորր, անդ սողուն ուր ո՛չ գոյ թիւ: Ո՞ կարէ պատմել զձկանցն, որի նմա զեղեցկութեամբ զարդարեալ են: Ո՞ կարէ պատմել զմեծամեծ ձկանցն յաղթութիւնս և կամ զերկակենդան շնչաւորացն զգօրութիւնս: զիա՞րդ կեանք իւրեանց անդ ի չուրս են և աստ ի ցամաքի: Ո՞ կարէ զծումուն պատմել զիսորութիւն անդնոց, կամ զլայնութիւն տարածման, կամ զանինի թիւս ալեացն զմիմեամբք կուտակելոց, սակայն հասեալ ի սահման զեսդ տոեալ կայ: որ ընթացեալ ի խորոց անդնոց անոի ալեօք կուտակելով, հասեալ ի ծագ և ի դիծ սահմանաց իւրոց՝ անդն յանձն իւր թուկացեալ լուծանէ զգօրութիւն իւր Յարտնապէս թողունշան: պարոյր տոեալ զիւրեալ զսահմանս ցամաքին:

Ո՞ կարէ զմտաւ ածել խորհեղ զբոյս բարուց ծննդեան զօդադնացն թոշնոց, զիա՞րդ ոմանց ոմանց լեզուին ճաշողը և ճառուղը և կանչողք, և ոմանց ազգի ազգի իրու ներար ճարտարաց յերին երին փետուրս զարգարեալ են. և զիա՞րդ ոմանց ճախինեալ ի վեր քան զամենացն հաստատեալ կան ի մէջ օդոյն թուցեալ: Տարօծեալ զթիւն իւր՝ Հաստատեալ կայ բաղէ հայեցեալ ընդ հարաւ: Ո՞ կարէ ի մարդկանէ բարձրացեալ զարծուի թուցեալ տեսանել ի բարձունս: Ո՞վ է մարդ ի մարդկանէ, որ զամենացն բազանաց զիւտէ ասել գո՞նէ զանուանսն. կամ ո՞ է, որ զմտաւ ածել մարթէ զիւրաքանչիւր նոցա բարուցն բարեգիտութիւն: Զի աղուէսն ցուցանէ զբարս նենդաւոր մարդկան, և օձն յայտ առնէ զսարեկամաց զժանդաւոր դժնդակութիւն, և ժրագլուխ մրշինն, զի զարթուցանէ զվատացն զտաղտկութիւն: Զի յորժամ երիտասարդութիւն հեղու-

թեամբն և տաղտկութեամբն զանդեալ իցէ, յանթան տնամնոյ անտի ժրութենէ կշտամբեալ յանդիմանեսցի, որպէս և առաջին զիրք: «Տե՛ս զմրշիւնն, ո՞վ վատ, և նախանձեամ ընդ հանապար» նորա, և լի՛ր դու իմաստնապոյն ի ժրութեան»: Զի իրուե հայիս ընդ նա, որ ի ժամանակի իւրում գանձէ զշամբարս իւր, նախանձեաց և զու ընդ նմա գանձել և դու քեզ պտուղ զործոց բարութեան:

(Կիւրդի Առաջնա ընծայութեան, էջ 151—154).

## 26.

### ՆԱՐՍԱՆՈՒՄՆ ՆԻԽՈՒ ԷՒ

Յարեաւ թագաւորն և կանայք իւր, և ի բաց եղին զթագն ի վերալ զիմոյ թագաւորին, զի լուսն թէ վաղին չիցեմքը և նմենայն քաղաքն միաբան գոչեցին. վասն զի ի զոշել հողմոյն պղտորէր զհող երկրին, զի երկինք խոռվեալ էին, ամպք և մէդք դժմեամբք պատէին և զօրացեալ թանձրանայր մասախուուն: Փայլակն զփայլ յափէր, որոտունն որոտման պատահէր, կայծակունք վկայծակունս սափաէին. դողումն անդ և հիմնալ սրուի: Ամենայն մարդ ընդ դեսին հայէր, թէ ահաւափկ տապարի: Լային ամենեքեան դմիմեանս ի կատարել աւորցն ԵՀԱՍ ժամն այն. կացին ամենեքեան յաստիճան մահու, բուն հարին զմիմեամբք, վասն զի եհառ յուսահատութիւնն: Եւ ի լալն իւրեանց հայէին ընդ երկեսն, եթէ եկն զիշերս և երեկ մեղ խաւար անմեկնելի. եկն զիշերս և ահայիք մեղ տեսանել զառաւունն Եւ ասէին՝ թէ յորո՞ւմ պահու կործանի. յերեկորեաւ՝ երեկ տապալի, եթէ առաւօտուն կործանի. յորո՞ւմ պահու արդեւք դայն գումինի: Կարծեին թէ յերեկորեաւ տապարի. եկն երեկոյն, և նա կայր կանդուն Ակն՝ ունէին եթէ ի զիշերի ընկղմեսցի. եղմ զիշեր, և նա կայր ևս տակաւին: Ակն ունէին եթէ առաւօտուն կործանի. բացաւ առաւօտուն, բացաւ ոզորմութեան և զթութեան դուռն ի վերայ քաղաքին. զի յայն տաւգան երկիրն ի շարժմանէ ոչ գաղաքէր: Յայս վեց եօթներուդոսն երանի եր մեռելոց՝ քան նոցա: Կենդանի մեռեալ էին, և շէփն թաղեալ: Եղբայր եղբօր պատահէր և ոչ ճանաշէր զկերպարանս նորա. և ոչ ունէին կարաց ի միամեանց մեկնել զայնի ի ձարնէ: Երեկ զիսանձադ կրակի էին ի պահոց. մորթ և ոսկերք լոկ մնացին:

Նիւեմ, Դ. 119.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ Ի ՎԵՐԱՅ ԱՍԹԵՐԻԱՅ

Քա՛ռն և անհնարին հրամանն ստիպեալ հասանէր և սաստիկ պատուալիք շարացը կատաւորացն դողումն յամենեսեան արկանք: Քանզի ամբարդշաք իրակ զբոյ բորբոքէին և որդիք կորսուանն որ ուսեն զմիս հում զկենդանեաց՝ իրու զգազանս զիշակը սրէին դատամուն:

Առեւծն ահագին գոչէր և երաներ ի շարաշուք մորույն՝ յարձակել յափշուակել և բեկանել զեպինս հարկեաց որոտաց:

Քայլք ապակմիշք յիւրաքանչիւր որչից ելանէին՝ հասանել պատրաստականք ապականել զորձս պարսրա խաշինն: Ազուէսր ժամանակուք յիւրաքանչիւր դադարաց ողձիկս լինէին՝ զալ կրծել զանյեալ ոսկերս խաշանցն:

Քայասիրուք և պիտակազքը պատուի և պսակի հասանէին, և վատասիրուք և տագնապեալք կորուսանէին զաղթութիւնն:

Դասակը դասակը օդեաց մտանէին խիզախելով, և պառակը պառակը այծեաց ելանէին սեացեալք գունովք ուրացութեանն: Մատանէին սուրբը և սպիտակը, և երանէին ազանզիք և արինուոր: Մատանայ և գիք խնդարին ընդ անհնարին բեկաւմն մեր, և այսր պիզծք ցնծային ընդ կորուստ ապականութեանն:

Օդք սուզ զգեցեալ բարկութեամք շնչին և ի պարզ յատակութենէն յարտուուր և ի մըրիկ դառնային: Քաղցրոշունչ հողմն հարաւոյ դառնաշունչ բարկութեամք կազ եղեալ ընդ աշխարհին մարտուշքը: Որոտունք և անհնարին ճայթունք առանց անձրիկ և ցողութիւննեան բախտէին և դողացուցանէին:

Ահեղ փայլատակունք յերաշտից անկանէին ի մարդիկ և խարշէին: Մոռալ և ծուփ շարատեսիլ շփոթիւն ընդ երկինս ընթառութ և փոխանակ ցողոյ և անձրիկ՝ փոշի յատակամք արկանէր յանդատանն:— Ամոքք ամուռք, անձինք և անորդիք լինէին, զի ոչ ծնան և սնուցին և հասուցին զրոյ ի շափ հասակի:

Զամենայն աչօք մոռալ մտծեալ նստէր ի սովոյ, և գոյնք ամենեցուն իրքն զակնդեղ խարշեալ յեղեմանէ: Մարդք պատուականք առ վտանգի սովոյն զիշամիս ուստէին: Կէսր զմիմեանց մարմինն ուստէին և ոչ յադէին: Կանայք պատուականք և զիտածք ընդ իրեանց

Ճեռն եփէին զմանկունս և ուսէին, և դարձեալ ինքեանք զինի նոցամեռանէին շարչարանօք:

Գետք անհունը նուազեցին և եղեն մօս յազազանել, բաղաբք բազումք թափուր եղեն և աւերեցան, շէնք թափեցան և աւերակք բազմացան:

Ակալ առեւելից, էջ 40.

28.

### ԱՂԵՐՍ ԵՒԹՅԱԳԻ

Ամենայն իրիք ամենայն ուրեք ժամանակէ է: Աձէ զայ հասանէ յատոփս և դարձեալ միւսանգամ անդրէն զադարէ: Բայց յաղթողն կարեաց միայն յամենայնի յաղթէ: Մի՛ լինիր ամբարտաւան, յորժամ ի ցանկալի փառաւորութիւնս իցես, և մի՛ դժուձ՝ յորժամ ի թշուառութիւն հասանցես: Զի եթէ այսակս զկշիռն ունիցիս, արդար կշռիլ կենաց աշխարհիս լինիցիս. բանդի ոչ ի պարզս և ոչ ի շօղուածոյս ի վնասակարութիւնս անկաք, այլ ի բազումս և յանհնարինս և ի պէսակս գառնութիւնս, և շիբ ոք որ այցն միմիթար լինիցի մեզ: Յամենայն կարծելոց բարութեանցու միանգամայն վրիպեցաք՝ յաշխարհէ և ի փառաց և ի մեծութենէ, և միայն օգնական շարեաց զանձուութիւնն զտի:

Եւ արդ բանզի բազում վշտօք պատեցար, ո՛վ անձն իմ, մի՛ վհամափր յաշխատաթիւնս, այլ համբեք, ո՛վ սիրելի, իրքն ուրա ինչ ածեալ զմաւու, եթէ ոչ զոր կամի ոք և խործի՝ զայն առնէ, այլ զոր ոչն խնդրէ ոք և փափչի՝ զայն կրէ:

Ասաց ոմն, ասաց մեզ արսակս պուետիկոս գլուխ մի՛ եթէ Յոյսք առ կենդանեօք, անյոյսք մեռանին: Եթէ այնպէս իցէ, պարտ է համբերել վշտաց և տանել առաթինութեամք կարեաց: Զի ոչ ոք է, ինչ և չէ ինչ ի կեանս երկրածնաց և ոչինչ ի նմին հաստատութեան իրաց մարդկան կայ, այլ իրքն զանիւ շրջի ամենայն և ընթանաց:

Եւրապ, էջ 209.

## ՀԵՏ-ՄԵՍԻՐՈՂՅԱՆ ՇՐՋԱՆ

1.

### ՀԵՏ ՊԱՏԵՐԾՎԱԾԻՆ

Տիկնայք փափկատմնք Հայոց աշխարհին, որ գրգեալք և զդուեալք էին յիբաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակո, հանապազ բոկ և ճետի երթային ի տունս աղօթից, անձանձրոշթինդրեալ ուստիւր, զի համբերել կարասցին մեծի նեղովեանն։ Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճավը երեց, խոտաբուտ կենօք իրու զվայրենին քնուունէին զվերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամեննին զատվորական փափկութիւնն։ Սեացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն զի ցերել արեալէզք էին և զամենայն գիշերան գետնաբեկք։

Մոռացան զկանացի տկարութիւն և եղին արուք առաքինիք և հոգեոր պատերազմին. մարտ եղեալ կոռւեցան ընդ մեղսն կարելոր, հատին կտրեցին և ընկեցին զմահարեր արմատա նորա։ Միամտութեամբ յաղթեցին խորամասնկութեան, և սուբր սիրով լուացին զկապուտակ ներկուսածս նախանձուն։ Հատին դարմատս ազահովեան և չորացան մահարեր պատովք ուստոց նոցա։

Այրիք որ ի նոսա էին, եղին վերստին հարունք առաքինութեան և բարձին յանձանց զնախտատինս այրութեանն։ Խալ կանայք կապկուցն՝ կամօք կտպեցին դմարմնաւոր ցանկութիւնս և եղին կցորդ շարշարանաց սուբր կտպելոցն. ի կեանս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հեռաստանէ եղին վարդապետք մխիթարիչք բանտարգեկացն։ Մատամբք յիւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զիարգեալ ուժիկ նոցա յարգունուստ ամ յամէ թոշակ առնէին և տային տանել նոցա, ի մխիթարութիւն։

Անարիւն ճիպուանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միաւն գողն ծծելով, զանմարմնոցն բերեն վնամանոթիւն։

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղաւէր մարդիկ, և նորա ո՛չ երբեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Սաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աշք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա։ Սպանեցան բարակք որսականք և խցեալ կորացան արշաւանք որսորդաց. Բնագրօք հիշատակեցան նորա, և ոչ մի տօնք տարեկանաց ո՛չ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշակատեղա նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա. Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանասկեալ ի նոսա։

Եւ իրեմ այնպէս յամենայն կողմանց ալեկոծ միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուպացան յերկնաւոր առաքինութենէն։ Արտաքանոցն իրեէին իրու այրիք սպաւորք և շարշարեալք, և յոդիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով։

Ոչ ևս սուլորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստատանէ, եթէ ե՛րբ լինիցի մենց տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իդք աղօթից նոցա, եթէ որպէս սկսան՝ քաջութեամբ ի նմին կատարեցին լի երկնաւոր սիրովն։

Եղիւէ,

2.

### ԱԿԱՐԱԳԻՔ ԱՅՐԱՐԱՍԱՑ

Եւ խորհեցով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտոս իւր լրեալ մերժեալ թողոյք զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու, զ՛ոյշկապն և զ՛ոյշկաւորն և զականաւորն, զամենաբոյն, զամենաբույն, զամենալին, զամենապիտն ի շահս և ի դարմանս մարդկացին սիրովյցոց կենաց և վայելութեան և սթափութեան. զդաշտոս մեծաստարածու և որսալիցն, զիրինս շուրջանակի գեղեցկանիստ և պարարտարօսու, զ՛օծեալու երէովքն կճղակարամնիք և որոճայնովքն, և այլովք ևս բագմօք ընդ նոսին։ Ցորոց ի վերուստ ի կատարացն զրոց հոսմունք, ան-

կարօտ ոսոգման արբուցանելով՝ զգաշտու՝ մատակարարէ անքաւ բազմութեամբ բուտանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հաջի և գինույ, զանուշահու զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանումն իւղաբուշի սերմանցն. Իսկ ի բանջակողմանս կամ ի սարահարթ տեղիս սփռեալ, յոր դիպեցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց, հանդերձսինչ և ոչ ծաղկաբոյս գոյնս կարծեցուցանեն սփռեալք պարաբռաբռյսք և պարաբռատք պարաբռահամք. որոց թանձրախտ աճմունք խոտոցն զանթի արոտականս ընտանի իշանց և զանհամբոյք բոյլս վայրենի երկոցն յագեցուցեալ՝ թանձրաթաղանթս, առոգապաւակս, սոնքացեալս գիրութեամբ զբնաւ մարմինն ցուցանեն: Իսկ սաստվարուրումն անուշահու ծաղկանցն, որ զարանցն քաջաց որսասէք նետողացն և զհօտարած բացօթէգացն, ընձեռելով առողջութիւն՝ զօրացուցանեն զզայութիւն խելացն և նորոգն: Անդ գտանին և ազգի պայի արմատք բուսոց ի պէտու օգտակարութեան գեղոց, ըստ ձարտարակչու ձանաշողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուուծոցն, երագահաս ախտահայրած սպիտակիք, և կամ արբամբ յերկարելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն:

Իսկ զաշտացն ամենալրութիւն զկամս աշխատախրացն կորպելով յինքեանց իրեւ բանիւ, և առցեալ որ գինչ և է բարով՝ ևս առաւել փութանակի զզարձն առ ինքեանս հրափեն միանգամացն: Որք ոչ միայն երմելութեամբն ցուցանեն, վերաբերեալ զշահաւորութիւն օգտից մարդկան, այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն՝ զառ ընդ երկրաւ ծածկեալ օգոստու ուսուցանեն, գանձել անձանց շահս և զվայիլս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարդահանաց, զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. որ ընկալեալ արուեստող ծեռաց՝ զարդարեն զբագաւորու մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովվեն, որ ի խոյքն և ի թագսն և ի հանդերձն յուկեհուու պաճութեալս ընդելուզանեն: Այլ և մածմամբ ըրոց՝ համածին անուշութիւնս մատուցանեն կերպացն զխորակացն որոշութիւնս: Նաև զարմատս եղէ զնասէք բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբազծ դաշտն Այրարատոյ, այլև ի նմանէ ծնեալ որդունս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեզութիւնս: Եւս և գետոցն զնացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքրմբք զանազանեալ համովք և այլ և այլ տեսութք՝ ուրախացուցեալ ցու-

ցանէ զշնորհս ընչից և յագուրդ որովայնից ժրացելոցն և անվեհեր չանացողացն:

Անուցանէ լինքեան երկիրն շրովք արուեստիք և զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն և ի սթափումն որամատեն ազատացն. զկրչածաւյն բաղցրածայն առապարատէք վիմասորդ որամուտ երամս կարաւացն և սալամբացն, և կամ զեղեգնաբնակ թփամուտ մացառազօղ պարարտամարմին զանուշահամ ազգ աքարացն վայրինեաց. այլ և զշրասուզակ մամուախնդիր խօզակեր մեծանձունք և յազմամարմինք հաւուն, փորն և թմանձրն և սագն, և կամ այլ բացում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն. ջոկք թոչնոցն: Իսկ թակարդացն շրջափակութեամբք, երագագիւքն և գահողովքն, եկալ ի յոր գումիք նախարարացն որդուվիքն ազատացն, ուր ումանք զնեալ ցուոցն և այծեմանցն ցարշաւելով զիմիզախական զադեգնածայնն ևնիթ բարբարին. և այլ զնեալ բուկից եղչերուացն և հզանց միարձակ եղեալ՝ զգործ կորովածիք արանցն ցուցանեն. և իւսր սուսերօք իրեւ զմենամարտիկ՝ զսասովկանդամ երամս վարդացն զորդցուցեալ սպանանեն: Եւ շատք ի մանը մանկանց նախարարաց որդուցն զսասիրարակօք և ծառայիւք զայմեալ սեսս ի թոշնոցն որսացեալ բագայիւք՝ դարձեալ բերիցն և յաձումն ընթրեացն ուրախութեան. և այսպէս առցեալք իւրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք:

Գ. Փարպեցի, էջ 9—11.

### 3.

## ԵՐՈՒԱՆԴԱԿԵՐՏ

Քաղցր է ինձ ասել և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն նրուանդ գեղեցիկ և շբնադ յօրինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լու մարդկութեամբ և պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիբ. իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հոտարանաց կազմովթիւն, որպէս շուրջ զբուվն զայլ բոլորակովթիւն ական: Իսկ զբագմովթիւն արգեստանոյ, իբր զարտեանաց խիտ և զեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնածէն՝ արդարէ գեղաւոր կուսից յօնից դարեւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն զաշտաց, ծնօտից պարզութեան գեղեցկովթիւն. իսկ գետն բերանացեալ դա-

բաւանդօք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շըթունս: Եւ այսպիսի թիեղեգութեան դիր՝ անթթելի իմն գոգիս ի բարձրաւանդակ թագաւորանիստն գհայեցուածն ունի. և արդարե բերրի և թագաւորական դաստակերտն:

Խորենացի, Բ, 42.

4.

### ՎԱՅՆ ԿՈՏՈՐԾԵԽ ՈՐ Ի ՍՄԲԱՏԱԲԵՐԴ

Անդ էր տեսանել տեսութիւն ողորմելի և բազում ողբոց արժանի. զի զոմանս ի նոցանէ որ ի բուռն անկանէին, սրամահ սպանանէին. և որք յառապար տեղիս անկանէին և ամրանային, նետիւք խոցոտեալ սաւակէին. և զրագուամ յանձաւին վերայ ելեալը մեծամեծ վիմօք զաջարդ առնէին, որոց դիակունքն զգաթաւալ ի վերայ միմիանց շեղեալ իբրև զկոյտս փայտահարաց՝ զառաջիկայ զծորն լնովին: Վայ և աւաղ շատ դառն լուսոյ աւուրն այնորիկ. զի բաշ արքն վառեալ զինու և սրտմութեամբ եռացեալք, և վատքն թալկանալին, կանացիք լիմարեէին և երիտասարդք խիզախէին, այլ իրացն ոչ կարէին իմանալ: Քանզի յամենայն կողմանց պատնէշ թշնամեացն պաշարեալ էր զնոսա. ոչ դոյր անդ սէր սիրելեաց և ոչ աւաղ բարեկամաց. մոռացաւ հայր զգովթ որդոց, և մայր զսէր նորածին մանկանց: Ոչ կարէր լիշել անդ կին նորահարսն զսէրն փեաայի, և ոչ զմտաւ ածէր ալր զգեղ ցանկալի ամտանոյն իւրոյ. պակասեցան երգե պաշտօնէից, և հատան ձայնք ստղմոսաց իշրանց սաղմոսողաց. կալւաւ առ հասարակ զամենեան դուռն և երկիւղ: Եւ ի սաստիկ տափնապէն, բազում կանայք յլի զլով վիմէին զմանկոմն. և այսպիսօքն գործով իբր գարմաւ թարսորդաց թակարդեալ էին զինան ամենայն մինչև լքան և հատան ի զօրութենէ:

Իսկ ի գալ երեկոյին, տոեալ զառ և զգերի և դիապուտ սպանելոցն, շոգան ի տեկույն: Իսկ զինի եղանելոյն նոցա, անդ էր տեսունել տեսութիւն ողորմելի և բան զառաջինն ողորմագոյն և բարուրդաց թակարդեալ էին օրհասր մահուն. զի ողում ողբոց արժանի: Քանզի բավմապիմի էին օրհասր մահուն. զի ոմանք յանկելոցն զեռ յուսու կէին և լեզուք նոցա ի ծարաւոյ ցամաքեալք, նեղ և նորք ձայնիւ հայցէին հայթայթանս ծարաւոյն մաքեալք, և ոչ էր որ տայր. իսկ կէսք շարապէս վիրաւորեալք, և

ի ձայնէ պակասեալք, ուժգնակի շնչէին. և այլք ընդ փողիցն զի նեալք՝ կիսամեռ զոլով, դժուարաւ խոնչէին. իսկ ոմանք ի դժուարին խոցուածոցն մարմանշեալք՝ աքսուէին ոտիւք, և եղնագամք ձեռացն զերկիր դափր հատանէին: Բայց առ նոսա և ա՛յլ ահապին էր տեսանել, որ և զբարինս անգամ և զայլ անշունչ արարածո շարժէին ի յոզբս և ի հառաշանս. քանզի անօրէնքն յորժամ զգերին հանին ի լենին, զողայս առեալ ի գրկաց ծնողացն՝ յերկիր ընկեցին, որովք ի բազմութենէ նոցա եռացը առհասարակ տեղի բանակի նոցա: Ոմանք յանկելոցն զբարի հարեալ սատակէին, և կիսոց կուշտքն պատառեալ, և փորոտիքն յերկիր հեղեալ. իսկ զկենդանեացն զկառալ ո՞ր լսելիք տանել կարէին: Քանզի որ հետիւոտիք ընթանալ կարէին, այսր անդր յածելով զմարս իբեանց խնդրէին, յորոց ի բարձրածայնութենէ լալեացն՝ արձագանգ լիրին զինտ հնչէին. իսկ այլք որք չեւ ևս էին հաստատեալք յոտս, և գումա սովալով կառաչէին. իսկ որք քան գնոսա ի տիսեղ հասակին, ոտիւք զերկիր հարկանէին. և ի սողարոյն պակասեալք ի ձայնս, ո՞չ կարէին արտաքս բերել զհագապն. և այսպիսի ողորմապին ձայնիւք և անհատ աղաղակաւ զգառանց բերէին զնմանութիւն, որ դեռազն ի մարցն բաժանեալ՝ ի հորժիցն երմելս առնէին վասն անժոյթ զոլոյ բնութեանն. և անդադար զօղանչիք վիրաւորէին զօդն, և ձանձարացուանէին զլսելիս լսողացն:

Լասիլերցի, Էջ, 50—51.

5.

### ԽՈՐՈՅ ՍՐԾԻ ԽՈՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԹՈՅ

Զայն հառաշանաց հեծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերնմայիմ, տեսողգ զագտնեաց. և մատուցեալ եղեալ և հուր թափծութեան անձին տոշորման՝ զպտուզ ըղձից ձենձերոյ սասանեալ մտաց, բուրվառաւ կամաց առաքել առ քեզ: Այլ հուսուցիս, հայեսցիս, զթած, քան ի պատարագն բոլորապտուզ մատուցեալ ծխոյն բարդութեան: Քնիա՛լ զսակաւամանեալ բանիցս յօդուած քեզ ի հաճութիւն և մի՛ ի բարկութիւն:

Այն զի՛ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանակոյն. յորում կո՞չակօք բազմօք անթիւ դիմեցմանց տատանեալ հոգիս ի յալսմ աշխարհի մարմնոյս շինուածով իբր ի նաւակի: Քան-

զի մինչդեռ շուէի ես յանհոգովովեան անտարակոյսն վստահութեամբ, որով կասկած արկածից ի միտ բերելով առ խորոց փոքր միջոցին, որ ի մէջ Հանքատեանն և աշխատովեանն, իբր այն թէ հասեալ իցեմ, ձմեռն յամարանի բքաբեր հողմով ժամանեալ երեքալեանն դիմակցովեամբ ամբոխեաց զհանդարտովիինն: Ուստի նամ ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ Թեոցն ձեռնարկովին բայքայեցաւ, կայմն ամբարձման ի կայից իկոց խզեցաւ, առափաստին թոշարան յանկարկատելի ծուէնս պատառցաւ, շինուածոյն շուր անզարդեցաւ, առասանք ձգողականացն խզեցաւ, տեսարան գլխոյն դիտակի խոնարհեցաւ, ապաւանդակին պարան կտրեցաւ, ապավինովիին խարսխին լուծաւ, լուծք ստուարք ամողիցն կտրողովովեան բաժանեցան, սամիք ուղղացն հետոց գալարեցան, լաստ հիմանն հաստարանի ընկղմեցաւ, զեկացն կառուցմոնք անդրէն սուզան, շուտոցն յարմարովիմք պակասեցան, ողնափայտին պատսպարան իսկոյն բեկաւ, կապարանք զստին հաստուածոյ յօշտացաւ, գոգք ամփոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան, խելք շրթանցն եղերաց խախտեալ ոստեաւ, որպատճունք բազմականացն անկեալ բարձաւ, վանդակապատին վայելչովիին յատակեցաւ, գահաւորակին Հանգատարանն շփոթեցաւ: Մածունք տախտակաշարք ի միաբանովեանց միմեանց անջատեցան, հեղոյսք պնդման բեկուացն բարշեցան: Արգասիք իրին յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ: Նաւուղին հանդէպ նափն գենքերեալ ողբայ, ձեռն ի ծնութի եղեալ, արտասուցաւ իշուցանէ: Նշժարք սակաւ մնացուածոցն՝ ի ծայրից ծփմանց սղգելոյ ծովուն, իբր խողիսողեալ բանաւոր, ողորմագին թախծանօք հեծէ:

Fr. 'Bawlehamph, 1, 25.

ԹՐԿԱԳԱՎԱՐԻ ԹՅԱՅԻ

Դաս	1	
Դաս	2	
Դաս	3	
Դաս	4	
Դաս	5	
Դաս	6	
Դաս	7	
Դաս	8	
Դաս	9	
Դաս	10	
Դաս	11	
Դաս	12	
Դաս	13	
Դաս	14	
Դաս	15	
Դաս	16	
Դաս	17	
Դաս	18	
Դաս	19	
Դաս	20	
Դաս	21	
Դաս	22	
Դաս	23	
Դաս	24	
Դաս	25	
Դաս	26	
Դաս	27	
Դաս	28	
Դաս	29	
Դաս	30	
Դաս	31	
Դաս	32	
Դաս	33	
Դաս	34	
Գրասարի ծաղկաբազ		

Տպագրված է Վ. Մոլոտովի անվան  
Երևանի պետական համալսարանի խմբագրական-  
հրատարակչական խորհրդի ոռումամբ



Տեխնիկական խմբագրից՝ Կ. Բաղդասարյան  
Կոնսորու սրբագրից՝ Հ. Գոլովինանցան



Եթ Պէտք է հրատարակ իրավունք Ա 16, 2/VI 1954 թ.  
Վ. 13515: Պատվեր Ն 737: Խջեցված է արտադրություն 5/X 1954 թ.:  
Ստորագրված է տպա, 19 X 1954 թ.: Թղթի վորմանը  $60 \times 84^{1/16}$ :  
Տպա. Տարբերակը չեղած է մամուլ: Հաշվարքագրությունը գործություն է մամուլ: Տպա. Տարբերակը չեղած է մամուլ:

Գրնոր 2 ու. 30 կ.

Վ. Մոլոտովի անվան Երևանի պետական  
համալսարանի հրատարակչության տպարան,  
Երևան, Կիրովի փող. Ն 12

2 n. 30 b.

ԵՐԵՎԱՆԻ ՀՈՄՈԼՈՒՐԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ